338(47.925)
Г-85

13.06.2013

29564

Հ - 85

643
338(47.925)
Հ-85

17 FEB 2010

ՀԱՅՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1007
18374

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՄՊԱՐԱՇԱՀԱՅԻՆ
Ս. ՍԱՄՍՈՆՅԱՆԻ
ԱՆՎԱՆ
Публичная Библиотека

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1927

Գրառեպվար 426բ. Տ. 649 Տիրաժ 5000
Գետհրատի 2-դ տպարան Յերեվանում—1326

«Խորհրգային իշխանությունը + էլեկտրիֆիկացիան՝ այդ է սոցիալիզմը»:

ԼԵՆԻՆ

«Բոլոր այն ժողովուրդները, բոլոր այն պետությունները, վորոնք չկարողացան պահպանել այն բնական պայմանները, վորոնցից կախված եր իրենց գոյությունն ու բազմացումը, նրանք չմնացին աշխարհիս յերեսին:

Աշխարհի զանազան մասերում, բոլոր յերկիրներում, վորտեղ մարդու ձեռքը չեր վերազարձնում հողին բերի պահպանության համար անհրաժեշտ պայմանները, այնտեղ մենք ասիճանական աճումն յեվ ամենաբարձր, խիտ ազգաբնակության մակարդակից դեպի վոչնչացումը յեվ ամայությունը տանող անցումն ենք նկատում»:

ԼԻԲԻԽ

Հ. Ս. Խ. Հ.

Հայաստանը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն է հայտարարված 1920 թվի նոյեմբերի 29-ին։

Մեր Սահմանադրության առաջին կետն ասում է՝

«Հայաստանի ապստամբ բանվորների և աշխատավոր գյուղացիների կամքով Հայաստանը 1920 թ. նոյեմբերի 29-ին հայտարարված է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն։

Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում է բանվորներին, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական Խորհուրդներին»։

Հ. Խ. Ս. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Հայաստանի Խ. Ս. Հանրապետությունը հյուսիսում սահմանակից է Վրաստանի Ս. Խ. Հանրապետությանը, որի Բորչալվի գավառը կից է Հայաստանի Լոռու-Փամբակ գավառին։ Արևմուտքում Հայաստանին սահմանակից է Թուրքիան։ Այս երկու պետությունները բաժանող սահմանը սկսվում է Զլդր լճից արևելք և, ձգվելով

դեպի հարավ-արևելք, հասնում է Արևմտյան Արփաչայիին՝ Ախուրյանին, վորը սահման է դառնում մինչև Արաքս թափվելը։ Այնուհետև սահմանը գնում է Արաքսի վրայով մինչև Նախիջևանի Ինք նավար Հանրապետությունը։

Հայաստանը հարավում սահմանակից է Նախիջևանի Հանրապետության մինչև Որդուբաթ քաղաքը, վորը Նախիջևանի հանրապետության մեջ է։ Այս քաղաքից արևելք Հայաստանի սահմանը կըրկին հասնում է Արաքսին, վորը Հայաստանի Զանգեզուրի գավառը բաժանում է Պարսկաստանից։ Արևելքում Հայաստանը սահմանակից է Ադրբեջանի Խ. Ս. Հանրապետության։

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հայաստանը բաժանվում է 9 գավառի.

1.	Յերևանի	գավառ—	կենտրոնը Յերևան.
2.	Լենինականի	»	» Լենինական
3.	Եջմիածնի	»	» Վաղարշապատ
4.	Նոր-Բայազետի	»	» Նոր Բայազետ
5.	Դիլիջանի	»	» Դիլիջան
6.	Լոռու-Փամբակի	»	» Ղարաքիլիսա
7.	Զանգեզուրի	»	» Գորիս
8.	Դարալագյազի	»	» Քեշիշքենդ
9.	Մեղրու	»	» Մեղրի

Հայաստանի Ս. Խ. Հանրապետությունը Ա. Ս. Խ. Հանրապետության անդամ է և այս վերջինի միջոցով մանում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ։ Մեր Սահմանադրության 14 րդ կետը (հատված II, գլուխ 2) ասում է.

— «Կապիտալիստական ոդակի հանդեպ մի խորհրդային ճակատ ստեղծելու և բոլոր խորհրդային հանրապետությունների հետ սերտ յեղբայրական աշխատակցության հիման վրա սոցիալիստական շինարարությունը և ազգային զարգացման ազատությունն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը՝ վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հետ կազմում են Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետություն, իսկ վերջինս միջոցով, վորպես նրա իրավահավասար մասը՝ միանում է Ռուսաստանի Խ. Ս. Ֆ. Հանրապետության, Բելոռուսիայի Խ. Ս. Հանրապետության, Ուկրաինայի Խ. Ս. Հանրապետության, Թուրքեստանի Խ. Ս. Հանրապետության և Ուզբեկստանի Խ. Ս. Հանրապետության հետ և կազմում են մի միացյալ պետություն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆԻՇԸ, ԴՐՈՇԱԿԸ ՅԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

103. Մեր Սահմանադրության (հատված VII) գլուխ 13-ում ասված է. Հայաստանի Ս. Խ. Հանրապետության պետական զինանիշն է՝ Մեծ և Փոքր Մասիսներից վեր, ծագող արեգակի ճառագայթների մեջ, ժուռք և մանգաղ միմյանց վրա խաչաձև, կոթերը դեպի վայր, ստորոտում խաղողի վորթ վողկույզով ու տերևներով, աջ ու ձախ կողմերից ցորենի հասկեր և ավելի բարձր ձիթենու ճյուղեր։ Զինանշի կրկնակի շրջագծի արանքում մակագրված է՝ «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն» և «Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացեք»։

104. Հայաստանի Ս. Խ. Հանրապետության պետական դրոշակն է՝ կարմիր (ալ) գույնի կտոր, վորի ձախակողմյան վերին անկյունում, կոթի մոտ, գետեղված են վոսկեգույն տառեր «Հ. Ս. Խ. Հ.»։

105. Հայաստանի Ս. Խ. Հանրապետության մայրաքաղաքն է Յերևան քաղաքը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍ. ՍՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Հայաստանի հանրապետությունը բռնում է մոտ 30,000 քառ. կիլոմետր տարածություն։ Հանրապետության բոլոր հողերը կազմում են 2,898,225 հեկտար։ Հայաստանի հողերը բաշխվում են հետևյալ հողատեսքերի հեկտարներով. (տես աղյուսակ)։

Աղյուսակի տվյալներից տեսնում ենք, վոր ջրարբի հողերը կազմում են 96,388 հեկտ. իսկ անջրդի հողերը՝ 604,505 հեկտար։ Առհասարակ, Հայաստանի կլիմայական պայմաններում անջրդի հողերը նամանավանդ դաշտային մասերում, սակավարժեք են, այդպիսով, վարելահողերից գրալի մասը պիտի դասել անպետք հողերի շարքում։ Անպետք հողերին պիտի ավելացնել նաև գյուղական արոտների խոշոր մասը, վորովհետև արանք վարելահողերի մեջ ընկած

Գավառներ	Տնտեսք	Այգիներ	Վարելահողեր		Խոտհարք	Արոտավայրեր			Անտառներ	Անպետք հողեր	Ընդամենը
			Ջրարբի	Անջրդի		Գյուղական արոտներ	Ամառային	Ձմեռային			
1. Նոր-Բայազետի	1,401	—	19,691	82,732	7,424	68,410	112,696	—	—	148,260	440,614
2. Թաթուլագյազի	551	397	3,521	21,518	26	115,550	73.200		10,157	16.856	241,776
3. Եղմիածնի	1,196	4,361	32,074	56,396	3,579	94,293	26,876	62,275	5,172	14,604	300,826
4. Ցեբլաձնի	3,062	5,604	30,836	77,448	2,856	146,400	51,349	27,761	14,886	36,631	396,833
5. Լոռի-Փամբակի	3,025	370	2,447	107,917	29,499	65,552	67,991	—	103,791	8,303	392,225
6. Լինչինաձորի	2,754	258	4,794	144,880	17,481	120,225	70,756	50,257	—	9,197	420,602
7. Թիլիջանի	2,163	570	1,077	49,154	11,188	44,206	69,823	6,555	154,633	22,152	361,521
8. Ջանգեզուրի	807	1,010	1,243	60,090	2,266	73,500	163,469	—	45,887	16,934	365,166
9. Մեղրու	48	236	705	4,370	297	17,480	5,463	21,850	19,666	8,547	78,662
Ընդամենը	15,007	12,806	96,388	604,505	74,616	745,622	641,623	168,698	354,192	281,484	2,998,225

կամ ութերորդ մասը։ Ամենից շատ հողատարածություն ունի Նոր-Բայազետի գավառը, ապա Ջանգեզուրի գավառը։

Ընդհանրապես, Հայաստանի գյուղատնտեսական կուլտուրաները ուշացող հողերի թվում մեծ տեղ են գրավում խոտհարքները։

Պահվում հողերը, սովորաբար, հետևյալ կերպ է լինում.

Ամառային արոտատեղիները (ամառանոցները)	. .	*465,0 հազար հեկտ.*
Ձմեռային և կամադրք (ձմռանոցներ)	. .	*973,6 » »*
Անտառ	. .	*353,3 » »*
		» »
Ընդամենը	*1791,9*	*» »*

Ցեղերի տոկոսական հարաբերությունը հետևյալն է.

Հայկական ցեղ	*74,7%*
Թաթարական ցեղ	*46,5%*
Քրդական ցեղ	*40,0%*
Ռուսական ցեղ	*27,1%*
Հույն	*26,9%*
Ասորեստանցի	*25,2%*
Ֆրանսիացի	*17,6%*
Ք. Ս. Հ. Մ-ի ցեղ.	*14,3%*

Հայաստանի անցկաւոր հողերի մեծ մասը կենտրոնացած է Արաքսի ձախ ափին։ Ամենից պակաս հողեր ունի Ջանգեզուրի գավառը։ Ամենից շատ հողեր ունի Նոր-Բայազետի գավառը։ Ամենից քիչ հողեր ունի Ղարաբաղի գավառը։ Ամենից շատ անտառներ ունի Լոռի-Փամբակի գավառը։ Ամենից քիչ անտառներ ունի Ղարաբաղի գավառը։ Ամենից շատ անպետք հողեր ունի Ղարաբաղի գավառը։ Ամենից քիչ անպետք հողեր ունի Նոր-Բայազետի գավառը։

Կազմեցեք դիագրամներ. 1) Ձեր գավառի հողերի բաշխումն ըստ բնական տեսքերի։

2) Հայաստանի հողերի բաշխումն ըստ բնական տեսքերի։

3) Հայաստանի և այլ լերկիրների պիտանի և անպետք հողերը։

4) Մշակովի հողերը, արոտավայրերը և անտառները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՔՍԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ցանքսերի տարածության բաշխումը տրվում է հետևյալ աղյուսակի մեջ.

Մշակույթները հազար հեկտարներով	1909—1913	1917—1922	1923	1924	1925	1926
Հացաբույսեր (աշնան ցորեն, գարնան ցորեն, տարեկան, հաճար, վարսակ, յեգիպտացորեն, կորեկ, չալթուկ)	306,6	140 6	227,2	245,2	259,0	276,4
Տեխնիկական բույսեր (բամբակ, ծխախոտ, յուղաբեր բույսեր)	20,4	8 ,9	10,5	23,0	22,1	19,5
Վրից՝ բամբակ *)	15,3	4,3	4,3	16,3	15,3	15,0
Այլ դաշտային մշակույթներ (կարտոֆիլ, բանջարաբոց, բոստ·ն և ցանովի խոտ).	16,4	10,4	10,9	12,2	14,4	14,3
Այգիներ,	13,1	9,6	9,6	10,3	11,1	11,5
Վրից՝ խաղողի այգիներ	9 8	7,6	7,6	8,1	8,7	8,9
Ընդամենը	356,8	169,7	259,0	275,2	307,3	3233
% %	100 %	49,0%	74,1%	80,0%	86,3%	90,7%

**) 1919, 1920 և 1921 թ. թ. բամբակ համարյա չեր մշակվում։*

Աղյուսակի մեջ բերված թվական տվյալները ցույց են տալիս Հայաստանի ցանքսերի շարժումը՝ սկսած 1909 թ. մինչև 1926 թիվը, այսինքն՝ այն փոփոխությունները, որ կրել են ցանքսերը մատնանշած ժամանակամիջոցում։ Մենք տեսնում ենք, որ 1909—

13 թ. թ. ցանքսերի տարածությունն աննշան է յեղել, որը և 100% է ընդունվում մեր աղյուսակի մեջ։ Այս ժամանակամիջոցը նախապատերազմյան տարիներն են, յերբ յերկիրը խաղաղ շրջան եր ապրում։ Պատերազմի ընթացքում 1914 1918 թ. թ. շնորհիվ այն հանգամանքի, որ աշխատավոր յերիտասարդությունը պատերազմի դաշտն է մեկնում և ձիերը ու այլ տեսակի անասունները պատերազմի կարիքների համար են ոգտագործվում, հողը վրա աշխատող ձեռքերը և անասունների քանակը պակասում են, և, հետևապես կրճատվում է ցանքսերի տարածությունը։

Ցանքսերի կրճատումը ծայր ստանձնի յե հանում Փետրվարյան հեղափոխությունից հետո, յերբ իշխանության գլուխն է անցնում դաշնակցական կուսակցությունը և իր ձեռքն է վերցնում հայ ժողովրդի բախտը։ Շնորհիվ այդ կուսակցության և հարևան յերկիրների՝ Վրաստանի ու Ադրբեջանի ժողովուրդների իշխանության գլուխ կանգնած մենշևիկ և մուսավաթ կուսակցությունների ապիկար քաղաքականության, Անդրկովկասում սկսվում են ազգամիջյան խռովություններ և կոտորածներ։

Այդ քաղաքականությունը յերկրի անտեսությունը հիմնովին խորտակում և քայքայում է։

Այդ ժամանակամիջոցում տեխնիկական բույսերի մշակությը Հայաստանում իսպառ վոչնչացավ, անասունների թիվը ավելի քան կիսով չափ կրճատվեց, ցանքսերի տարածությունը հասավ 49%-ի, և ազգաբնակչությունը սովի մատնվեց։

1920 թ. նոյեմբերի 20-ին Հայաստանում հաստատվում է Խորհրդային իշխանություն։ Խորհրդայնացումից հետո, յերբ ստեղծվեցին աշխատանքի խաղաղ պայմաններ, յերկիրն սկսեց հետզհետե բուժել իր վերքերը և վերականգնել իր անտեսությունը, և 1923 թվին իր վերելքի առաջին աստիճանն է թևակոխում, յերբ ցանքսերի տարածությունը հասնում է 74,1%։ Հետագա տարիներում ցանքսերի տոկոսները բարձրանում են՝

1924 թվին ցանսերի տարածությունը հասնում է 80,0%
1925 » » » » 86,3%
1926 » » » » 90,7%

Պատերազմի և, նամանավանդ, հետպատերազմյան տարիների ընթացքում վոչ միայն Խորհրդային յերկիրների, այլ և համայն աշխարհի այն յերկրների մեջ, վորոնք մասնակցեցին համաշխարհային իմպերիալիստական պատերազմին, վոչ մի յերկիր այնքան չտուժեց, վորքան Հայաստանը։

Ահա թե ինչու 1926 թվին, յերբ Խորհրդային Միության ցանքսերի տարածությունն արդեն հասել է նախապատերազմյան ծավալներին, Հայաստանը դեռ ևս չեռ է մնացել և, չնայելով, վոր նրա նվաճումները ակնբախ են, այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք, ցանքսերի տարածությունը 1926 թ. վերականգնված է միայն 90 տոկոսով։

ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի խորհրդայնացման հենց սկզբից, 1920 թ. դեկտեմբերի 28-ին Հեղկոմի հատուկ դեկրետով, հողազուրկ և սակավահող գյուղացիներին հողով ապահովելու նպատակով, ազգայնացվում են բոլոր պետական, կալվածատիրական, յեկեղեցապատկան, մզկիթապատկան և մասնատիրական հողերը։

Վոչ-աշխատավորական տարրերին, նույնպես և վանքերի հողերը Հայաստանում մեծ տարածություն չեյին բռնում, և ազգամիջյան կռիվների ընթացքում մասնատիրական անտեսությունները սաստիկ տուժել եյին։ Այդպիսով, ազգայնացումը չքավոր գյուղացիության հողերը զգալի չափով չավելացրեց։ Սակայն հեղափոխության դերը հողային հարցում հողաշինարարության մեջ է։ Խորհրդային հողաշինարարությունը վոչնչացրեց հողային այն մեծ անհավասարությունը, վոր գոյություն ուներ հին ռեժիմի ժամանակ։ Գյուղերի ներսում գյուղի ուժեղ տարրը (կուլակները, հոգևորականները, ազնվականները) զավթել եր հողերի լավագույն և մեծագույն մասը։ Գյուղացիների միջև, կամ գյուղացիների ու կալվածատերերի միջև հողային վեճերը ծագելու դեպքում, ցարական իշխանությունը հարցերը լուծում եր ի վնաս իրավազուրկ չքավոր գյուղացիության։ Բացի դրանից տարբեր գյուղերի հողերը ևս անհավասար եյին բաշխված։

Խորհրդային հողաշինարարությունն ընթացավ յերկու ուղղությամբ, այն է ձևավորվեցին միջգյուղյա հողաշինարարական աշխատանքները և ներքին հողաշինարարությունն այսինքն, հողերի բաշխում գյուղերի ներսում։

Միջգյուղյա հողաշինարարության նպատակն եր՝ ապահովել ավյալ գյուղի հատկացրած բավարար չափով հողային տարածությամբ, բարելավել ջրոգտագործման և հաղորդակցության պայմանները, վոչնչացնել հողհեռավորությունը և հողացրվածությունը, ավելացնել սակավահող գյուղերի հողերը՝ ի հաշիվ հողառատ գյուղերի։

Միջգյուղյա հողաշինարարությունն սկսվել է 1922 թվից և ավարտվել է 1925 թ.։ Այդ աշխատանքները տարվել են հողաչափերի միջոցով, վորոնց քանակը սկզբում աննշան եր—3 հողաչափ, և հետագայում հասավ մինչև 35 հողաչափի։

Ազգայնացրած կալվածատիրական, վանքապատկան, հանգած ծխերի հողերի 95% անցել է սակավահող աշխատավորական հատկացումների օգտագործման։

Այդ հողերից դուրս մոտ 10000 հեկտար բաշխված է խորհրդային և այլ հասարակական անտեսությունների միջև։

Ներքին հողաշինարարությունն իրեն նպատակ եր դնում ազատազրել գյուղը վոչ-աշխատավորական տարրերից, հողերի հավասար և արդար բաշխումը գյուղացիների միջև, գաղթականներին հողեր մատակարարել ընդհանուր հիմունքներով, վերացնել այն հողացրվածությունը, վոր հանդիսանում է մեր գյուղերի ամենամեծ չարիքներից մեկը։ Անցյալում հողակտորների թիվը հասնում եր 25—45 ի։ Այժմ այդ կտորների քանակը վեցից չի անցնում։ Ներքին հողաշինարարությունը հնարավոր չեր կատարել հողաչափների միջոցով,—վերջիններս սահմանափակ քանակով աշխատում եյին միջգյուղյա շինարարական տպագրության։ Ներքին հողաշինարարությունը գյուղական չափարարների միջոցով է արված։

Ամբողջ Հայաստանում ներքին հողաբաժանություն կատարված և դեռ ևս չավարտված աշխատանքները հետևյալ պատկերն ունեն։

	Գ. Ա. Վ. Ա. Ր.	Ավարտված առ 1927 թ.		Մնում է կատարելու		
		գյուղ	բնակիչ	գյուղ	բնակիչ	տարածություն հեկտարներով
1.	Յերևանի . . .	213	105 000	8	4.000	4370
2.	Եջմիածնի . . .	155	110.000	5	1.186	1092,5
3.	Լենինականի . .	145	115 000	13	6 000	6746
4.	Լոռի-Փամբակի .	131	114 000	5	11 795	9667.5
5.	Դիլիջանի . . .	53	56.000	31	26.959	19769.4
6.	Ն. Բայազիդի . .	76	94.000	8	4 522	6206.0
7.	Դարալագյազի . .	55	23 000	17	5.325	7069.7
8.	Զանգեզուրի . .	106	52.000	44	13.802	15.331
9.	Մեղրու	23	8.000	—	—	—
	Ընդամենը	957	675.000	141	73.589	70252.1

Հողաբաժինների նորմաները վորոշելու համար նկատի չեն առնված Հայաստանի տարբեր շրջանների բնական և տնտեսական պայմանները։

Այսպես՝ դաշտային գոտում (ծովի մակ. 914 մետր բարձ. վրա), վորտեղ թանգարժեք մշակույթների տնտեսություններն են (բամբակ, ծխախոտ, խաղող և այլն), մի շնչին նորմա չի ընդունված $^1/_3$—1 դեսյատին։

Նախալեռնային դաշտում (ծովի մակ. 914—1219 մետր բարձ. վորտեղ պաղարեւծությունն և բնորոշ տնտեսությունը (այգիներ, կորիզավոր ծառեր), նորման $^1/_2$—$^3/_4$ դես.։

Լեռնային գոտի (ծովի մակ. 1219—1828 մետր բարձ. վրա), վորտեղ հացահատիկների մշակույթներն են, նորմա չի ընդունված $^3/_4$—$1^1/_3$ դես.։

Մերձալպիական շրջան (ծովի մակ. 1828—2133 մետր բարձրութ.

վրա), որտեղ թե հացահատիկների մշակույթներ են և թե անասնապահություն, նորման $1-2^1/_2$ դես. ե։

Ալպյան շրջան, որտեղ անտեսությունը զուտ անասնապահություն է, նորման $1^1/_2-3$ դես. ե։

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ ՀՈՂՈՎ

Խորհրդային իշխանություն Հայաստանում հաստատվելուհենց սկզբում սկսվում է դարձը դեպի Հայաստանի սահմանները ազգային փոքրամասն. լթյուններին, որոնք դաշնակցության կառավարության որով ստիպված ելին իրենց հայրենիքից հեռանալ։ Այդ տարրերն ընդունելու և նրանց հողով ապահովելու նպատակով կառավարությունը տրամադրում է մոտ շրջաններ, կամ առանձին գյուղեր։

1923 թվի վերջերում այդ աշխատանքներն ավարտվել և հետևյալ պատկերն ելին տվել։

	ԳԱՎԱՌ	քանի գյուղում	վորքան բնակիչ է տեղավորված
1.	Յերևանի գավառ	108	21.778
2.	Եջմիածնի »	41	9.787
3.	Ն. Բայազետի»	25	10.700
4.	Լոռի-Փամբ. »	36	22.510
5.	Դիլիջանի »	23	21 700
6.	Դարալագյազի»	11	4 775
7.	Մեղրու »	7	983
8.	Լենինականի »	14	6.010

Այսպիսով Հայաստանի ազգային փոքրամասնությունները կազմող թուրք, ռուս, քուրդ, յեզդի, հույն բնակիչները, վերադառնալով հայրենիք, Խորհրդային իշխանության և ազգային մեծամասնության կողմից ամենաջերմ հյուրընկալությունը և ընդունելություն են վայելում։

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՈՂՈՎ

Այն վերաբերմունքը, որ հայ աշխատավոր ժողովուրդը ցույց տվեց ազգային փոքրամասնություններին, նույնը ցույց տվեց և իր այն հայ յեղբայրներին, որոնք իմպերիալիստական պատերազմի

ընթացքում, իրենց հայրենիքից տեղահան լինելով, յեկան ապաստան գտնելու Խորհրդային Հայաստանում։ Բնիկ գյուղացիները, չը նայելով Հայաստանում իշխող սակավահողության, ընդհարաբար իրենց հողերից անտրտունջ բաժին ելին հանում տարագիր յեղբայրներին։

Գաղթականների տեղավորման պատկերը Հայաստանի զանազան գավառներում հետևյալ աղյուսակն է ցույց տալիս.

	ԳԱՎԱՌՆԵՐԸ, ՈՒՐ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԵՆ ՏԵՂԱՎՈՐՎԱԾ	Հողագործ գաղթական. թիվը	
		հողով բավարարված	հողով դեռ չը բավարարված
1	Յերևանի	13.000	12 000
2	Եջմիածնի	18.000	9.000
3	Լենինականի	22.000	6.000
4	Լոռի-Փամբակի	4.500	5.000
5	Ն. Բայազետի	4.000	500
6	Դիլիջանի	2.500	4.000
7	Դարալագյազի	—	—
8	Զանգեզուր-Մեղրու	—	2.000
	Ընդամենը	64.000	38.000

Հողով չբավարարված գաղթականների խնդիրը մեր իշխանության ժամանակավորության առարկան է և մոտիկ ժամանակների անելիքը։ Հայաստանի անհարմար հողերը լավացման (մելիորացիայի) յենթարկելով պետությունը հետզհետե տեղավորում է և հողով չբավարարված գաղթականությունը։

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հանրապետության բոլոր գյուղերում հողի օգտագործման ձևը համայնական է։ Հողը բնակչության բոլոր անդամների միջև պարտադիր և պարբերաբար, հավասարապես բաժանվում է։ Հողերի վերաբաժանում թույլատրվում է 9 տարուց վոչ-շուտ։ Վերաբաժանումից ազատված են հատուկ, թանկարժեք կուլտուրաների տակ գտնվող հողամասերը (ազարակները, խաղողի, պտղատու այգիները, թթենու տնկարանները և այլն։)

Գյուղատնտեսական կոլեկտիվները Հայաստանում տակավին չեն կազմակերպված։ 1923 թվի վերջերից Հողժողկոմատի նախաձեռնությամբ սկսեցին կազմակերպվել կոլեկտիվ անտեսություններ՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակության համար (շրվեյցարական և տեղական պանրագործություն, յուղագործություն)։ Հավանորեն, այդ կոլեկտիվ անտեսություններն են, որ անցնելու չեն և հողի կոլեկտիվ մշակության։

Հողի համայնական հողօգտագործումը հնի մնացորդն է, որը մեր իրականության մեջ հետզհետե անիմաստ է դառնում։

Հայաստանի հողաստակավության պայմաններում անհատ անզոր անտեսություններն իրենց պրիմիտիվ գործիքներով և անբավարար անասուններով հողը խորը չեն հերկում, չեն փափկացնում։ Այդ պատճառով բանքսերը բարձր գոտիներում չրատահարվում, իսկ դաշտային գոտում, չերաշից չորանում են

Աշխատանքի կոլեկտիվիզացիան և մեքենայնացումն ու արտադրական ուժերի ընդհանրացումն է միայն, որ կարող կլինեն գյուղատնտեսությունն ամուր և առողջ հիմքերի վրա դնել։

ԿԵՆԴԱՆԻ ՅԵՎ ՄԵՌՅԱԼ ԻՆՎԵՆՏԱՐԸ

Դաշտավարության համար խոշոր նշանակություն ունի գյուղացու անտեսության ապահովումը կենդանի և մեռյալ ինվենտարով, այսինքն՝ արտադրական միջոցներով։ Մեր գյուղացին այդ միջոցներով հարուստ չէ։

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ հայ գյուղացու ինվենտարը շատ աղքատիկ է։ Դաշտային աշխատանքների իբրև գլխավոր գործիք շարունակում են ճնալ արորը, փայտե փոցխը, որ առաջադեմ չերկիրներում վաղուց վաստրվել են և թանգարանում են տեղ գտել, իբրև հին անցյալի վկաներ։

Հայաստանն ունի ատ 1 հունվարի 1927 թ.

	Ինվենտարի անունը	Քանակը	Քանի անտեսության է հասնում մեկը
1	Գութան	13.000	12,1
2	Փոցխ	6.540	24,4
3	» փայտե	12.720	12,6
4	Արոր	50.335	3 0

Այժմս Հայաստանն ունի 97 տրակտոր։ Գյուղբանկի միջոցով ձիավարներմուծված են՝ գութաններ – 850 հատ, քամար մեքենաներ — 100 հատ, տրիյերներ-սերմնացան — 70 հատ, փոցխ «Յահակի» — 140 հատ, կուլտիվատոր ձեռքի — 150 հատ և այլն։

Կենդանի ինվենտարով նույնպես հարուստ չէ Հայաստանը։ Լծկանները (161.401 գլուխ) անհամաչափ են բաշխված։ Լծակիններով առանձնապես աղքատ է Արարատյան դաշտը։

Ամբողջ Հայաստանում, առանց Արարատյան դաշտի, մեկ հեկտարին ընկնում է 0,40 գլուխ, իսկ Արարատյան դաշտում՝ 0,28 գլուխ, մեկ անտեսությանն ընկնում է համապատասխան ձևով՝ 1,02 և 0,38 գլուխ։

Հայաստանի լծկանազուրկ անտեսությունները միջին թվով կազմում են 45,4%, իսկ Արարատյան դաշտում՝ 67,8%։ Գյուղացիության գործիքները և այլ գյուղատնտեսական պարագաներ, ինչպես և լծկան անասուններ մատակարարելու գործում մեծ դեր է խաղում կոոպերացիան, այն է գյուղվարկային ընկերությունները։

Այս ընկերությունները մի կողմից անդամներին անհրաժեշտ գյուղգործիքներ, մեքենաներ, սերմնարոք և անասուն են մատակարարում, իսկ մյուս կողմից՝ նրանց արտադրանքը վերամշակում և կոոպերացիայի միջոցով կազմակերպում են արտադրանքի վաճառքը։

Թվերը ցույց են տալիս, որ գյուղվարկային կոոպերացիան 1924/25 թվի հետ համեմատած 1925/26 թ. ապրանքաշրջանառության վաճառքի մեջ 211%, իսկ դնումների մեջ 70,9% աճում է ունեցել (աես տախտակը)։

Անկախ վարկային ընկերություններից կան մեքենագործական ընկերություններ, որոնք վարկային ընկերություններից ստացած

183374

Գյուղվարկային ընկերությունների գնումները յեվ վաճառքը 1924/25 յեվ 1925/26 թ. թ.

	Գնված ե հազարներով			Վաճառված ե հազարներով		
	Մատակար. ապրանք.	Վաճառք. ապրանք.	Ընդամեն.	Մատակար. ապրանք.	Վաճառք. ապրանք.	Ընդամենը
1924/25	545,9	529,9	1085,8	486,1	456,8	882,9
1925/26	740,3	1115,5	1855 8	707,9	1158,7	1866,6
% %	135,4	210,9	170,9	145,6	253 6	211,4

գործիքները գործադրում են գյուղատնտեսության մեջ։ Մեքենագործական ընկերությունները ունեն 19 տրակտոր։ Տրակտորի վարը նստում է՝ հեկտարը 13-19 ռուբլի. այն ինչ ձիականներով՝ 25 — 40 ռուբլի, նայած շրջանին։



Նկ. 1 Տրակտոր

Չնայած մեր գյուղացիության հետամնացությանը, տրակտորը հեզնեան գրավում է իր արժանավոր տեղը գյուղացիության մեջ նկատվում է ուժեղ ձգտում տրակտորով հողը վարելու ձևին։

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ՁԵՎԵՐԸ

Այն աշխատանքը, որը մարդս դնում է հողի վրա՝ բուսական պետական մթերքներ արտադրելու համար, հողագործություն է կոչվում։ Նայած թե ինչ նպատակ է դնում իրեն հողագործությունը, այսինքն՝ ինչ մթերքներն են կազմում հողագործական տնտեսության վերջնական գլխավոր արդյունքը, տարբերում են հողագործական արտադրության հետևյալ չորս յեղանակները.

1. Հ ա յ ա հ ա տ ի կ ա յ ին տնտեսությունն, որի գլխավոր արտադրանքը հայահատիկներն են։

2. Կ ե ն դ ա ն ա բ ո ւ ծ ա կ ան (անասնապահական) տնտեսությունն, որի գլխավոր նպատակն է անասնապահական մթերքների (միս, բուրդ, ձու, կաթնամթերքներ) արտադրությունը։ Այս հողագործության գլխավոր մշակույթները կենդանու կեր են ծառայում՝ վարսակ, գարի, յեգիպտացորեն, խոտեր և արմատապտուղներ։

3. Տ ե խ ն ի կ ա կ ան մշակույթների տնտեսությունն, որի գլխավոր նպատակն է արտադրել այնպիսի մթերքներ, որոնք իբրև հում նյութ վերամշակվում են արդյունագործության մեջ, որինակ՝ կարտոֆիլ՝ սպիրտ քաշելու համար, շաքարի ճակնդեղ՝ շաքարի համար, յուղարեր բույսեր՝ ձեթ պատրաստելու և այլն։

4. Ա յ գ ե գ ո ր ծ ա կ ան (բանջարաբուծական) տնտեսությունն, որի մթերքներն են պտուղներ, բանջարեղեն և այլն։

Հողագործության վերը նշած տնտեսությունները գոյություն ունեն բոլոր յերկիրներում բայց վոչ ամենուրեք միևնույն ձևերով են տարվում։ Յուրաքանչյուր տնտեսությունն կարող է տարվել հասարակ՝ ե քս տ ե ն ս ի վ, կամ բարդ՝ ի ն տ ե ն ս ի վ ձևերով։

Տնտեսության այն ձևերը, որոնցով մարդու հողի վրա դրած աշխատանքն ու ծախսերը շատ քիչ են, և տնտեսության հաջողությունը գլխավորապես կախված է բնության բարեհաջող պայմաններից, ե քս տ ե ն ս իվ (վոչ-լարված) է կոչվում։ Տնտեսության ե քս տ ե ն ս իվ ձևերում գյուղատնտեսական գործիքները չափազանց հասարակ են՝ արոր, վայտե փոցխ, հասարակ գութան (լավագույն դեպքում), հետևապես հողի հերկը մակերեսային, անբավարար է, ցանքը մտանված է բնության քմահաճույքներին, ծախսեր չեն արվում թե հողի պարարտացման և թե հողերի լավացման համար։ Ե քս տ ե ն ս իվ ձևերում տնտեսը ցածր վորակի չե, կերով չի ապահովված, տնտեսի թե բանվորական ուժը թույլ են և թե նրա ունած մթերքները (միսը, կաթը, բուրդը) քանակապես և վորակապես անբավարար։

Լարված կամ ինտենսիվ են կոչվում անասնության այն ձևերը, որոնց կիրարկման ընթացքում բնությունը յերկրորդական տեղ է բռնում, իսկ անասնության հաջողությունը մարդուց իրենից է կախված. այսինքն՝ մարդս հողի վրա մեծ ծախսեր է անում, առաջին լարված աշխատանք և գիտություն գործ դնում, անասնության մեջ կատարելագործված տեխնիկա յե մացնում, այսինքն մեքենաներ, պարարտացնում է հողը և լավացնում է այն (վոռոգում, ճահիճների չորացում, խորը հերկ, և այլն)։

Ցարական ռեժիմից մենք ժառանգել ենք թե ընդհանրապես Սորհրդային Միության մեջ, և թե մասնավորապես և նամանավանդ Սորհրդային Հայաստանում անասնության եքստենսիվ ձևեր։ Ցարական կառավարության համար այդ եքստենսիվ ձևերը շահավետ էին, վորովհետև այդ ձևի անասնության հետ սերտորեն կապված եր ժողովրդի լայն խավերի ոգիտությունը և խավար ժողովրդի կողմից ցարական ռեժիմի լուծն անարատունչ տանելը։

Սորհրդային իշխանության համար, ընդհակառակն, այդ եքստենսիվ ձևերը վոչ միայն շահավետ չեն, այլ կործանարար են։ Այդ պատճառով թե Միության և թե մեր հանրապետության կառավարություններն իրենց բովանդակ ջանքերը լարում են՝ յերկրի եքստենսիվ ձևերը ինտենսիվ ձևերով փոխարինելու և վերջինիս հետ լուսավորելու ժողովուրդը, պայքարելու նրա ոգիտության և խավարի դեմ, անգրագիտությունը վերացնելու և ինտենսիվ ձևեր մրցացնելով, յերկրում սոցիալիստական անասնության հիմքը դնելու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԶԵՎԵՐԸ

Հայաստանում մենք ունենք անասնության բոլոր յեղանակները։ Դաշտային գոտու մեր անասնությունը տեխնիկական է (բամբակ, ծխախոտ), նախալեռնային գոտում մենք ունենք այգեգործական և հացահատիկային անասնություններ։ Լեռնային գոտում մեր անասնությունները թե հացահատիկային են և թե անասնապահական, և Ալպիան շրջանում՝ անասնապահական։

Սակայն այդ յեղանակների ձևերը վերին աստիճանի եքստենսիվ են։ Մեր հողագործական ձևը խոպանային կամ յերկդաշտային է։

Խոպանային է կոչվում անասնությունը, յերբ գյուղացին մի դաշտի վրա մի քանի տարի շարունակ միևնույն մշակությունն է անում. որինակ՝ մի քանի տարի թրթր յեռևից ցորեն կամ գարի յե ցանում։ Յեթե նկատի ունենանք, վոր հացահատիկները իրենց անհրաժեշտ սնունդը հողի մակերեսային շերտերից են վերցնում, իսկ խոտերը և արմատապտուղները՝ ավելի խորը շերտերից, հասկանալի կլինի, վոր, շարունակ հացահատիկ ցանելով, հողը, տարեցտարի սպառելով իր սննդանյութերը, անբերրի կդառնա։ Յեվ իսկապես, այդպես էլ լինում է։ Մի քանի տարի նույն հացահատիկները ցանելով՝ գյուղացին հողն ուժասպառ է անում և հողը մի քանի տարով հանգստի, ինչպես ասում են՝ խոպան (խամ) է թողնում։ Ահա, այդպիսի ձևը խոպան է կոչվում։ Խոպան թողնված հողի վրա սկսում են աճել նախ կոպիտ խոտեր, ապա հատկեղեն, յերբ հողի մեջ նորից հումուս է կուտակվում, սկսում են կանաչել և նուրբ խոտեր։ Խոպան հողի վրա անասունն արածում է և իր արտաթորություններով հողը պարարտացնում։ Վերջապես, հողի բերրիությունը մի քանի տարուց հետո վերականգնում է, գյուղացին նորից մի քանի տարի շարունակ նույն մշակությունն է անում։

Յերկդաշտյան ձևը խոպանայինից առավել չե։ Այստեղ վարելահողը յերկու մասի չե բաժանվում և տարեմեջ մեկի վրա ցանքս է արվում, մյուսը հերկվում է, հանգստանում։ Յերկրորդ տարին առաջին տարվա ցանածը հանգստանում է, իսկ նախկին հերկը ցանվում։

Այսպիսով, վարելահողի միայն կեսը, 50% ցանվում է, մյուս կեսը մնում է հերկ՝ անցան։ Այս խղճուկ ձևերով հողերը ժամանակի ընթացքում աղքատանում են, և նրանց բերրիությունը տարեցտարի ընկնում է։

Ս. Միության Յեվրոպական մասում ռուս գյուղացիների տնտեսության ձևը յեռադաշտյան է։ Վարելահողը յերեք մասի չեն բաժանում. առաջին դաշտի վրա ցանում են աշնանացան հացահատիկ (տարեկան), յերկրորդի վրա ցանում են գարնանացան (տարեկան), յերրորդ դաշտը թողնում են հանգստանալու, այդպես հերթով տարեցտարի փոխում են։

Այս ձևը մեր յերկդաշտայինի ձևից բարձր է. այստեղ հողի մի յերրորդ մասն է միայն անցան մնում (33%). բայց և այնպես յեռադաշտյան ձևը նույնպես եքստենսիվ ձև է։

Ավելի բարձր ձևերը քառադաշտյան, հինգ, վեց, յոթ, ութ և այլն բազմադաշտյան ձևերն են, վորոնք ինտենսիվ են համարվում։

Պրպեն մոտ հարյուր տարի յե, վոր բազմադաշտյան ձևերը մըտել են արևմտյան Յեվրոպայում (Անգլիա, Գերմանիա, Բելգիա, Հոլյանդիա, Ֆրանսիա, Իտալիա և այլն) և իշխում են հողագործության մեջ։

Մեզ մոտ բազմադաշտյան ձևը նոր են մտցնում, այն էլ հորդրջային անտեսություններում։ Բազմադաշտյան ձևը վատում է ամբողջը գյուղատնտեսական գործիքների շարքից և գութանով կամ արակատորով է ոգտվում։ Հողը պարարտացվում, խոզն է հերկվում ու փափկանում է։ Այդպիսի խոզը հերկված հողի մեջ միշտ ոդ է լինում, և խոնավությունը յերկար պահպանվում է։ Վարելահողը մի քանի դաշտերի չէ բաժանվում, և դաշտերը ցանվում են վոչ միևնույն, այլ տարբեր մշակություններով։ Տարին անցնելուց հետո մշակություններն իրենց տեղերը փոխում են։ Այնտեղ, վորտեղ ցորեն եր ցանված, ցանվում է բազուկ, կամ այլ արմատապտուղ, և թե ցորեն ու թե բազուկը լավ բերք են տալիս, վորովհետև ցորենն իր անունդը վերին շերտից է վերցնում, իսկ բազուկը՝ խորը, ներքին շերտից, և այդպիսով հողը բազմակողմանի չէ ոգտագործվում։

Բազմադաշտյան ձևը լավ է վոչ միայն այն պատճառով, վոր տարբեր բույսեր հողի տարբեր խորություններից են անունդ վերցնում, այլ և այն պատճառով, վոր մի շարք բույսեր հողի նույն շերտից մի տեսակ նյութերի, այլ բույսեր՝ ուրիշ աննդարար նյութերի յեն առավելություն տալիս։ Հացաբույսերը հողից ավելի մեծ չափով ֆոսֆոր են պահանջում. բազուկը, կարտոֆիլը, կտավհատը, տավուտը՝ ավելի շատ կալիում։ Ինչ վերաբերում է տավուտին, յերբեքնուկին կամ կորնգանին, սրանք վոչ միայն հողից բորակածին չեն վերցնում, այլ ընդհակառակը, իրենք են հարստացնում հողը բորակածնով, ընդունելով այն մթնոլորտից։ Իսկ բորակածինն այլ բույսերի համար ամենակարևոր անունդն է։ Հողը բորակածնով հարստացնելու համար գոմաղբով են պարարտացնում։ Այսպիսով, տավուտը հողին տալիս է այն նյութը (բորակածին), ինչ գոմաղբն է տալիս։

Մենք տեսնում ենք, վոր բազմադաշտյան սիստեմը պիտություն է պահանջում (քիմիա, հողագիտություն, ֆիզիկա, ագրոնոմիա). այսինքն դրված է գիտական հիմքերի վրա։ Գիտություն, տեխնիկա և ծախս—ահա բնաբնավ բազմադաշտյան ձևի պայմանները։ Այն արդյունքը, վոր ստացվում է անտեսության բազմադաշտյան ձևից, այնքան մեծ է և դրական, վոր այդ ձևի համար արած բոլոր ծախսերը չնչին են յերևում։

Ներքև բերված ապյուսակը ցույց է տալիս արևմտյան յերկրների (վորտեղ կիրառվում է բազմադաշտյան ձև) բերքատվությունը, այսինքն՝ բերքը մի հեկտարից.

Բերքատվությունը մի հեկտարից կվինտալներով

ՅԵՐԿՐՆԵՐ	Ցորեն	Տարեկան	Վարսակ	Գարի	Կարտոֆիլ
Անգլիա . .	22	27	17	19	163
Գերմանիա .	24	19	22	22	158
Բելգիա . .	26	22	23	27	200
Ֆրանսիա .	14	11	13	14	86
Շվեցիա . .	24	14	18	21	—
Ա. Ս. Հ. Մ .	8	8	9	9	73
Հայաստան .	8	—	—	9	73

Ներքև բերված ապյուսակում տրվում է բազմադաշտյան ցանքաշրջանառության սրինակ մեր Արարատյան դաշտի համար.

Տարի	1 Դաշտ	2 Դաշտ	3 Դաշտ	4 Դաշտ	5 Դաշտ	6 Դաշտ
1.	Բամբակ	Ցորեն	Բոստան	Լոբի	Բամբակ	Ավուտ
2.	Ցորեն	Բոստան	Լոբի	Բամբակ	Ավուտ	Բամբակ
3.	Բոստան	Լոբի	Բամբակ	Ավուտ	Բամբակ	Ցորեն
4.	Լոբի	Բամբակ	Ավուտ	Բամբակ	Ցորեն	Բոստան
5.	Բամբակ	Ավուտ	Բամբակ	Ցորեն	Բոստան	Լոբի
6.	Ավուտ	Բամբակ	Ցորեն	Բոստան	Լոբի	Բամբակ

ԱԳՐՈԿԱԶՄ ՅԵՎ ԱԳՐՈԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այնպիսի մի հետամնաց յերկրի համար, ինչպիսին Հայաստանն է, վորտեղ գյուղատնտեսությունը ցածր մակարդակի վրա է կանգնած, վորտեղ չի կիրառվում նույնիսկ յեռադաշտյան սիստեմ, և

վորտեղ գյուղատնտեսական գլխավոր մեքենան դեռևս նախնական արորն է, վորտեղ, վերջապես, գյուղացիության խոշոր տոկոսն անգրագետ է, ահագին նշանակություն ունի հասարակական ագրոնոմիայի (այսինքն գյուղատնտեսական գիտելիքների տարածման) գործը։ Գյուղացիությանը ագրոնոմիական ոգնություն հասցնելու գործը մեզ մոտ անցյալում հաժարյա կազմակերպված չի եղել։

1914 թվին Ցերևանի նախկին նահանգում մի գյուղատնտեսին 100,000 շունչ գյուղական բնակչություն էր ընկնում և 65,552 հեկտար վարելահող։

Խորհրդային իշխանությունը չէրկիրը նման վիճակում պահել չէր կարող։ Ժողովրդական Լուսավորության Կոմիսարիատն իր բոլոր դպրոցներին տալիս է գյուղատնտեսական թեքում, բացվում են գյուղատնտեսական տեխնիկումներ և գյուղերիա դպրոցներ։ Համալսարանում գոյություն ունի գյուղֆակ, վորը չ'րկրի համար վորակավորված գյուղատնտեսներ է պատրաստում

1925 թվին Հայաստանն արդեն ուներ.

Գավառային 9 գյուղատնտես. վորոնցից յուրաքանչյուրին ընկնում էր 29,000 գյուղական բնակչություն և 28,405 հեկտար հող.

Գավառակային 19 գյուղատնտես.

Գյուղատնտեսության պատասխան ճյուղերի 33 հրահանգիչ.

32 վարձակալան.

20 սերմացուի կայան.

12 բեղմնավորման կայան.

Պատասխան ծառերի 3 մանկարան.

70 ցուցադրական հողամաս։

Հետագա տարիներին այդ ցանցն ընդարձակվում է, և գյուղատնտեսների հաժար ավելի սեղմ շրջաններ են ստեղծվում գյուղացիությանն ագրոհազմի կողմից ավելի լայն չափով սպասարկելու համար։

Այժմ ցուցադրական հողամասերի թիվը 100-ից անցել է։ Գյուղացիությունը, վոր սկզբում համառ կերպով հրաժարվում էր իր հողամասերը ցուցադրական նպատակներին տրամադրելուց, ներկայումս, տեսնելով այն զորձնական շոշափելի ոգուտը, վոր ինքն ըստանում է ցուցադրական դաշտերից, խնդրում է ընդարձակել այդ դաշտերը, վորոնց վրա նայում է ինչպես դպրոցների վրա։

Շնորհիվ ագրոնոմիական այդպիսի լայն դրված ոգնության, ամեն և գյուղացիության մեջ գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների պահանջը, գյուղացիությունն ավելի լավ և կերակրում իր անասուններին, ինքը խոտասերմեր է ցանում և ցեղական անասունների պահանջ է զգում։

Գյուղատնտեսական գիտելիքները գյուղացիության մեջ տարածելու և ժողովրդականացնելու գործում ահագին նշանակություն ունի գյուղատնտեսական մամուլը և գրականությունը։ Այդ նպատակով լույս է տեսնում «Մահակալ» թերթը և «Գյուղատնտեսական կյանք» ամսագիրը։ 1924 թվից հողժողկոմատը ձեռնարկել է «Գյուղացու գրադարան» ընդհանուր վերնագրի տակ՝ բովանդակությամբ ու գնով մատչելի գրքուկների հրատարակությունը։ Մինչև այժմ հրատարակված են 14 անուն գիրք 39,5 մամուլով, 65,000 որինակ։

Ջեռք բերեք այդ գրքերը ձեր գյուղի գրադարանի համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի հինավուրց հետամնաց եքստենսիվ գյուղատնտեսական ձևերի հեղաշրջման և նոր ինտենսիվ ձևեր մտցնելու ու մասսայականացնելու գործում ահագին դեր ունեն խորհրդային տնտեսությունները, վորպես փորձնական և ցուցադրական կայաններ։

Այդ նկատառումներով, խորհրդային տնտեսությունները կազմակերպված են Հայաստանի զանազան կլիմայական գոտիներում, վորոնք յուրաքանչյուր շրջանին համապատասխան և շահավետ կուլտուրաները մշակելու փորձերն են անում։

Հայաստանում գոյություն ունեն չորս խորհրդային տնտեսություն։

1. Խորհրդային Ա. տնտեսությունը գտնվում է Ցերևանում՝ Հրազդան գետի աջ ափին։ Նրա մեջ մտնում են նախկին Սարդարյան այգին՝ 12 հեկտար տարածությամբ և նրան կից՝ խաղողի ազգայնացված այգիները՝ 31 հեկտար տարածությամբ։ Այդ հիմնական տարածությանն ավելացված են նոր այգիներ, այնպես վոր ներկայումս Ա. խորհրդային տնտեսությունը 73 հեկտար տարածություն ունի, վորի մեծ մասը խաղողի այգիներ են։ Այս տնտեսության նպատակն է՝ բարձր տեսակի վազեր տարածել և տեղական հին սիստեմի այգիներն աստիճանաբար փոխարինել Ցեվրոպական սիստեմի այգիներով։

Վրաստանի և Ադրբեջանի խաղողայգիները վարակված են ֆիլոքսերայով, վոր այդ չերկիրների խաղողագործության և չեն թարկում։ Ֆիլոքսերայի վտանգը սպառնում է և Հայաստանին։ Այդ պատճառով Ա. խորհրդային տնտեսության մեջ ամերիկական վազեր են տնկում (ամերիկական խաղողի վազերը ֆիլոքսերայի հիվանդության չեն չենթարկվում)։ Ամերիկական վազերի տնկարանը ընդարձակվում է, և այդ վազերի վրա տեղական տեսակներ են պատվաստվում.

Տնտեսության մեջ հիմք է դրված պտղատու ծառերի տնկարանի, վորը, հետզհետե ընդարձակվելով, շրջակա բնակչությանը կտրվորակ տնկիներ է տրամադրելու։

2. Մյասնիկյանի անվան խորհրդային Բ. տնտեսությունը գտնվում է Յերևանից 16 կիլոմետր հեռավորության վրա՝ Կոտայքի շրջանում։ Տնտեսությունն ունի 100 հեկտար հող, վորը ըստ տեսքերի հետևյալ պատկերն ունի.

Վարելահող	81	հեկտար
Պտղատու այգի	9	»
Արհեստական անտառ	13	»
Խոտհարք	4	»
Շինություններ, ճանապարհներ և այլն.	5	»

Այս տնտեսությունն իր վարելահողերի վրա կիրառում է բազմադաշտյան սիստեմը, վորը նորություն է Հայաստանի համար՝ իբրև հողագործության ինտենսիվ ձև։ Գտնվելով նախալեռնային գոտում, վորը կտրիճավոր պտղատու ծառերի շրջանն է, Մյասնիկյանի անվան խորհրդային տնտեսությունն ունի այդ տեսակի ծառերի տնկարան՝ շրջանի պտղաբուծությանը զարկ տալու համար։

Այդ տնտեսության գանգատն նոր կուլտուրանների վրա կատարված փորձերից պարզվում է, վոր շրջանիս համար շատ շահավետ և վորդեգրվող բույս կարող է լինել տանձկական բարձր վորակի ծխախոտը։ 1925 թվին ծխախոտի ցանքսերը հասան 14 հեկտարի։ Այդ տարին տնտեսությունը շրջակա բնակչության 2 միլիոն ծխախոտի շիթիլ է բաշխել։

Մյասնիկյանի անվան Ա. տնտեսության մեջ հիմնված է գեղատնկան խաղաբուծարան։ Այստեղ գարգանում և բնակչության մեջ տարածվում են թե գտարյուն անգլիական յորկշիր տեսակի խոզերը, և թե այս վերջինների և տեղական խոզերի խառնածնությունից ստացված տարատեսակները։

3. Խորհրդային Գ. տնտեսությունը գտնվում է Յերևանից՝ Եղնիածնի խճուղու գծով 13 կիլոմետր հեռավորության վրա՝ Փարաքարի մոտ։ Տնտեսությունն ունի 260 հեկտար ջրարբի և նույնքան էլ անջրդի հող։ Բացի այդ. տնտեսությունն ունի 11 հեկտար խաղողի այգի և 9 հեկտար բարդու անտառ։

Այս տնտեսության մեջ կիրառվում է բազմադաշտյան սիստեմ, վորտեղ ցանքաշրջանառության մեջ հանդես են գալիս հացահատիկները, բամբակ, առվույտ ու բրինձ։ Ծրագրվում է այս տնտեսության մեջ ընդարձակել խաղողի այգինները։

Հողը մշակվում է տրակտորով, և այդ տեսակետից, տնտեսությունը տեքնիկական տրինակ է տալիս շրջակայքի գյուղացիությանը։

4. Խորհրդային Դ. տնտեսությունը գտնվում է Լոռի-Փամբակի գավառում՝ Ախթալա կայարանի մոտ։ Տնտեսությունն ունի 210 հեկտար տարածություն։ Այդ տնտեսությունն ունի խաղողի և պտղատու ծառերի այգի ու որինակելի մեղվաբուծարան։

5. Բացի այդ չորս խորհրդային տնտեսություններից, իբրև որինակելի ձեռնարկություն, գոյություն ունի **Լոռվա անասնաբուծարանը**։ Անասնաբուծարանի նպատակն է՝ բարելավել տեղական անասնապահությունը։ Անասնաբուծարանին հատկացված է 1800 հեկտար մարգագետին ու արոտավայր։

Բացի տեղական բնտրովի լավագույն արտադրողներից՝ կովերից, արջառներից ու ցերեկներից, վորոնց թիվը 200 գլխից չի հասնում, անասնաբուծարանն ունի զտարյուն շվիցներ և Սիմենտալի կովեր։ Վերջիններս ծառայում են նաև խառնածին տարատեսակները (մետիսները) առաջ բերելու համար։

Բոլոր այդ խորհրդային տնտեսությունները կազմում էին Խորհրդային Տնտեսությունների միությունը, վորը այժմ գյուղատնտեսական Տրեստ է կոչվում։

Գյուղատնտեսական Տրեստի մեջ մտնում են նաև Հողժողկոմատի պահածոների գործարանը և Առաջին Խորհրդային տնտեսության գինեգործարանը։ Այդ յերկու գործարանները գործում են 1923 թվից, բավականին լավ տարքավորված են, ունեն բարձր արտադրողականություն։ Պահածոների գործարանը 1923 թ. պատրաստել է 1640 կվինտալ զանազան տեսակի պահածոներ, 1924 թ. 3280 կվինտալ իսկ 1925 թ. 3896 կվինտալ։

Գինեգործարանում 1923 թ. պատրաստվել է 98.397 լիտր գինի, 1924 թ. 307.475 լիտր, 1925 թ.—221.387 լիտր ընտիր տեսակի գինի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԻ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎՈՒՐՈՒՄԸ

Հայաստանը չոր յամաքային կլիմա ունի։ Դաշտային և նախալեռնային գոտիներում մշակովրատային տեղումները գյուղատնտեսության համար անբավարար են։ Հայաստանի դաշտերը կիսով չափ անապատներ կլինեին, յեթե նրա բնակչությունը զարերից ի վեր չոդատարծեր Հայաստանի ազբյուրների և գետերի ջրերը, ջանցքների և առուների ցանցով պատելով իր յերկիրը։

Իժլերիալիտական և ապրանիչյան պատերազմների ընթացքում մեր ջրային տնտեսությունը խոշոր չափերով վնասվեց։ Առանց հսկողության և անհրաժեշտ ընթացիկ նորոգման՝ մեր ջրային ցանցը քայքայվեց։ Մեր առուների ջուր անցկացնելու տարողությունը կրճատվել էր 60—70% ով։ Հայաստանի խորհրդայնացման հենց սկզբից Խորհրդային իշխանության ամենագլխավոր հոգսն է լինում ջրային այդ ցանցը վերականգնելը։

Ընկ. Մյասնիկյանը գալով Հայաստան՝ կառավարության դիմեց իր ձեռքն առնելու, իր հետ բերում է ընկ. Լենինի նամակը, ուղղված Հայաստանի կառավարությանը, որտեղ մեծ ուսուցիչն առաջարկում է ամենամեծ ուշադրությունը Հայաստանի հողերի վոռոգման վրա դարձնել։



Նկ. 2. Լենինի անվան Շիրակի ջրանցքը՝ ակվեդուկը.

Հայաստանի աշխատավոր ժողովուրդն ակտիվ է յեռանդուն կերպով վերանորոգել քայքայված ջրանցքները։ 1924 թ. ավարտված են հետևյալ ջրանցքների նորոգչական աշխատանքները։ Հողերը բերված են հեկտարներով (տես հաջորդ էջը)։

1926 թ. գյուղացիությունը 2969 կիլոմետր յերկարությամբ ջրանցքներ է տալիս, այդ աշխատանքի համար 87.563 բանվորական որ գործադրելով։

Միևնույն ժամանակ, վոռոգվելիք հողերի սահմաններն ընդարձակելու նպատակով, սկսված և արդեն ավարտված են հետևյալ ջրատնտեսական կառուցվածքները.

1. Եղնախածնի ջրանցքը. Կառուցված է 1922—23 թ. թ.։ Յերկարությունն է 22,4 կիլոմետր։ Ճանցի յերկարությունն է 62,9 կիլոմետր։ Վոռոգում է 2185 հեկտ. հող։ Ծախս է պահանջել 83.000 ռուբլի։

	Ջրաձիև շրջան	Մինչև 1914 թ.	Մինչև 1923 թ. պարունը	1923 թվի գարնանից հետո	1924 թվին
1	Սարդարապատի . . .	15.158	7.101	15.185	15.185
2	Ջանգեզուրի	9.289	5.571	7.756	9.289
3	Գառնի-Բասարի . . .	10.925	7.329	8.740	10.925
4	Վեդի-Բասարի . . .	12.219	8.740	10.706	12.219
5	Աբաւանի	20.065	15.863	19.119	20.065
6	Ղրխ-Բուլաղի	3.435	2 753	2.756	3.435
	Ընդամենը	71.118	47.357	64.062	71.118

2. Լենինի անվան Շիրակի ջրանցք.—Սկսվել է 1922 թ. ավարտվել է 1925 թ. նստել է 1.200.000 ռուբլի։ Ջրանցքի յերկարությունն է 32 կիլոմետր։ 2,3 կիլոմետր յերկարությամբ ջուրն անցնում է թունելի միջով։ Վոռոգման յենթակա տարածությունն է 13.929 հեկտ.։



Նկ. 3. Շիրակի ջրանցք. Թունելը.

3. Եվլախի ջրանցք.—14 կիլոմ. յերկարությամբ՝ ճյու-

պերը՝ 34 կիլոմ. չերկարութեամբ։ Վատոգում է 1634 հեկտ. հող։ Ծախսը՝ 55 հազ. ռուբ.։

4. Ա ր ա զ դ ա յ ա ն ի Ջ ր ա ն ց ք ի մ ա ն ա կ ի վ ե ր ա կ ա ն գ ն ո ւ մ ը։ Ջրանցքը վոռոգում է գաղթականներին հատկացրած 1311 հեկտ. տարածութիւն։ Ծախսը՝ 40,000 ռուբլի։

5. Տ ո լ կ գ յ ո ւ ղ ի համար չ ը մ ո ւ ղ է կ ա ռ ո ւ ց ված։ Ջուրը հոսում է կավե խողովակների միջով, որական 984 հեկտոլիտր։ Ցերկարութիւնը 7,47 կիլոմետր է։ Ա վ ա ր տ ված է 1923 թ. հունվարի 3-ին։

6. Վ ե ր ա շ ի ն ված է Ցերևան քաղաքի նախկին «Մ ա ժ ր ի ս»-ի, ներկայիս Շահումյան Ջրանցքը, որ վոռոգում է կոմմունալ տնտեսութեան հողերը։ Նախկին «Մաժրի» Ջրանցքը 437 հեկտ. եր վոռոգում, այժմյանը՝ 1.311 հեկտ.։

Ներկայումս ծրագրված են հետևյալ ջրաշինարարական աշխատանքները.

1. **Սարդարաբադի ջրանցք՝** 70 կիլոմետր չերկարութեամբ, 25893 հեկտ. հող վոռոգելու համար։ Արդեն ծախսված է 453 հազար ռուբլի։ Ընդամենը ծախսը հաշվում են մոտ 2,5 միլ. ռուբլի։

2. **Կարճեվանի ջրանցք՝** (Մեղրու շրջան)։ Վոռոգելու է 764 հեկտ. հող։ Չերկարութիւնն է 21 կիլոմետր։ Ծախսված է 67 հազար ռուբլի։ Կառուցումը կավարտվի 1927 թ.։

3. **Շիրակի ջրանցքի** ցանցի ընդլայնումը կավարտվի 1927 թ.։ Ծախսված է 51 հազ. ռուբլի։

4. **Ձյդր-Գյոլի ջրի մեխանիկական բարձրացումը.**—Ներկայումս աշխատանքներ են կատարվում Ցերևանի էլեկտրակայանից մատակարարվող էլեկտրական ուժով Ձյդր-գյոլի ջուրը բարձրացնելու՝ եջմիածնի շրջանում 13,567 հեկտ. հող վոռոգելու համար։ Գլխավոր ջրանցքների չերկարութիւնը կլինի 43 կիլոմ., ծախսը՝ 1 300.000 ռուբլի։ Կառուցումը ծրագրվում է ավարտել 1927 թ.։

5. **Ղամարլվի ճահիճների չորացումը.**—Մինչև այժմս չորացված է 3.168 հեկտ. տարածութիւն։

6. Ծ ր ա գ ր վ ո ւ մ է և չ ո ր ա ց ն ե լ նաև **Զանգիբասարի, Դավալվի, Ա ր ա զ դ ա յ ի, Սեվ-ջրի ակունքների** մոտ գտնվող ճահիճները, ընդհանուր տարածութեամբ 33.813 հեկտ.։

Այս ծրագրված աշխատանքներն ավարտելուց հետո, հերթի կ ի ն ապագայում ջրաշինարարական հետևյալ աշխատանքները, որոնց նախնական հետախուզութիւնները ներկայումս կատարվում են.

1. Հ ր ա զ դ ա ն ի ափերին տարածված հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան գաւեի վոռոգումը։ Այդ գաւերը բռնում են 32.776 հեկտ.։ Ջուրը տարվելու է Հրազդանից, որի ջրային մնուդը Սևանա լճից պիտի ուժեղացվի։

2 **Ա ր ա զ դ ա յ ի** դաշտում վոռոգման ենթակա է 10.925 հեկտ. տարածութիւն։

3. Ուսումնասիրութիւն և կատարվում **Սարդարաբադի** դաշտում մեծ ջրանցք անցկացնելու, որով 38,813 հեկտ. հող է վոռոգելու։

Ներքև բերված աղյուսակը ցույց է տալիս հողային տարածութիւնները, որոնք ավելանալու են Հայաստանի գյուղատնտեսական հողերին, 1923 թվից մինչև 1932 թիվը հետանկարային ծրագրով տարվելիք աշխատանքների շնորհիվ։

Հ ա յ ա ս տ ա ն ի վ ո ռ ո գ վ ո ղ հ ո ղ ե ր ի ա վ ե լ ա ց ո ւ մ ը 1923 – 1932 թ. թ. ընթացքում (ներառյալ չորացվելիք Ճահիճների տարածութիւնը) հեկտարներով։

	Ջ ր ա շ ի ն ա ր ա ր ա կ ա ն աշխատանքները	1923 թ.	1924 թ.	1925 թ.	1926 թ.	1927 թ.	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	Ընդամենը
1	Եջմիածնի Ջրանցքը —	1092	—	—	—	—	—	—	—	—	—	1092
2	Եվջիլուի Ջրանցքը —	—	1638	—	—	—	—	—	—	—	—	1638
3	Ա ր ա զ դ ա յ ի Ջրանցքի վերականգնումը —	—	—	764	1528	—	7647	—	—	—	—	9942
4	Շիրակի (Լենինի) Ջրանցքի կառուցումը —	—	—	4370	—	9559	—	—	—	—	—	13940
5	Եջմիածնի հողերի մելիորատիվ վոռոգումը —	—	—	—	5463	—	—	—	—	—	—	5463
6	«Թոխմախան» Ջրամբարի վերականգնումը —	—	—	—	492	—	—	—	—	—	—	492
7	Կաոչկանի Ջրանցքի կառուցումը — — —	—	—	—	655	—	—	—	—	—	—	655
8	Մարգարաթաի փոքր Ջրանցքը — — — —	—	—	—	—	8412	—	—	—	—	—	8412
9	Լամբրու գյուղի հողերի վոռոգումը — — —	—	—	—	—	1420	—	—	—	—	—	1420
10	Հարավ-արևելյան գաւերի վոռոգումը — — —	—	—	—	—	—	5462	—	—	—	—	5462
11	Հյուս.-արևմտյան գաւերի վոռոգումը — — —	—	—	—	—	—	—	13110	—	—	—	13110
12	Զանգիբասարի ճահիճների չորացումը — —	—	—	—	—	8413	—	—	—	—	—	8413
13	Ղամարլվի հողերի մելիորատիվ վոռոգումը —	—	—	—	—	—	6992	—	—	—	—	6992
14	Սև-ջրի ակունքների ճահիճների չորացումը —	—	—	—	—	—	—	12892	—	—	—	12892
15	Ղամարլու Ջրամբարի կառուցումը — — —	—	—	—	—	—	—	—	10925	—	—	10925
16	Մարգարաթաի մեծ Ջրանցքը — — — —	—	—	—	—	—	—	—	—	46977	46977	46977
	Ընդամենը	1092	1638	5134	8139	27804	20102	26000	—	10925	46977	147819

Ծ ա խ ս ա տ ա ճ ի. — կազմեցեք դիագրամ՝ վերևի աղյուսակի տվյալներով։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Հացաբույսերը բռնում են ցանքսային տարածությունների 86% այսինքն՝ 3232 հազ. հեկտար ցանքսային տարածությունից հացաբույսերին 1926 թ. հատկացված եր 276,4 հազ. հեկտ.։ Հողերի այդպիսի խոշոր տոկոսը հացաբույսերին հատկացնելը վկայում է յերկրի գյուղատնտեսության հետամնացության, նամանավանդ Հայաստանում, վորտեղ հողերն ընդունակ են ավելի բարձր արժեք ունեցող մշակույթներ տալու, ինչպես օրինակ, այգի, բամբակ, ծխախոտ, թթենի և այլն։ Դրան պետք է ավելացնել նաև այն, վոր հացահատիկների տեսակետից Հայաստանն արտադրող յերկիր ել չե, այլ սպառող։

Հայաստանն իր հացով յերբեք չի բավարարվել, նա միշտ կարիք է ունեցել հացի ներմուծման։

1926 թվին հացահատիկների ընդհանուր բերքը հավասար եր 252,734 տոննի, վորով հաշվյա մոտենում է նախապատերազմյան (261,898 տոնն)։ Ներկայումս տարեկան ներմուծվող հացի քանակն անցնում է 32,760 տոննից։

Մյուս կողմից, պետք է ասել, վոր հացահատիկները Հայաստանում ապրանքայնություն չունեն։ Այս նշանակում է, վոր հացահատիկների խոշոր մասն սպառվում է արտադրող անտեսություններում և շուկա չի հանվում, դրամի չի վերածվում։ Նույնը չի կարելի ասել բամբակի, խաղողի, ծխախոտի մասին։ Այս մթերքները բացառապես շուկա յեն հանվում և նրանց ապրանքայնությունը շատ մեծ է։

Բայց և այնպես՝ հացաբույսերը թե պատերազմից առաջ և թե այժմ գյուղացու անտեսության հիմքն են կազմում։

Յեթե Հայաստանի հացահատիկների բերքն արժեքի վերածենք մենք ստանում ենք 1926 թվին՝ 15,826,300 ռուբլի (նախապատերազմյան հաշվով), մինչդեռ տեխնիկական և յուղատու բույսերի արժեքն է 2,361,800 ռ. այգեգործության և խաղողինը՝ 2,120,000 ռ. Հետևապես հողագործության ընդհանուր արտադրանքի արժեքի—24,988,200 ռուբլու դիմաց հացահատիկների բերքի արժեքին ընկնում է 15,826,300 ռ., վորը կազմում է ամբողջի 63% ը։

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր Հայաստանի ամբողջ ցանքսային տարածության 86%-ը, վորը հատկացված է հացաբույսերին,

տալիս է հողագործության ընդհանուր արտադրանքի արժեքի 63% իսկ ցանքսերի մնացած 14%-ը տալիս է այդ արժեքի 37%-ը, այսինքն՝ հացաբույսերը տալիս են 15,826,300 ռուբլի, իսկ այլ մշակույթները (տեխնիկական, յուղատու և այլն) – 9 161,900 ռուբլի։

Յեթե մի պահ մենք չենթադրենք, վոր Հայաստանի բոլոր հողերը հատկացված լինելին այս վերջին տեսակի մշակույթներին, մեր եքստենսիվ ձևերի պայմաններում անգամ արտադրանքի արժեքը կլիներ վոչ թե 24,988,2 հազար ռուբլի, այլ մոտավորապես 65 միլ. ռուբլի։

Այստեղից, բնականաբար, հարց է ծագում, թե ինչու՞ Հայաստանի գյուղացիությունը չի հրաժարվում հացաբույսեր մշակելուց և չի անցնում այլ մշակույթների (բամբակ, ծխախոտ, ճակնդեղ, կարտոֆիլ, խոտ, յուղատու բույսեր և այլն)։

Հետագայում, իհարկե, Հայաստանի բնակչությունն իր հողերի խոշոր մասը հատկացնելու է տեխնիկական թանգարժեք մշակույթների և խոտացանքսի։ Իբրև օրինակ այդպիսի անտեսության բերենք Անգլիան։

18-րդ դարում Անգլիան բավարարվում եր իր հացով և ավելցուկն արտահանում եր ու ծախում Յեվրոպայում։ Հետագայում, չկարողանալով մրցել ներմուծվող ռուսական, ամերիկական հացահատիկների դեմ, Անգլիան հրաժարվեց հացահատիկային տնտեսությունից և անցավ անասնապահական տնտեսության։

Այժմ Անգլիայի ցանքսային տարածությունների միայն 37%-ն են բռնում հացաբույսերը, իսկ 62% հատկացված է ցանովի խոտերի և այլ մշակույթների։ Անգլիան իր անասնապահական տնտեսությունից անհամեմատ ավելի մեծ շահ է ստանում, քան կստանար հացաբույսեր մշակելուց։ Իսկ հացը նա ժամն գնով ներմուծում է հաց արտահանող յերկիրներից։ Սեպհական հացն իրեն 3 ամսով է միայն բավարարում։

Արևմտյան Յեվրոպայի գլխավոր յերկիրներում վոչ մի տեղ հացաբույսերի ցանքսերի տարածությունը 69%-ից բարձր չե։

Այդպիսով, վորևե յերկրի հացաբույսերի ցանքսերի բարձր տոկոսը հետամնացության նշան է։

Արդ, ինչո՞վ պիտք է բացատրել Հայաստանի հողագործության այդ աչքի ընկնող հետամնացությունը։ Այս հանգամանքը յերկու տեսակի պատճառ ունի։

Նախ՝ տնտեսության այդպիսի հեղաշրջում կատարելու համար բացակայում են վորոշ պայմաններ, յերկրորդ՝ ավելի բարձր տնտեսության անցնելուն պատահական պատճառներ են խոչընդոտ հանդիսացել։

Ցանքսերի զգալի մասը տեխնիկական և այլ բույսերի վերածելու համար Հայաստանում չկան շուկաներ՝ այդ մշակույթների մթերքները լիովին սպառելու համար։ Այդ նշանակում է, վոր Հայաստանի մշակողական արդյունագործությունն այնքան զարգացած չե, վոր սպառող պահանջ առաջադրի այդ մթերքներին։ Չեն աճում քաղաքները, վորտեղ կենտրոնացած բանվոր բնակչությունն իր կենսական մթերքների պահանջներով դրդի գյուղացիությանը՝ անցնելու նոր յեղանակների և արտադրի բազմատեսակ մթերքներ։ Չկան հաղորդակցության ճանապարհներ, վոր արտադրած մը-

թերքները անմիջապես տեղափոխվեն արտադրության անտեսություններից կամ յերկրի սպառողներին կամ արտահանվեն հեռավոր յերկիրները։ Վերջապես, գյուղացիության կուլտուրական մակարդակը դեռ ցածր է։

Պատահական պատճառներից բերենք իմպերիալիստական և սպեկուլյան պատերազմները։ Աշխարհից կտրված լինելով, մեր գյուղացիությունն աշխատել և պահպանել իր գոյությունը՝ միայն հացահատիկների մշակության վրա իր ուշքը կենտրոնացնելով։ Նույն իսկ բարձր դոտիների լեռնային լանջերին, որտեղ կլիմայական պայմաններն աննպաստ են հացահատիկների համար, գյուղացին իր ընտանիքի հացն ապահովելու նպատակով հացահատիկ է ցանում, թեև հողը շատ անգամ սերմացուն էլ է պլանում վերադարձնել։

Խորհրդային իշխանությունը, այդ բոլոր հանգամանքները հաշվի առնելով, իր աշխատանքները տանում է մասնավորապես պայմանները ստեղծելու ուղղությամբ։ Նա վոչ միայն վոռոգման հսկայական կառուցումներ և ձեռնարկում, այլ, ինչպես կտեսնենք, աշխատում է բարձրացնել Հայաստանի տեղական արդյունագործությունը։

Անկասկած այս ձեռնարկած աշխատանքների հետ զուգընթաց՝ խոսնալու չէ և մեր տնտեսության հեղաշրջումը։ Հայաստանի գյուղատնտեսության արդի ձևերը պատմության սեպհականություն են դառնալու։



ՀԱՑԱԲՈՒՅՍԵՐ

Հացաբույսերից Հայաստանում մշակում են՝ ցորեն, գարի, կորեկ, հաճար, տարեկան, հնդկացորեն, վոսպ, լոբի և չալթուկ։

Ցորեն. Ցորենը Հայաստանում յերեք տեսակներ ունի՝ կարծր-դեղին (հասկը հատ է և տեղ-տեղ կպած հատիկներով։ Հատիկը կարծ է յերկար, լի և ծանր) կարծր կարմիր (հատիկն ավելի փոքր է և կլոր) և կակուղ (հատիկը կլոր, գույնը սպիտակ, դեղնավուն և կարմրավուն)։

Այդ յերեք տեսակներից յուրաքանչյուրը բազմաթիվ տարատեսակներ ունի։ Որինակ՝ կարծր-դեղին ցորենը հետևյալ տարատեսակներն ունի՝ սառե-բուղդա, կալաղչեխ, դեղին չարդ։ Կարծր կարմիր ցորենը՝ պյուլյան, խրդա-բուղդա, գյուլիսար և այլն։

Ցորենը ցանում են աշնանն և գարնանը։

Աշնանը ցանում են դաշտային տեղերում, ջրարբի հողերի վրա, գարնանացանը՝ լեռնային գոտում, անջրդի հողերի վրա։

Այս յերկու ցանքսերի շարժումը 1909—1926 թ. թ. հետևյալ պատկերն ունեը.

Հացաբույսեր	1909-1913	1923	1924	1925	1926	1926 թ. % նախապ. տարի
Աշնանացան ցորեն	95,4	70,4	68,5	76,4	79,0	82,8%
Գարնանացան ցորեն	96,1	61,5	72,1	78,4	96,1	100%

Աշնանացան ցորենը յետ է մնացել, իսկ գարնանացանը հասել է նախապատերազմյան ցանքսի տարածությանը։

Մի հեկտար ջրարբի հողի վրա ցանվում է միջին հաշվով 2,3 կվինտալ ցորեն, և ստացվում է 12 —20 կվինտալ. անջրդի հողերի վրա ցանում են 1—2 կվինտալ և հավաքում 3—15 կվինտալ բերք։

Հայաստանի ցորենի միջին բերքատվությունն ըստ տարիների (կվինտալներով)

Հացաբույսեր	1909-1913	1923	1924	1925	1926
Աշնանացան ցորեն	9,8	8,8	8,8	8,5	10,9
Գարնանացան ցորեն	7,5	6,7	6,7	6,7	8,5

Յեթե 1926 թ. բարձր բերքատվությունը չհաշվենք (այս տարի բերքի տարի յեր), բերքատվությունը յետ է ճնում նախապատերազմյանից։ Այս բացատրվում է մեզայլ և կենդանի ինվենտարի պակասությամբ։

Ցորենի ընդհանուր բերքն ըստ տարիների (տոններով)

Հացաբույսեր	1909-13	1923 թ.	1924	1925	1926
Աշնանացան ցորեն	85,993	57,051	55459	59623	79,456
Գարնանացան ցորեն	66356	37165	44657	48681	74,954

1. Հավաքեցեք դպրոցի թանգարանի համար Հայաստանի ցորենի տեսակներն ու տարատեսակները։

2. Պատրաստեցեք ցորենի ծաղկի մոդելը կամ մեծ թղթի վրա այն նկարեցեք՝ պատի վրա կախ տալու համար։

3. Թվական տվյալները վերածեցեք դիագրամների։

Գարի.—Գարին ցանում են Հայաստանում բարձր գոտիներում, մինչև 8000 ոտնաչափ բարձրության անջրդի հողերի վրա։ Դաշտային գոտում ցանում են այնպիսի տեղերում, որտեղ ջրի բացակայության պատճառով ուրիշ մշակույթներ տնելը հնարավոր չէ։ Գարին այստեղ բավականանում է հողի բնական խոնավությամբ, որ անցնում է մոտիկ գտնվող ճահիճներից, առուներից կամ գետերից (Արաքսի, Կարբի, Սև ջրի ափերի մոտ)։

Գարին ունի զանազան տեսակներ, հիշատակենք յերկշար, քառաշար և վեցշարքանի տեսակները, սև գարի և այլն։ Գարին նույնպես ցանվում է աշնանն ու գարնանը։

1. հեկտար հողի վրա շաղ են տալիս մինչև թվով 2 կվինտալ և ստանում են մինչև 20 կվինտալ։

Գարուց հաց են պատրաստում, բայց, սովորաբար, խառնում են ցորենի հետ և խառն տեսակի հաց թխում։

Այս աղյուսակի մեջ դրվում է գարու ցանքսերի տարածությունը, բերքատվությունը և մինչին բերքը։

Գարու	1909-13	1923 թ.	1924 թ.	1925 թ.	1926 թ.
Ցանքերի տարածությունը (հաշվ. հեկտարներով)	99,6	76,0	79,3	80,6	83,3
Բերքատվ. (կվինտ.ով)	9,9	8,8	9 0	9,5	10,9
Բերքը (տոնն.)	91 714	62·355	66.160	70.046	82,589

Այլ հացաբույսեր.—Այլ հացաբույսերն, այսինքն կորեկը, հաճարը, տարեկանը, հնդկացորենը չալթուկը միասին վերցրած Հայաստանում համեմատաբար աննշան տարածություն են բռնում։ Այստեղ արվում է այդ բույսերի ցանքսերի տարածությունը հազար հեկտարներով և ընդհանուր բերքը տոններով։

	1909-13	1923	1924	1925	1926
Ցանքսի տարած.	15,2	19,2	19,4	23,2	19,6
Ընդհան. բերքը	18486	17,655	16,980	17,672	16,500

Այս տվյալներից յերևում է, որ քայքայված գյուղացիությունը չկարողանալով գլխավոր հացահատիկները նախապատերազմյան քանակներով մշակել, դիմում է այլ մշակույթների ընդարձակելով վերջիններիս ցանքսային տարածությունը, գլխավորապես, կորեկինը։ Սակայն արդյունքն աննշան է, որովհետև բերքատվությունն ընկած է, 1926 թվին ցանքսի բարձրացման հետ մենք այլ հողաբույսերի ցանքսերի կրճատում ենք նկատում։

Այլ հացաբույսերի մեջ նկատելի տեղ բռնում է կորեկը, որ ցանում են ամենուրեք, բացի շատ բարձր վայրերից (որ՝ Լենինականի, Նոր Բայազեդի և Զանգեզուրի գավառները)։ Կորեկը պահանջկոտ բույս չէ, շատ դիմացկուն է յերաշտի դեմ, մեծ բերքատվություն ունի և այդ տեսակետից հայ գյուղացու համար հացի տեղը է բռնում, այսինքն՝ հացի տեղ է ծառայում, յերբ վերջինս բացակայում է։ Սովի տարին կորեկի ցանքսն ընդարձակվում, նորմալ տարիներում՝ կրճատվում է։ Քրդերը սովորաբար կորեկի հաց են գործ ածում։ Կորեկն առհասարակ գործ են ածում թռչունների համար իբրև կեր։

Բրինձ.—Բրինձը մշակում են դաշտային գոտու այնպիսի վայրերում, որտեղ ջրերի վոչ մեծ պակասություն, այլ առատություն է զգացվում։ Այնտեղ, որտեղ ջուրը սակավ է, հաճախ-նեերն արգելում են բրնձի ցանքսը։ Բրինձը շատ տեսակներ ունի, որոնց մեջ ամենալավը ագուլյան տեսակն է. ամենալավ բրնձով հռչակված են Վերին և Ներքին Ալբաշ գյուղերը՝ Գառնի գետի վրա։ Բրինձը ցանում են մայիս ամսվա ընթացքում։ Բերքը հավաքում են սեպտեմբերին և կամ հոկտեմբերին։ 1 հեկտ. հողի վրա ցանում են 1,1—1,6 կվինտալ և ստանում 8,1 կվինտալ, իսկ բերրի տարիներում՝ մինչև 49 կվինտալ։ Բրինձը կլանում է 6—10 անգամ ավելի ջուր, քան ցորենը կամ այլ հացաբույսերը։

Հաճար.— Ցանվում է աննշան քանակով։ Հաճարի հատիկներից ձավար են շինում և գործ են ածում կերակրի համար։

Տարեկան (рожь). — Յեվրոպական Ռուսաստանում լայն տարածված այս հացաբույսը, որը ռուս ժողովրդի ազգային հացն է, մեզ մոտ ցանվում է բարձր գոտիներում, այն էլ աննշան քանակով։

Հնդկացորեն (гречиха) - Նույն, թերևս ավելի սակավ, տարածություն ունի։ Այս մշակույթը 1842 թ. մոտերին Հայաստան ուղարկած աղանդավորները, որոնք հիմնեցին Նիկիտինո և Վոսկրեանովկա գյուղերը։ Գրեչիխան ոչ ոք ժողովրդին նույն ծառայությունը չի մատուցում, ինչ որ մեզ՝ հաճարը։

Լոբին, սիսեռը և վոսպը ցանվում են գլխավորապես բանջարանոցներում, տնային կարիքների համար։

Հայաբույսերի ընդհանուր արտադրանքը կամ բերքն ըստ տարիների հետևյալն է.

1909 - 1913 թ. թ.	262,4	հազ. տոննա
1923—1924 թ. թ.	175,2	,, ,,
1924—1925 թ. թ.	182,3	,, ,,
1925—1926 թ. թ.	196,0	,, ,,
1926—1927 թ. թ.	253,2	,, ,,

Հյուսիսային Կովկասից ներմուծվում է տարեկան 22.760 տոննա հացահատիկ։

Ուշադրություն

1. Հայաբույսերի թվական տվյալները վերաձեցեք պատրաստի ձևերի։

2. Պատրաստեցեք հացաբույսերի ծաղիկների մոդելները։

3. Հավաքեցեք Հայաստանի հացաբույսերի զանազան տեսակները ձեր դպրոցական թանգարանի համար։

4. Հետևեցեք՝ վերքան հացահատիկ է ընկնում Հայաստանի բնակչության յուրաքանչյուր շնչին։

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐ

ԲԱՄԲԱԿ (ՍԻՊՏԱԿ ՎՈՍԿԻ)

Բամբակի հայրենիքը Հնդկաստանն է։ Շատ հին ժամանակներից Հնդկաստանում զարգացած անասնապահական բամբակագործությունը Եվրոպային բամբակաթելի գործվածքներ էր ժառանգարարում։ Մինչև անգամ Հնդկաստանից այդ գործվածքները ներմուծվում էին Եվրոպա և, մանավանդ, Անգլիա, մինչև 18-րդ դարի վերջը։ Չուխակությունը հազարավոր տարիներ կատարվել է ձեռքի հատուցների (զազգյան) վրա։

1764 թ. Անգլիայի չուխակության մեջ հեղաշրջում է տեղի ունենում։ Մի ազքատ չուխակ՝ Ներգրիվս անունով, մեքենա է հնարում, որը մի անգամից գործողության մեջ է դնում նախ ութ, ապա՝ մինչև 30 թելիկ

բամբակի թել մանելու համար. Ներգրիվսն այդ մեքենան իր դստեր Ջեննիի անունով «Ջեննի» անվանեց։ «Ջեննի» մեքենան շատ արագ տարածվեց Անգլիայում և ապա Եվրոպայում. ձեռքով թել մանելը պատմության պիրկն անցավ։ Դրանից առաջ մի չուխակին 3—4 մանող կանայք հազիվ էին կարողանում թել հասցնել։ Ջեննի մեքենան չերևան գալուց հետո թելի գերարտադրությունն սկսեց շուկան թելով հեղեղել։

1768 թ. նույն Անգլիայում Արկրայտը և նրանից հետո Կրոմպտոնը ավելի կատարելագործեցին մանելու մեքենան։

Թելի գերարտադրությունն առաջացրեց մեխանիկական գազգյանի գյուտը։

1787 թ. Կարտրայտը հնարում է մի այնպիսի մեքենա, որ մի րոպեում մպոդի 200 գարձ է տալիս արդեն. մինչդեռ ձեռքի գազգյանը մի րոպեում մպոդի 60 գարձ ուներ միայն։ Մի բանվոր կարողանում էր 4—8 գազգյան բանեցնել։ Հետագայում այդ մեքենան այնպես կատարելագործվեց, որ 1 բանվորը 20—28 գազգյան էր բանեցնում։

Այդպիսով, ձեռքի աշխատանքը վերածվեց մեքենայի աշխատանքի։ 1890 թ. թվին Անգլիայում այլևս ձեռքի չուխակություն գոյություն չուներ։

Տեխնիկական այդ հաջողությունները Անգլիայի համար նոր հեռանկարներ են բաց անում։ Անգլիան աշխարհ է դուրս գալիս մրցության չգիմացող էժան բամբակի գործվածքներով և իր ձեռքն է առնում աշխարհի շուկան։

Իրար յետևից նա գաղութներ է ձեռք բերում և իր անվաճառին (անբավարի) արդյունագործության ապրանքներն արտահանում է հեռավոր ցերկիրներ՝ ամենուրեք ժամացուց հարված հասցնելով տեղական արհեստներին և անասնագործությանն։

Հնդկաստանը, որը հազարավոր տարիներ բամբակի գործվածքներ էր արտադրում Եվրոպայի համար, և որի ամենագլխավոր շուկան Անգլիան էր, այժմ ինքն է գառնում Անգլիայի շուկան։ Անգլիան սկսում է հեղեղել Հնդկաստանն իր գործարաններում գործած էժան կտորներով, և այդպիսով նա ոչնչաց այդ յերկրի հինավուրց արդյունագործությունը։ «Հնդկաստանի գաշտերը»,— ասում է մի գրող,— «սպիտակին եյին տալիս հնդիկ չուխակների ոսկորներից, որոնք չկարողացան դիմանալ իրենց ուժերից վեր մրցության»։ Այդ ժամանակից Հնդկաստանն Անգլիայի ամենագլխավոր շուկան է գառնում։

Յերբ Կոլումբոսը հայտնաբերեց Ամերիկան, յեվրոպացիք այնտեղ վոչ միայն բամբակ գտան, այլ և բամբակի գործվածքներ։ Բամբակագործության արհեստն Ամերիկայում նույնպես հին պատմություն ունի, ինչպես և Հնդկաստանում։ Այդ արհեստը զարգացած է յեղել Մեքսիկայի և կենտրոնական Ամերիկայի կուլտուրական ժողովուրդների միջև։

Բամբակի մշակույթը մեծ աշխատանք և զանազան պայմաններ է պահանջում։ Բամբակի աճման ժամանակաշրջանն է 200—240 տաք որ, առանց սառնամանիքների. բամբակը պահանջում է վոռոգում։

Բամբակի մշակույթը շատ թշնամիներ ունի։ Կարկուտը, չոր քամիները և զանազան հիվանդություններ կարող են բամբակին մեծ վնասներ հասցնել։ Բամբակի վոխերիմ թշնամին է մորեխը։

Հում բամբակը (հնդավոր) պարունակում է $^1/_3$ թել և $^2/_3$ սերմ։ Հնդավոր բամբակն առանձին մեքենաների (ջին) միջոցով զտվան և յենթարկվում, այսինքն՝ թելը սերմից զատում է։ Թելից գործվածքներ են պատրաստում. իսկ սերմը, մամուլի միջոցով սեղմելով, ձեթ են ստանում։ Բամբակասերմի ձեթը թե՛ ընախիր աննզա նյութ է, յեթե լավ է մաքրված և զտված, և թե տեխնիկական մեծ նշանակություն ունեցող հում նյութ է։ Նրանից օծանյութեր և ոճառ են պատրաստում։

Համաշխարհային առևտրի մեջ բամբակը, յերկաթը, քարածուխը և նավթն ամենագլխավոր ապրանքներն են։

Բամբակ արտադրող յերկիրներն են՝ Միացյալ Նահանգները, Հնդկաստանը, Թուրքեստանը, Յեգիպտոսը, Բրազիլիան, Մեքսիկան, Պարսկաստանը, Չինաստանը, Տաճկաստանը և Միջագետքը։ 1913 թ. այդ յերկիրների արտադրանքը հավասար էր 47,3 միլ կվինտալի։

Միացյալ Նահանգներ	32,4	միլ. կվինտալ։
Հնդկաստանը	8,4	» »
Յեգիպտոսը	3,4	» »
Ա. Միությունը	1,5	» »
Բրազիլիա	0,7	» »
Մեքսիկա	0,3	» »
Պարսկաստան	0,3	» »
Այլ յերկիրներ	0,7	» »

Անդրկովկասի Միության բամբակի ապրանքներն են՝ Թուրքեստանը և Անդրկովկասը։

Անդրկովկասի հանրապետությունների մեջ բամբակի ցանքատիճն տարածությամբ և ընդհանուր բերքով առաջին տեղը բռնում է Ադրբեջանը, յերկրորդ տեղ՝ Հայաստանը, յերրորդ տեղը՝ Վրաստանը։

Ադրբեջանը	101	հազար հեկտ.
Հայաստանը	17,4	» »
Վրաստանը	5,4	» »

Բամբակը թանկարժեք մշակություն է։ Պատերազմից առաջ Հայաստանի բամբակի բերքի արժեքը կազմում էր հացահատիկների ընդհանուր բերքի արժեքի 65%-ը։

Հնդավոր բամբակի և ցորենի գների հարաբերությունն է 1:3 կամ 1:4. այսինքն՝ յեթե ցորենն արժե 16 կիլոգր. 1 ռուբլի, բամբակի նույն կշիռը 3—4 ռուբլի արժե։ Այդ հարաբերությունը յեթե փոխվում է ի վնաս բամբակի, բամբակի ցանքսերը կրճատվում են և հատկացվում ցորենի մշակության։

Այդպես յեղավ պատերազմի վերջը և ապամիջյան պատերազմների ժամանակ։ Դաշնակցական կառավարությունն իր իշխանության ժամանակ բամբակի մենաշնորհ հայտարարեց։ Բամբակ արտադրողները պարտավորեցին բամբակը կես գնով վաճառել պետությանը. և պետությունն այդ բամբակը Բաքումում վաճառում էր ոսկի պետությունների՝ կանխիկ դրամ ձեռք բերելու համար։ Այդ քաղաքականության հետևանքն այն յեղավ, որ գյուղատնտեսությունը բոլորովին հրաժարվեց բամբակ մշակելուց, և 1919 ու 1920 թ. թ. բամբակի ցանքսերը Հայաստանում իսպառ վերացան։

Հայաստանի խորհրդայնացումից հետո Խորհրդային իշխանությունն, աչքի առաջ ունենալով բամբակի մշակության բացառիկ նշանակությունը Հայաստանի համար, ձեռնարկում է ստեղծել պայմաններ այդ մշակությը վերականգնելու համար։

1922 թ կազմակերպվում է Հայբամբակկոմը։ Այս հիմնարկության ջանքերով նույն թվին սկսվում է բամբակի մշակության վերականգնումը։ Ցանվում է 1092 հեկտ. տարածություն։ Հետևյալ 1923 թ. պետական Ռուս-Հայկական ընկերության ուժանդակությամբ ցանքսերն ընդարձակվում են մինչև 4370 հեկտ.։ 1924 թվին գյուղատնտեսությունն արդեն առանց տատանվելու ցանքսերը հացնում է մինչև 16388 հեկտարի։

Ներքև բերված աղյուսակը ցույց է տալիս բամբակի ցանքսերի շարժումն ըստ տարիների հեկտարներով. նրա արտադրանքը (հազարներով), բերքատվությունը կվինտալներով.

Բամբակի	1909-13	1923-24	1924-25	1925-26	1926-27
Ցանքերի տարածությունը	15,2	4,3	16,3	15,7	12,7
Արտադրանքը	13,0	3,1	11,8	14,4	6,7
Բերքատվությունը (կվինտ.)	9,3	7,8	7,8	9,1	6,5

Աղյուսակի ավյալներից պարզվում է, որ բամբակի մշակության վերականգնումն արդեն կատարված փաստ է։ 1924 և 1925 թ. թ. բամբակի ցանքսերը նախապատերազմյանից անցնում են և կայուն հիմքերի վրա յեն գրվում։

Անբարեհաջող տարի յեր 1926-27 տարին։ Այս տարում թե՛ կրճատվում են ցանքսերը՝ (12,7 հազար հեկտար) և թե՛ ընկնում է արտադրանքն ու բերքատվությունը։ Պատճառն այն է, որ բամբակի և ցորենի գների շեշտված 1:3 հարաբերությունը տատանվեց ի վնաս բամբակի։ Իր ժամանակին բամբակագործներին անհրաժեշտ քանակությամբ հացահատիկ չհատակարարվեց և բամբակի գները գյուղ սպեկության համար անձեռնտու յեղան։ Ինչ վերաբերում է բերքատվության անկմանը, դրա պատճառներն են՝ ցրտան անատուն-

նեերի պահասութեյան պատճառով հողի վատ հերկը և չոր հիվանդութեյունը։

Ինչպես տեսնում ենք, այդ անհաջողութեյունը պատահական և հեշտ վերացվող անբարենպաստ պայմանների արդյունք է։

1926-27 տարվա բամբակի ցանքսերը բաշխված են ըստ գավառների.

Շրջան	հեկտարներով
Յերևանի	2,425
Եջմիածնի	2,861
Դուրդուրուլու	4,675
Դամարլվի	1.921
Մեղրու	120
Դարալագյազի	164
Ընդամենը	12,156

Հայբամբակկոմի կողմից գյուղացիներին և կոոպերացիային տված ավանսները հավասար են 973,285 ռուբլու։

Բամբակագործական կոոպերատիվ ընկերութեյունները պատրաստում են այժմ բամբակի ցանքսի կազմակերպման և բերքի հանձ-



Նկ 4.

նման աշխատանքներով։ 15 կոոպերատիվ ընկերութեյունների միջոցով կազմակերպված ցանքսի տարածութեյունը հավասար է 5,639,6 հեկտար կամ 1926 թ. ամբողջ բամբակացանքսի տարածութեյան

45,5%-ը։ Հիշած 15 կոոպերատիվ ընկերութեյուններն ունեն 13 տրակտոր։

Բամբակագործներին ոգնութեյուն ցույց տալու համար պետութեյունն են ունեցել կենտրոնում մի մասնագետ տեսուչ, 4 շրջանային գյուղատնտես և 4 հրահանգիչ։ Յուրաքանչյուր բամբակագործական շրջանում գործել են՝ ագրոկայան կաբինետ, վարձակայան և ցուցադրական դաշտեր։ Այս վերջինները բաշխված են յեղել հետևյալ կերպով՝

Յերևանի	շրջան	10	գյուղում
Դամարլվի	»	9	»
Եջմիածնի	»	10	»
Դուրդուրուլու	»	10	»

Ուշադրութեյուն

1. Եքսկուրսիա կատարել ա) բամբակի փորձադաշտը, բ) սերմնապտիչ գործարանը գ) ձեթի և ոճառի գործարանը և դ) Լենինականի տեքստիլ գործարանը։

2. Հավաքել թանգարանի համար բամբակի բույսի և արտադրութեյան զանազան պրոցեսների նմուշներ։

3. Թվական տվյալները վերածել դիագրամների։ Թվերն արտահայտել %%-ով։

ՎՈՒՇ ԿԱՄ ԿՏԱՎՀԱՏ ՅԵՎ ԱՅԼ ՅՈՒՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Վուշը մի տարվա բույս է՝ նեղ տերևներով և գեղեցիկ, կապույտ ծաղիկներով։ Վուշը մշակվում է յերկու նպատակով—ներսյոլբից թելիկներ են ստանում, վորոնցից բաճան են գործում, իսկ սերմերից ձեթ են պատրաստում։

Այդ յերկու նպատակները բնորոշում են վուշի մշակութեյը։

Յեթե նպատակ է դրված վուշից սերմ ստանալու, այդ դեպքում ցանում են բերքի սև հողում, ավելի տաք կլիմայում։ Այս բույսը շատ պահանջկոտ է և հողն ուժասպառ է անում։ Արդեն հատած սերմ ունեցող վուշի լոբի թելիկները կորցնում են իրենց ներքութեյունն ու բարակութեյունը և թեև կարող են գործվածքի համար ծառայել, սակայն նրանցից պատրաստած գործվածքը ցածր վորակ է ունենում։

Այդքան պահանջկոտ չէ վուշը, յեթե մշակում են թելիկների համար։ Այս մշակութեյը վոչ սևահող և պահանջում և վոչ էլ այնքան տաք կլիմա։ Բույսն այնքան չեն աճեցնում վոր նրա սերմերը հասունանան, հնձում են և յողունները գցում լճացած ջրի մեջ,

վորտեղ ցողուններ փտում են։ Փտած ցողունները հանում են ջրից, շորացնում և տրորում են, վոր փայտային մասերը փշրվեն, հեռացվեն, թելիկները մնան։ Թելիկները սանրում են և մանում։ Մանած վուշի թելերից դազգյահների (հասաց) վրա գաթան են գործում։

Եվրոպալին վուշի թելիկներ և սերմ մատակարարող յերկիրը Ա. Ս. Հ. Մ-ն է։ Սերմ տալու համար վուշը մշակվում է ռուսաստան սահմողում, իսկ թելավոր վուշը մշակվում է Ոկա և Վոլգա գետերի ավազաններում՝ սկսած Զուզ յգից մինչև Ուրալյան լեռները։ Մինչև պատերազմը Ռուսաստանը տանում եր մոտ 410 հազ. տոննն վուշի թել և մոտ 490 հազ. տոնն. վուշի սերմ։

Վուշի սերմից ձեթ հանելուց հետո ստացված քուսպն անասուններին համար անդրարար կեր է։ Այս քուսպը Ա. Ս. Հ. Մ-ը նույնպես արտահանում է արևմտյան Յեվրոպա։

Հայաստանում վուշը մշակում են սերմ ստանալու և սերմից վտավհատի ձեթ հանելու համար։ Այս գարի սկզբին Հայաստանը տարեկան 213 տոնն վուշի սերմ եր ստանում։ Վուշից թել են ստանում և այս թելերից Հայաստանում ապրող ռուս գաղթականները ձեռքի գազգյահների վրա գործվածքներ են պատրաստում։

Շատ հին ժամանակներում Հայաստանում տարածված և յեղել վուշի թելիկներից քաթան գործելու արհեստը։ Ժամանակի ընթացքում այդ արհեստը մոռացվել է։

Վուշի հետ միասին, իբրև յուղատու բույսեր, աննշան քանակությամբ՝ մշակում են կանեփ, քնջութ, կոլզա, գենագերչակ, արևածաղիկ և այլ բույսեր։ Յուղատու բույսերի ցանքսային տարածությունը (հազար հեկտարներով) և արտադրանքը (հդ. կվինտ.) հետևյալ պյուտակն է ցույց տալիս.

	1909-13	1923	1924	1925	1926
Յուղատու բույսերի ցանքսերը . . .	5,1	6,1	6,6	6,1	6,2
Նրանց թվում վուշի	4,3	5,4	5,9	5,4	4,9
Յուղատու բույսերի արտադրանքը .	19,2	24,4	24,7.	22,7	28,8

Աշխատանք

1. Շորացրեք ձեր դպրոցի հերբարիումի համար Հայաստանի յուղատու բույսերը։ Այդ բույսերի սերմերից կոլեկցիա կազմեցեք։

2. Մի կտոր թղթի ծալքի մեջ սեղմեցեք վուշի կամ այլ յուղատու բույսի սերմը, սերմից դուրս յեկած ձեթից թուղթը թափանցիկ է դառնում։

3. Ձեր դպրոցի հողամասում յուղատու բույսեր մշակեցեք։

ԾԽԱԽՈՏ

Ծխախոտի հայրենիքը Ամերիկան է։ Սպանացիները Կոլումբոսի հետ Կուբա կղզու վրա հանդիպեցին բնիկ կարմրամորթներին, վորոնք ծխում եյին ինչ վոր բույսի մանրած տերևներ, վոր իրենք «տաբակկո» եյին անվանում։ Ֆրանսիայի փորթուգալական դեսպան Նիկոն հայտնի յե իբրև ծխախոտի բույսը Յամադովոլ։ Նա պնդում եր, թե ծխախոտը մաշկի հիվանդությունները բուժելու համար լավ դեղ է։ Սկզբում Անգլիայում և ապա Յեվրոպայում հասարակության բարձր խավերը սկսեցին ծխախոտը ծխել, և այդպիսով այդ վնասակար սովորությունը տարածվեց Յեվրոպայում։ Պետք է ասել, վոր ծխախոտի մի ուրիշ տեսակը բուսնում եր Ասիայում, և ծխախոտի մուտքը Ռուսաստան արևելքից է յեղել։ Ծխախոտը պարունակում է իր մեջ չափազանց ուժեղ թույն, վոր, ի պատիվ դեսպան Նիկոյի, Նիկոտին է կոչված։ Բավական է այդ թույնի մի կաթիլով թունավորել մեսը և տալ շանն ուտելու, վորպեսզի մի քանի րոպեում սարսափելի ջղաձգություններից մեջ շունը սատկի։

Ծխելը չափազանց վնասակար է նամանավանդ յերիտասարդների համար։ Բայց և այնպես, այս վնասական սովորությունն արմատացել է բնակչության մեջ։ Պետության կողմից սպիրտի և ծխելուդեմ դրված արգելքները նպատակին չեն հասնում։ Այդ առիթ է տալիս արտասահմանից կոնտրաբանդայի ուժեղացման և բնակչության մեջ դաղտնի վաճառքներին՝ սոսկալի թանկ գներով։ Սպիրտի և ծխելու դեմ դպրոցը պիտի պայքար մղի. կրթական պրոցեսում պիտի կարելի յե վնասակար սովորությունները վերացնել մարդկության մեջ

Այնուամենայնիվ, ծխախոտը շատ ձեռնտու մշակություն է, վոր տնտեսության մեծ յեկամուտ է տալիս։ Հատկապես տնտեսության մեջ Ա. Ս. Հ. Մ-ը յերրորդ տեղն է բռնում (114,660 տոնն տարեկան)։ Առաջին տեղը բռնում է Միացյալ Նահանգները (491,400 տոնն). յերկրորդ տեղը Հնդկաստանը (164 619 տոնն)։

Հայաստանում ծխախոտը միշտ ել մշակվել է, բայց աննշան քանակով։ Վորակով ցածր ել է յեղել, այսպես կոչված՝ մախորկա, այն ել վերջինիս ցածր տեսակը, վոր տանկական այլասերված ծխախոտն է և վորը գյուղացիները մշակում եյին իրենց կարիքների համար։

Տարեկան հավաքվում եր մինչև 655 կվինտալ (ներկա գարի սկզբին). Ծխախոտի մշակությիը տարածված և Յերևանի գավառի Զիմանքենդ, Թաժամլու, Բաշնարու, Ուլուխանլու, Կարակոչունլու և Դուլլաար գյուղերում։

Պատերազմից հետո Տաճկաստանից Հ. Ա. Ս. Հ-ը գաղթած հայերը Հայկոոպի նախաձեռնությամբ սկսեցին մշակել ծխախոտի բարձր դեղին տեսակները (սամսոն, տրապիզոն, պլաստան)։ Սկիզբը շատ հաջող եր։ Զարբախում 1922 թ. մի քանի հեկտարի վրա նրանց կատարած փորձն անսպասելի հաջողություն ավեց, և այժմ Հայաստանի դաշտային և նախալեռնային գոտին այլ թանկարժեք մշակությների հետ նաև ծխախոտի շրջան և համարվում։

Մի խումբ տաճկահայ ծխախոտագործներ (22 անտեսություններ) կազմակերպեցին կոոպերատիվ ընկերություն «Պոնտոս» անվան տակ և 1924 թվին կատարած բոլոր յանքերի 45% ն ընկնում է այդ ընկերությանը։

Ծխախոտի բարձր տեսակների մշակության ամենալավ արդյունքները ստացվեցան դաշտային գոտում՝ Զարբախում և Ագամզալու գյուղում և նախալեռնային գոտում «Զագ» տնտեսության մեջ։ Լենինականի գավառում և լեռնային այլ վայրերում ծխախոտագործության փորձերը բավարար արդյունքներ չավին։ Մի շարք տարիների ծխախոտի մշակությների փորձերը ցույց են տալիս, որ ծխախոտի մեջին բերքատվությունն է մի հեկտարից 10-12 կվինտալ։ Ինչ վերաբերում է Հայաստանի դեղին ծխախոտի որակին, Վրաստանի Տարտրեռոի կարծիքն այն է, որ Հայաստանի դեղին ծխախոտը որակով Արևելյան Վրաստանի (Լագոդեխի) ծխախոտից բարձր է և որոշ տեսակներն անգամ հավասար են Սուխումի տեսակներին։ Արտաքին շուկաները սկսեցին հետաքրքրվել հայկական ծխախոտով և 1925 թ. ծախված է Մոսկվորոմին և Վրաստանի Տարտրեռոին 441 կվինտ. ծխախոտ, մեկ կվինտալը 100 ռուբլիով։

Ծխախոտի յանքսերը և նրա. արտադրանքն ըստ տարիների հետևյալն է.

	1909-13	1923	1924	1925	1926
Յանքսերը 100 հեկտարներով	1,09	1,09	1,09	3,2	5,4
Արտադրանքը կվինտալներով	737	737	671	2112	4144

Հայաստանում ծխախոտի մշակությունը և վաճառահանումը 95 տոկոսով կոոպերացված է։ Ծխախոտագործության ընկերությունները պարապում են թե՛ ծխախոտի վերամշակությամբ և թե՛ վաճառահանությամբ։ Դժբախտաբար համապատասխան չորանոցների բացակայությունն ազդում եր ծխախոտի վորակի վրա և հնարավորություն չեր տալիս լավ գներով վաճառահանելու։

Ծխախոտագործության զարգացման համար գյուղբանկից ստացված 16,000 ռ. և պետական բյուջեից 8,500 ռուբլին գործադրվեցին 8 չորանոցների կառուցման վրա, վորոնք արդեն պատրաստ են։

Այդ չորանոցները մեծ գարկ են տալու մեր ծխախոտի թե վորակը բարձրացնելու և թե վաճառքն ընդլայնելու։

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՅԼ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐ

ԿԱՐՏՈՖԻԼ

Կարտոֆիլի մուտքը Յեվրոպայում յեղել է Հարավային Ամերիկայից։ Նրա հայրենիքն է Չիլին։ Ա. Ս. Հ. Մ-յան սահմաններում նա սկսեց տարածվել 18-րդ դարում, այն էլ մեծ դժվարությամբ։ Ժողովուրդն ընդհանուր եր կարտոֆիլի դեմ, «սատանի խնձոր» անվանելով այն, մինչև անգամ սպանում եր պետության այն պաշտոնյաներին, վորոնք պրոպագանդա էին տալիս և տարածում այդ անտարբեր մշակությիը։

Կարտոֆիլը հացահատիկի անունդը չունի։ Նրա անդպատվությունի 4 անգամ պակաս է տոաջինից, սակայն եժան մթերք լինելով, նա կարող է հացի տեղ ծառայել և կերակուրների անհրաժեշտ մասը կազմել։ Կարտոֆիլն օգուտ և ոսկի արդյունաբերության հիմնական հում նյութն է։ Կարտոֆիլը կամ նրա կճեպը լավ կեր է խոշոր ընտանի կենդանիների ու խոզերի համար։

Կարտոֆիլը մշակում են Հայաստանում նախալեռնային և լեռնային գոտիներում։ Կարտոֆիլի ցանքսային տարածությունը Հայաստանում 8193 հեկտ. է, արտադրանքը մոտ 786 հազար կվինտալ։ Կարտոֆիլի բերքատվությունը մի հեկտարից 90—95 կվինտալ է։

Կարտոֆիլի մշակությունը տարածված է Լոռում, Փամբակում Աբարանի դաշտում, Լենինականի և Նոր-Բայազետի գավառներում։ Այստեղ կարտոֆիլը կարող է արդյունաբերական խոշոր նշանակություն ունենալ։

ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲՈՍՏԱՆ

Բանջարանոցային մշակություններից Հայաստանում կան սեխ, ձմերուկ, վարունգ, դդում, սոխ, կաղամբ, թաթխուն, ռեհան, գինձ, պազար, տաքտեղ, պամիդոր, բադրջան, բոդկ, բազուկ, վոսպ, սիսեռ, լոբի, արևածաղիկ, սխտոր, քավառ, սպանաղ, սալաթ, կոտեմ, համեմ և այլն։

Այս բույսերից կաղամբը, լոբին, բազուկը, գազարը և կարտոֆիլը բավականին մեծ տեղ են բռնում և վաճառքի յեն հանվում

Բաշքենդ, Ազազոր, Արամուս, Թազաքենդ, Յելդովան, Ելլար, Շահաբ և Ավան գյուղերում, սոխը - Մամեդ-աբադում և Սարվանլարում, սխտորը—Չիկդամլու և Կարադամզալու գյուղերում, դուբիման և ձմերուկը - Ղամարլվում և Ազամզալվում, Եղնիածնի գավառից տոխը արտահանում են՝ Յերևան, Լենինական և Կարս (անցյալում)։ Կաղամբը և վարունգը բավականին ծավալ են ստացել Լենինականի գավառում, վորտեղից արտահանում էլին մինչև անգամ Բագու։

Հայաստանում առանձնապես հոչակված է սեխի մի տեսակը, վոր դուբիմա չե կոչվում։ Այս մշակույթը մեծ աշխատանք և պահանջում, բայց ամբողջ Անդրկովկասում մրցակից չունի և իր համով գերազանցում է Զարժույի հայտնի սեխին։

Ընդհանրապես պետք է ասել, վոր Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ բանջարաբուծությունը խոշոր տեղ չի բռնում, թեև բոլոր տվյալները կան բանջարաբուծությանն արդյունաբերական նշանակություն տալու։

Բանջարաբուծության յեվ բոստանի ցանքսերի տարածությունը (հազար հեկտարներով) յեվ արտադրանքը (հազար կվինտալներով) ըստ տարիների.

	1909-1913	1923	1924	1925	1926
Ցանքսեր	5,2	2,6	2,9	3,2	4,3
Արտադրանքը	570,0	291,5	283,3	363,6	494,6

ՅԱՆՈՎԻ ԽՈՏ

Հայաստանը արոտավայրերի յերկիր է։ Հայաստանի լեռներն իրենց լանջերին փռված խոտերով կերակրում են վոչ միայն Հայաստանի անասուններին, այլ և հարևան հանրապետություններից քոչ վոր անասնապահներն իրենց հոտերը բերում են Հայաստանի ամառային արոտավայրերում արածացնելու։ Բայց այս դեռ հարստություն չի։ Ժողովրդի հարստությունը բարիքների այն քանակն է, վոր ժողովուրդն ինքն իր ձեռքով և աշխատանքով է բնությունից ստանում ու կուտակում։ Աղքատ բնություն չկա։ Կա աղքատ ժողովուրդ։ Ո՞վ գիտե, ինչ հարստություններ է ձեռք բերելու մարդս Սահարայի անապատից, յերբ գիտությամբ զինված՝ նա նպատակ դնի անապատը շահագործելու։ Ֆինլանդացիներն իրենց ապառաժներով պատած, ժայռն կլիմա ունեցող յերկրում սովի տարի չեն տեսել։

Այո, Հայաստանն արոտավայրերի յերկիր է։ Հապա մի տեսեք նրա խզճուկ անասունը, նրա նիհար կովը, հյուծված ձին, անվոր յեզն ու գոմեշը։

Բնական մարգագետնից հունձը մի հեկտարից տալիս է 6,6-13,1 կվինտ. խոտ. իսկ յերբ այդ մարգագետինը հերկվում և այնտեղ խոտ է ցանվում, ստացվում է 49 կվինտալ խոտ։

Թե վորն է ավելի շահավետ, խոտը թե հացը, այդ ցույց է տալիս Անգլիայի տնտեսությունը։ Ինչպես մենք տեսանք, Անգլիայում ցանքսերի 33% վրա յեն հացահատիկները ցանում։ Մնացած տարածության մեծագույն մասի վրա խոտ են ցանում։ Յեվ հասկանալի չե՝ խոտն ավելի շահավետ է քան հացը։ Գյուղատնտեսության նույն ձևը մենք տեսնում ենք Դանիայում և Շվեյցարիայում։

Ազնվացեղ կովը 400—600 գրամ խոտի դիմաց 400 գրամ կաթ է տալիս։ Յեվրոպական մսացու վոչխարը 125 կիլոգրամ կենդանի քաշ ունի, և մերինոս վոչխարի ամեն մի խուզումից 8,2 կիլոգրամ բուրդ է ստացվում։ 1,6—2,4 կիլոգրամ լավ կերից խոզը հավաքում է իր վրա 400 գրամ. մինչ, խոշոր յեղջյուրավոր կերդանին նույնը հավաքում է 3,6 կիլոգրամ կերից և վոչխարը՝ 3,2 կիլոգրամից։ Լավ սնված անգլիական կովի կենդանի միսը կշռում է 13 կվինտալ, իսկ մորթածը՝ կենդանի քաշի 70% ը։ Անգլիական յորկշիր և բերկշիր տեսակի խոզերը 100-500 կիլոգրամ կենդանի քաշ ունեն։

Այդպիսով, մենք տեսնում ենք, վոր խոտն այն հում նյութն է, վորը կենդանի գործարաններում վերամշակվելով՝ միս, կաթ, ճարպ, բուրդ, ձու և փետուր է տալիս կամ բանվորական ուժի յե վերածվում (ձի և բանող անասուն) և գոնազան յերկիրների ժողովրդական յեկամտի խոշորագույն մասն է կազմում։

Յեվրոպայի բոլոր յերկիրները վաղուց են, վոր անցել են խոտացանության և ահագին շահեր են ստանում այդ տնտեսությունից։

Հայաստանում ցանովի խոտերի՝ առվույտի, կորնգանի, յերեքնուկի ցանքսերը շատ աննշան են, քիչ է և արտադրանքը։

	1909-13	1923	1924	1925	1926
Ցանովի խոտի ցանք տարածք. հազ. դես.	4,3	2,9	2,9	3,1	3,2
Ցանովի խոտի արտադր. հազ. տոն.	19,6	11,5	9,9	13,2	16,5
Բնական խոտ. (հազար տոններով)	135,5	151,4	118,9	130,6	172,4

Ծաղկաբուծությունը Հայաստանում կարող է ունենալ արդյունաբերական նշանակություն, սակայն այժմ ծաղիկների մշակույթը սաղմնային դրության մեջ է։

Զարացրեք ձեր դպրոցական հերբարիումի համար Հայաստանի բանջարանոցային բույսեր ու խոտեր։

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի դաշտային և նախալեռնային գոտիները թե՛ հողի և թե՛ կլիմայի տեսակետից ամենանպաստավոր պայմաններն են ընձեռնում թե՛ պաղատու ծառերին և թե՛ խաղողի վազերին։ Ծիրանի բուսաբանական անունը՝ Prunus armeniaca) և դեղձինը՝ Prunus Persica**) ցույց են տալիս, որ այդ նուրբ և անուշ պտուղների հայրենիքը Հայկական և Իրանի բարձրավանդակներն են։*

Հայաստանի այգեգործական շրջաններն են՝ Ջերմանի, Եղվարդի և Մեղրու գավառները։ Բայց այդ դեռ չի նշանակում, թե մյուս գավառներն անհարմար են պաղատու բույսերի համար։ Դարալագյազի Խաչիկ և Ղարագուխ գյուղերում, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից 6,200—6,500 ոտնաչափ է, հրաշալի ծիրան և խաղող են հասնում։ Դարալագյազի շատ տեղերում ձմեռը խաղողի վորթը չեն էլ թաղում։ Լենինականի գավառում մոչ-շատ հեռու անցյալում պաղատու ծառեր չկային։ Ներկայումս այնտեղ 50 տեսակի խնձորենիներ են աճում։ Այնտեղ աճում են նաև կեռասի, բալի, տանձի, սալորի տարբեր տեսակները, մինչև անգամ թթենի։

Պատերազմի և սովի տարիներից հետո, հարկ եղած խնամքի բացակայության պատճառով, այգինների տարածությունը խոշոր չափով ընկել է և բերքատվությունը զգալի կերպով պակասել։

Այգեգործությունը Հայաստանում եքստենսիվ կերպով է տարվում. պաղատու ծառերի ոռոգման աշքի ընկնող աշխատանքներ չեն կատարված, մեր գյուղացիությունը վնասատուների դեմ պայքար չի մղում, մինչդեռ այգեգործությունն արդյունաբերական խոշոր նշանակություն ունի Իտալիայում, Սպանիայում և Փորթուգալիայում տասնյակ միլիոնավոր բնակչության չհագեցող գլխավոր աղբյուրն այգեգործությունն է։

Պատերազմից առաջ Հայաստանում պտղատու ծառերի պահածոների տարեկան արտադրությունը հասնում էր 16,380—20,000 կվինտալի։ Ներկայումս Երևանում աշխատում է Հոդժոդիկժատի մի գործարան, որն արտադրել է.

1923 թ. պտղատու պահածոներ	*1,638 կվին.*
1924 » » »	*3,276 »*
1925 » » »	*3,881 »*

Ծրագրված է պահածոների քանակը հասցնել մինչև 8 190 կվինտալի։ Մեր պաղ պահածոների պահանջը Խորհրդային Միության շուկաներում՝ Լենինգրադում և Մոսկվայում՝ շատ մեծ է։

Պտղատու ծառերի ոռոգման լայն փորձեր են կատարվում Խորհրդային Հանրապետության մեջ։ Բնակչությանը պտղատու ծառերի տունկերը մատակարարելու նպատակով, պտղատու ծառերի մանկարաններ են հիմնված Դիլիջանում, Ղարաքիլիսայում։ Ծրագրված է այդպիսի մանկարաններ հիմնել Ջանգեզուրի, Դարալագյազի, Եջմիածնի և Լենինականի գավառներում։ Մեր պաղատու այգիների տարածությունը մեր չերկրի հնարավորությունների համեմատությամբ շատ աննշան է։

	1909-13	*1923*	*1924*	*1925*	*1926*
Պաղատու այգինների տարածությունը (հազ. հեկտ.).	*3,2*	*1,9*	*2,1*	*2,3*	*2,4*
Արտադրանքը (հազ. կվինտալներով)	*147,4*	*88,4*	*81,9*	*100,8*	*105,4*

ԽԱՂՈՂ ՅԵՎ ԽԱՂՈՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Պաղատու ծառերից ավելի մեծ տարածություն են բռնում խաղողի այգինները։ Բայց նկատի ունենալով Հայաստանի բնական պայմանները, խաղողի այգիների տարածությունն էլ աննշան պիտի համարել։ Հայաստանի կրաքարով հարուստ հրաբխային հողը, արևոտ կեղտնակը չափազանց նպաստավոր են խաղողի համար։ Գոչ մի չերկրի խաղողը Հայաստանի խաղողի քաղցրությունը չունի։ Հայկական գինիները շատ թունդ են, և հաճովում ե նրանից սպանական և փորթուգալական դեսերտի գինիների տեսակներ պատրաստել (Շերես, Մալագա, Սպորտո և այլն)։

Հայաստանն առաջին տեղն է բռնում Անդրկովկասում խաղողի տեսակների բազմազանությամբ։ Հայաստանում մշակվում են խաղողի 60 տարատեսակ։ Սրանց մեծագույն մասը տեղական ծագում ունի։ Սպիտակ տարատեսակներն իրենց քանակով գերազանցում են սև տարատեսակներին։ Այս վերջինները կենտրոնացած են Արտաշատի շրջանում։

---

*) Prunus armeniaca—*Հայկական սալոր։*

**) Prunus persica—*Պարսկական սալոր։*

Հայաստանի խաղողի շաքարավեճությունը շատ բարձր է և տատանվում է 17%–27%-ի մեջ։

Մեր խաղողի այգինները շատ են տուժում մլկլիում և ոիդիում անկային հիվանդություններից։

Բարեբախտաբար խաղողի վոխերիմ թշնամին՝ ֆիլոքսերա միջատը, վոր Վրաստանի այգիներում ավերածություններ է անում (կախեթիա) և վնասում է նաև Ադրբեջանի խաղողի այգիները, Հայաստան տակավին մուտք չի գործել։

Բայց մեր այգինեըն այդ վնասատուից ապահովված չեն, վաղ թե ուշ նա գալու յե։ Շատ ռացիոնալ կլիներ նախորոք պատրաստվել այդ թշնամու դեմ պայքարելու համար։ Ֆիլոքսերայի դեմ պաշտպանվելու միակ միջոցն է՝ փնկել ամերիկյան վազեր և մեր բոլոր տարատեսակները պատվաստել այդ վազերի վրա (Ամերիկյան վազերին ֆիլոքսերան վնաս չի հասցնում)։

Այդ աշխատանքներն այժմ կատարում է Խորհրդային տնտեսությունը։ Թե վորքան ձեռնտու յե խաղողի տնտեսությունը Հայաստանում, պարզվում է այն փաստից, վոր պատերազմից առաջ մի հեկտարից միջին բերքը հասնում եր 27 խալվարի (խալվար 4,9 կվինտալ)։ Խալվարը միջին հաշվով $16^1/_2$ ռուբլի արժեր։ Մի հեկտար այգու մշակության համար պահանջվում եր 60-150 ռ. և այսպիսով, մի հեկտարից ստացվում եր 300-500 ռուբլի զուտ արդյունք։

Ներկայումս, սակայն, խաղողի բերքատվությունը չափազանց ընկած է։ Մի հեկտարից 1925 թ. ստացված է միջին հաշվով 24,6 կվինտ., 1926 թ. 32,8 կվինտ.։ Դրա պատճառն այն հարվածն է, վոր մեր այգիներին ազգամիջյան խռովությունները հասցրին։ Իրար վրա հաջող ցուրտ ձմեռները ստատիկ տառնամանիքներով խոշոր չափով վնասեցին մեր խաղողի այգինները։ Մի շարք նորմալ տարիներ են պետք, վոր խաղողի բերքատվությունը նախապատերազմյան մակարդակին հասնի։

Այգեգործության և խաղողաբուծության արտադրանքը խոշոր տեղ եր բռնում Հայաստանի գյուղատնտեսության մեջ։ Այս մշակույթները տալիս եյին 4.950 հազ. ռուբլի արտադրանք, վորից միայն խաղողաբուծությանն ընկնում է 4050 հազ. ռուբլի արտադրանք վորից միայն խաղողաբուծությանն ընկնում է 4050 հազ. ռուբլի։ Հողագործության ընդհանուր արտադրանքի ընդհանուր արժեքի 17,1%-ն եր կազմում։ Ներկայումս այդ կազմում է 9,3%։

Խաղողի այգիների տարածությունը, արտադրանքը (հազ. կվինտալներով) և բերքատվությունը (կվինտ.) ըստ տարիների տալիս է ստորև բերված աղյուսակը.

	1909-13	1923	1924	1925	1926
Խաղողի այգինների տարած.	9,8	7,6	8,2	8,7	8,9
Արտադրանքը	237,1	259,4	368,5	196.5	268,6
Բերքատվութ.	81,9	32,8	49,1	24,6	32,8
Արտադրանքի արժեքը հազ ռ.	4.430,6	1.584,7	1240,2	1.365,4	1.806,3

Այգեգործության մեջ մեծ դեր է խաղում կոոպերացիան։ Այգեգործական կոոպերատիվ ընկերությունները վերաժշակում են խաղողը, գինի և ողի չեն պատրաստում, և թե մեծերում են խաղողը։ 1925/26 թ. այդ ընկերությունները մշակել են 6846,8 կվինտալ խաղող, վորից պատրաստել են 430.479 լիտր գինի և 80.000 ստան. ողի։

Ցույց է տվել, վոր բնական պատահարների պատճառով, այդ քանակն անցյալ տարվա համեմատ պակասել է, սակայն շնորհիվ շուկայի բարենպաստ պայմանների, ընկերությունները հնարավորություն ունեցան իրենց գինին Հայգյուղկոոպի միջոցով լավ գներով վաճառելու և գոյալի ոգուտ ստանալու։

3 ընկերություններ իրենց հասած ոգտից Ղամարլվի շրջանում մատաններ են կառուցել 5.000 ռ. արժողությամբ։

Այգեգործական կոոպերատիվ ընկերությունները առ 1. հոկտ. 1926 թ. ընդգրկում եյին 1300 հեկտար տարածություն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ

Հայաստանի գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի 1791,9 հազ. հեկտ. տարածությունից խոշորագույն մասը՝ 973,6 հազ. հեկտ. այսինքն՝ մոտ 51%-ն ընկնում է արոտավայրերին։ Այս տարածությունից ամառային արոտավայրերին ընկնում է 640,3 հազ. հեկտ. ձմեռային արոտավայրերին՝ 168,3 հազ. հեկտ. և մոտ 168,0 հազ. հեկտ.—գյուղական արոտներին։

Ամառային արոտավայրերը կամ յայլաղները լեռնալանջերին են գտնվում և սկսվում են 2000 մետր բարձրության վրա, այսինքն՝ այնտեղ, վորտեղ վերջանում են հացահատիկների մշակույթները և անտառը և տարածվում են մինչև լեռնագագաթները կամ մշտաձյունային ձյան սահմանը։ Ձմեռային արոտավայրերը կամ ըզ-

լաղները գանվում են դաշտային գոտում և նրանց սահմանը 900 մետրից բարձր չի անցնում։ Սրանք դաշտային գոտու այն տեսակներն են, որտեղ թե անձրևն և պակաս և թե արհեստական ոռոգում չկա, հողագործությամբ հնարավոր չէ պարապել և ուր բնական խոտերի սակավաթիվ տեսակներն են աճում։

Վաչկատուն (քոչվոր) անասնապահները ձմեռն իրենց հոտերը ձմեռային արոտավայրերում են պահում և արածացնում, իսկ ամառը մալխին բարձրանում են սարերը՝ ամառային արոտավայրերը։

Ամառային արոտավայրերը անհամեմատ ավելի հարուստ են խոտերով քան ձմեռային վայրերը, նամանավանդ լեռնալանջերը հարավային և արևմտյան կողմերը (գյունեյ), որտեղ խոտն ավելի աննդարար է, քան հյուսիսային կողմերում (դուզեյ)։ Գյունեյի վրա արածող անասունն ավելի մարմնեղ է, կաթն առատ, ճարպոտ հանելի։ Ինքն անասունը բնազդաբար դերագասում է արևմտյան վայրերում արածել։

Իրենց մակերևույթի տարբերությամբ, ամառային արոտավայրերը բաժանվում են կովերի, վոչխարների և այծերի մակարդակների։

Առաջիններն՝ ձգված հարթ լեռնալանջերի վրա, հարուստ են խոտերով։ Այստեղ դանդաղաշարժ խոշոր եղջյուրավոր կենդանիներին լեռան ծերպերից ցած պլորվելու վտանգ չի սպառնում։ Ձերկրորդները բարձրաթմբեր լանջերն են, վոչ այնքան խոտավետ, վորտեղ քարակուտեր են պատահում։ Յերրորդները՝ ամենաբարձր, քարքարոտ, կիրճերով կարված վայրեր են, վորտեղ ոտտ քիչ կոտում են այծերը։ Այս բարձունքների վրա ոդը մաքուր է, փոշուց ազատ և նոսր։ Արևի ճառագայթներն ոդի մեջ չեն կլանվում և նրանց ամբողջ ջերմությունը հողին է անցնում։ Այդ պատճառով խոտը բարձր ցողուններ չի տալիս, այլ տարածվում է հողի վրա, սեղմ, կանաչ թավշապրդ կազմում և դուրսդուրն անհատար ծաղիկներով զարդարում այդ դորդը։ Բազմաթիվ են ամառային արոտատեղերի խոտերի տեսակները։

Հայաստանի ամառային արոտավայրերում Հայաստանի անտառապահ բնակչության անասունը չէ միայն վոր արածում է։ Հարևան հանրապետություններից՝ Ադրբեջանի և Վրաստանի քոչվորները նույնպես իրենց հոտերն ամառը գալիս բերում են Հայաստանի լեռները։

Այստեղից հարց է ծագում և այդ հարցը շատ հին է—արոտների պահանջ դնող տեղական և ոտար քոչվորների վեճերը լուծել և բոլորին արոտներով բավարարել։ Այդ հողի վրա անցյալում, դարձական կառավարության որոք, յերբ արոտների լավագույն մասերը գավթել էին բեգերն ու աղալարները կամ կուլակ տարրերը, հանձախ արյունհեղություն էր տեղի ունենում։

Խորհրդային իշխանության առաջ ծառացավ արոտաշինարարության այդ կենճռոտ հարցը։ Արոտավայրերը պետական ֆոնդ են կազմում։ Այդ ֆոնդը ներկայումս բաժանվում է յերկու մասի, մեծագույն մասը տրվում է մեր գյուղացիությանը, իսկ դրանից չեկած քոչվորների համար գտաված է 210 հազ. հեկտ. տարածություն։ Վորոշված են վարձակալության պայմանները։

Արոտավայրերի ընդհանուր չեկավորը հասնում է 322,841 ս.

Ս. Հախտաճեր

Հերթական համար չորացրեք ձեզ պատահած արոտավայրերի գանագան խոտերի տեսակներ։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Զարմանալին այն չէ, վոր Հայաստանի գյուղատնտեսության մեջ անասնապահությունը խոշոր տեղ է բռնում, այլ զարմանալին այն է, վոր Հայաստանի մեծագույն մասում անասնապահական անտեսությունն առաջնակարգ տեղ չի գրավում։ Գյուղատնտեսական նշանակություն ունցող հողերի մեծագույն մասն արոտավայրեր են, վորոնք հյուրընկալում են ոտարերկրացի քոչվորներին։ Այս հանգամանքը և բնապատմական նպաստավոր այլ պայմաններ հնարավորություն են տալիս Հայաստանի անասնապահությունը վոչ միայն քանակապես ուժեղացնելու, այլ և անասնապահական եքստենսիվ ձևերից բարձր ինտենսիվ ձևերին անցնելու։

Մեր անասնապահությունն ընդհանուր առմամբ վաչկատուն (քոչվոր) բնույթ ունի։ Մարդուս աշխատանքը, ծախսը և այն պիտելիքները, վոր նա մտցնում է անտեսության այս ճյուղի մեջ, չափազանց քիչ են։ Անասունը ձմեռվա կերով չի ապահովված, համարյա տարին տասներկու ամիս անասունը վոտի վրա ինքն է իր անունը հալածվում՝ ձմեռը ձմեռային և ամառը ամառային արոտատեղերը քոչելով։ Անասունների վորակը չափազանց ցածր է, ազնվացման համար վոչ մի աշխատանք չի տարվել, անասունի կաթնատվությունը վոտորմելի չէ, միսը՝ նիհար ու անհամ, վոչ այնքան ախորժելի, ինքը՝ անասունը ուշ հասունացող և վոչ մարմնեղ, կենդանի քաշը՝ չափազանց ցածր։

Մյուս կողմից, գյուղատնտեսության և ոչ մի ճյուղ Հայաստանում այնքան չի տուժել իմպերիալիստական և ազգամիջյան կռիվներից, ինչպես անասնապահությունը։

Անասունների թիվը Հայաստանում (հազար գլուխներով)

Անասունի տեսակները	1913	1924	1925	1926	1927
Ձի	51,5	21,8	26,2	29,0	31,9
Խոշ. եղջյուր. կենդանի	893,0	632,6	702,8	781,0	858,5
Վորից՝ ա) լծկան	294,7	185,2	205,7	234,7	257,7
բ) կթան	267,9	183,8	204,3	217,2	238,9
Ոչխար	1,378,6	910,0	1,011,2	1,125,6	1,237,9
Այծ	186,0	185,8	206,4	260.0	286,0
Խոզ	23,6	27,2	30,2	33,5	36,8

Աղյուսակի տվյալներից մենք տեսնում ենք, որ բոլորից շատ տուժել է ձիաբուծությունը։ Այդ հետևանք է բազմաթիվ բռնապրավումների, պատերազմների ժամանակ։ 1927 թ. ձիերի քանակը վերականգնված է 61,9%-ով. վերականգնման մոտ է բոլոր եղջյուրավոր կենդանիների և ոչխարների քանակը։ Այծերի քանակը վերականգնված է, իսկ խոզաբուծությունը նախապատերազմյան մակարդակից անցել է։

Յեթե նկատի առնենք այն թափը, որով ընթանում է անասնապահության վերականգնումը, կարող ենք ասել, որ մոտ ապագայում լիովին կվերականգնվի մեր անասունների քանակը։

Ձիերով Հայաստանը յերբեք հարուստ չի յեղել։ Այս բացատրվում է նրանով, որ Անդրկովկասում դաշտային աշխատանքների համար վոչ թե ձի, այլ խոշոր եղջյուրավոր անասուն են գործադրում։ Այդ էլ հետաքրքրական է։ Հետաքրքրությունն այն է, որ Հայաստանում դաշտային աշխատանքները ձիերի միջոցով կատարելու համար հարմար ճանապարհներ չկան։ Ձիերով տարվող տնտեսությունը հաղորդակցության համար լավ խճուղիներ է պահանջում։ Ձին Հայաստանում բնակչության և հնձելու համար է ծառայում։

Մեր ձին մեր քարքարոտ ճանապարհներից հյուծված, ուժասպառ, վոդրմելի մի անասուն է. նրա քաշը և արագությունը՝ չափազանց աննշան։ Մեր ձիերը չեն ապնվացրած, այդ ասպարիզում բնակչությունը վոչ մի աշխատանք չի տարել։

Թե ինչ հաջողության են հասել Արևմտյան Յեվրոպայում այս ասպարիզում, իրրև որինակ բերենք Անգլիական պերշերոն կամ սուֆֆոլկ տեսակի ձիերը։ Սրանց կենդանի քաշը հասնում է 7 կվինտալի. կարող են

50 կվինտալ բեռ կրել խճուղու վրա և մի որում 200 կիլոմետր տարածություն անցնել։ Մեր ձիու կենդանի քաշը 2—5 կվինտալ է, տանում է 8 կվինտալ բեռ և արագությունն է՝ 80—100 կիլոմետր։

Խոշոր եղջյուրավոր կենդանիները մեր գյուղատնտեսության հիմքն են կազմում։ Սակայն սրանք ևս վորակապես ցածր են։ Կանոնավոր կերից զուրկ, մեր անասուններն ապրում են նեղ, մութ, կեղտոտ գոմերում, ամենավատառողջ պայմաններում։ Մի շարք շրջաններում կատարված ցուցապրական կերակրումները բերում են այն համոզման, վոր ներկա կթանների յերկու-յերեք անգամ ավելի արտադրանք կարելի է ստանալ։

Հոլլանդական կովի կենդանի քաշն է 6—8 կվինտալ և մի տարում 5000 կրուժկա կաթ է տալիս, մինչդեռ մեր կովի քաշը՝ 2—3 կվինտալ, կաթնատվությունը՝ տարեկան 800—1200 կրուժկա կաթ։

Յեթե մենք համեմատելու լինենք մեր վոչխարն արևմտյան Յեվրոպայի վորևե յերկրի վոչխարի հետ, առավելությունը մերի կողմը չէ։ Մի խուրումից մերինոս վոչխարից ստացվում է 8,2 կիլոգր. բուրդ։ Մասցու վոչխարները մինչև 125 կիլոգր. կենդանի քաշ ունեին։ Մեր սովորական վոչխարի քաշը 16—40 կիլոգր. և. յերկու խուրումից՝ 400 - 600 գրամ։ Մեր վոչխարի բրդի խտությունն է՝ մի քառ. սանտիմետրի վրա 10—14 բրդամազ, իսկ մերինոսի բրդի խտությունն է՝ մի քառ. սանտիմետրի վրա 40—50 բրդամազ։

Ինչ վերաբերում է խոզերին, այստեղ էլ համեմատությունը մեր ոգուտին չի խոսում։ Անգլիական յորկշիր և բերկշիրը խոզը կշռում է 100—500 կիլոգր., ունի խոշոր ծննդաբերություն, իսկ մեր խոզը՝ 80—100 կիլոգր. քաշ, ծննդաբերությունը պակաս և ամբ վորակը՝ անհամեմատ ցածր։

Հայաստանի անասնապահությունը լինտենսիվ ձևերով տանելու համար մեր պետությունը խոշոր աշխատանքներ է կատարել և տարեցտարի ավելի և ավելի յե ծավալում այդ աշխատանքները։

1922 թ. ընկ. Մյասնիկյանի ջանքերով Հայաստանում առաջին անգամ ձիաբուծարան է հիմնվում, վորի նպատակն է լավ, ապնիվ ցեղի ձիեր բուծել և բեղմնավորող կայանների համար լավ արտադրողներ մատակարարել բնակչությանը։ Խոշոր եղջյուրավոր անասունները վորակապես բարձրացնելու համար 1923 թ. Դիլիջանի և Լոռու-Փամբակի գավառներում ցեղական անասունների մեկական բուծարան է բացված։ Ներկայումս Լոռվա անասնաբուծարանն ունի 60-ից ավելի ապնվացրած կով, 4 յուղ և մոտ 15 գլխ։

Դիլիջանի անասնաբուծարանն ունի 18 ապնվացրած կով, 2 յուղ և 5 գլխ։ Այս անասնաբուծարանները կոչված են իրենց շրջանների անասուններն ապնվացնելու։ Գյուղական բնակչության 100 հոգին ընկնում է անասուն՝

	Ա. Ս. Հ. Մ-ում	Ս. Ա Հայաստանում
Ձի	24,1 գլուխ	2,4 գլուխ
Ասշ. եղջ. կենդանի . .	53,5 «	98,8 »
Կով	24,3 «	27,5 »
Վոչխար և այծ . . .	99,6 «	142,5 »
Խոզ	17,6 «	4,2 »

Աշխատանք

Եքսկուրսիաներ կազմակերպենք դեպի անտանաբուծարան և II Խորհրդային անտեսություններ։

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն Անդրկովկասյան հանրապետությունների մեջ մեղվաբուծական ամենազարգացած ոլորտն է համարվում։ Հայաստանի մեղրի բարձր վորակը (Լոռու և Ղարաքիլիսայի մեղրը լավագույնն են համարվում ամբողջ Անդրկովկասում) և մեղվաբուծության համար վերին աստիճանի նպաստավոր բնական պայմանները հիմք են ծառայում այդ ճյուղի խոշոր զարգացման համար։

Ինքը, կովկասյան գորշ գույնի մեղուն, վոր ապրում է Հայաստանում, մեղվի տեսակի լավագույն տարատեսակն է համարվում ամբողջ աշխարհում։ Այս մեղվի կնճիթը, այլ մեղուների կնճիթների համեմատությամբ, երկար է, և մեղուն այդպիսով կարողանում է կարմիր կորնգանի ծաղկից հյութ հավաքել։ Բնավորությամբ հեզ է, թաղումին բացառիկ ձննդաբեր, տոկուն և ջանասեր է։

Մեղվաբուծությունը Լոռում, Փամբակում և Դարալագյազում հնուց զարգացած է և բնակչության ամենասիրելի զբաղմունքի առարկան է։ Սակայն այս անտեսության ձևերը պրիմիտիվ են և ինտենսիֆիկացիայի կարոտ։ Մեղվաբուծությամբ զբաղվում են և Դիլիջանի, Լենինականի ու Զանգեզուրի գավառներում։

Պատերազմից առաջ փեթակների թիվը հասնում էր 100 000-ի։ 1921 թ. Հայաստանում մնացել էր 25,000 փեթակ։ Ներկայումս փեթակների թիվը հասել է 50 000-ի։ Մեղուները շատ են տուժում փառիա հիվանդությունից։

Հայաստանից յուրաքանչյուր տարի Լոռուց, Ղարաքիլիսայից, Դիլիջանից և Զանգեզուրից արտահանում են մոտ 5,000 փութ մեղր՝ Թիֆլիս, Բագու, Նախիջևան և Շարուր։

Հայաստանը կարող է ունենալ մինչև 500,000 փեթակ և արտադրել տարեկան 61–81 հազար կվինտալ ամենաընտիր մեղր և մեղրաժող. Մեղվաբուծության արտադրանքն է.

	1909—13 թ.	1923	1924	1925	1926
Արտադրանքը հազ. կվինտալ	28,3	9,8	7,9	7,8	14,5
Արժեքը հազ. ռուբլիներով	1,450	510,2	415,2	411,0	757.4

Մեղվաբուծական ընկերություններ գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի ամենաթույլ ճյուղերիցն են։ Վերջին տարիները մեղվաբուծության համար անբարենպաստ են, շատ և շատ տարածված մեղուների մեջ փառիա հիվանդությունը։ Այդ է պատճառը, վոր մեղվաբուծական ընկերությունները չեն ուժեղանում և հնարավորություն չեն գտնում մեղրի մթերումներ կատարել։ Ընկերությունները զբաղված են փեթակի դեմ պայքարելու և իրենց անդամների մեջ ստացվող վարկերը, մոմաթերթերը, գործիքները (փեթակները) և արկղներ բաժանելու աշխատանքներով

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում մեղվաբուծությունից վոչ պակաս ապագա ունի և շերամապահությունը, թեև ներկայումս այս ճյուղն այնքան էլ զարգացած չէ։ Շերամապահությունը շատ հեշտ և չափազանց ձեռնտու զբաղմունք է. մի քանի շաբաթվա ընթացքում այդ աշխատանքից բնակչությունը խոշոր չեկավուտա կարող է ունենալ։

Հայաստանի թե դաշտային և թե նախալեռնային գոտին, այսինքն՝ այնտեղ, վորտեղ թթենի ծառն է աճում, շերամապահական ռայոններ կարող են լինել։

1923 թ. Հողժողկոմատին կից հիմնված է շերամապահական կայան, վոր տեղերում ղեկավարում է շերամապահության և պրեմաժի (սերմի) գործը։ 1923 թ. պատրաստվել է 2500 տուփ շերամի սերմ (գրենա), 1924 թվին՝ 10,000 տուփ, իսկ 1925 թվին՝ 37,000 տուփ։

I և II խորհրդային անտեսություններում շերամապահությունը չերկրում զարգացնելու համար հիմնված է թթենիների 2 պլանտացիա։

Շերամապահության արտադրանքը (բոժոժ) Հայաստանում 1909—13 թ. թ. հասնում էր 982,8 կվինտալի, պատերազմից հետո այն ընկնում է և 1923–24 թ. հասնում է 410 կվ., 1924—25 թ.՝ 570,3 կվ., 1925—26 թ. 819.0 կվ., 1926—27 թ. 737 կվ.։

Հայաստանի շերամապահության հում նյութի (բոժոժի) վերամշակման համար կառուցված է Յերևանում մեծաքանակ գործարան 48 ավազանով և վերանորոգված է Ղափանի մանարանը։

Գյուղատնտեսական կոոպերացիայի այս ճյուղը զարգացած չէ։ Մեղրիում կազմակերպված է հնդհանուրների ընկերություն, վորը

1926 թ. 51,100 տուփ գրենա (շերամի սերմ) և պատրաստել։ Այդ գրենան վաճառքի չի հանվել Հայգյուղկոոպի միջոցով։

Անցյալում (19-րդ դարու կիսին) Կովկասը գրենա չեր ժատակարարում հարևան և հեռավոր չերկիրներին։ Հետագայում Կովկասն իր շուկաները կորցրեց և այժմ խնդիր է առաջ գալիս կազմակերպել գրենաժի գործը և չեռ նվաճել կորցրած շուկաները։ Այդ կարող է անել կոոպերացիան։

Ուշադրություն

Կազմակերպեցեք գարնանը ձեր գյուղում շերամի խնամքը։ Ստացած բոժոժը պահեցեք ձեր թանգարանում։

ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թռչնաբուծությունը Հայաստանում արդյունաբերական բնույթ չի ունեցել։ Կարելի չէ ասել, որ այս ասպարիզում Հայաստանը նույն իսկ իր հարևան Վրաստանից շատ չեռ է մնացել, մինչդեռ գյուղատնտեսության այդ ճյուղը Հայաստանում ամենանպաստավոր պայմաններն ունի և մեծ ծավալներ կարող է ստանալ։

Ընտանի թռչունների այնպիսի տեսակները, ինչպես որինակ, բադերը և սագերը շատ քիչ են պահում. հնդուհավերը մեզ մոտ հաժարյա հազվադյուտ են։ Մեր ամենատարածված ընտանի թռչունը տեղական հավն է, որ իր ձվաբերությամբ աչքի չի ընկնում։ Սովորաբար մեզ մոտ թռչնաբուծությամբ կանայք են պարապում, տղամարդիկ այդ անտեսության վրա արհամարհանքով են նայում։

Ընտանի թռչունների ընդհանուր քանակն ըստ տարիների ցույց է տալիս, որ այդ ճյուղը մեզնում իսկապես արհամարհված է.

Տարի	Հավ	Սագ	Բադ	Ընդամենը
1913	1.661.200	46.000	17,200	1,725,000
1924	878,300	24,000	9,100	912,000
1925	1,058,300	29,000	11,000	1,049,000
1926	1,248,000	35,000	13,000	1,296,000
1927	1,438,400	40,300	15,000	1,494,000
%%-ները	96%	2,7%	1%	100%

Այս տվյալներից չերևում է, որ թռչնաբուծությունն էլ մատնանշած ժամանակամիջոցում նույն շարժումն է ունեցել, ինչ գյուղատնտեսության այլ ճյուղերը և որ ընտանի թռչուններով Հայաստանը միշտ աղքատ է չեղել—մի շնչին ընկնում է 1,5 թռչուն։

Մինչդեռ առաջադեմ չերկրներում թռչնաբուծությունը տնային շրջանակներից դուրս է չեկել և խոշոր արդյունաբերական բնույթ ստացել։ Տարին բերված տվյալ տվյալները ցույց է տալիս առաջադեմ չերկրների թռչնաբուծության ծավալները.

Չերկրներ	Թռչունների քանակը
Միացյալ Նահանգներ	428,000,000
Կանադա	34,340,000
Անգլիա	29,032,000
Գերմանիա	10,320,000
Դանիա	17,803,000
Բելգիա	6,000,000

ՌՍՖՍՀ Հանրապետության անտեսության մեջ թռչնաբուծությունն ահագին տեղ է բռնում։ 1913 թ. արտահանված են 110 միլիոն ռուբլու թռչնաբուծական մթերքներ։ Այս արժեքի մեջ և արտահանված ձվերի արժեքը, որոնց քանակը 1913 թ. հասնում եր 3 ու կես միլիարդի։

Մեզնում թռչնաբուծությունը բոլորից շատ զարգացած է Լենինականի, Լոռի-Փամբակի, Նոր-Բայազեդի և Դիլիջանի գավառներում։ Այստեղից արտահանում ելին տարեկան մոտ 20 միլիոն ձու թե Յեվրոպա և թե Անդրկովկասի խոշոր քաղաքները։

Մեր հավերը նիհար են, թեթև քաշ ունեն և ձվաբերությունը տարեկան 50—60-ից բարձր չէ, մինչդեռ արտասահմանում ապնիվ ցեղերի հավերը թե մարմնեղ են և թե ձվաբերությունը բարձր —200 հատ։

1907 թ. Միացյալ Նահանգների մորթած թռչնից և ձվերից ավելի մեծ չեկամուտ են ստացել, քան ցորենի ընդհանուր բերքից։ Իզուր չեն ասում ամերիկացիները. «Հավերը խոտը թղթադրամ են դարձնում, ավազից՝ արծաթի հատիկներից, վոսկի փող են կտրում»։ Մեր հեքյաթի «վոսկե ձու» ածող հավն այնքան էլ չերևակայության արդյունք չէ։ Ամերիկացիներն այդ հեքյաթն իրականացրել են և ահա թե ինչպես։ Միացյալ Նահանգներում ու Յեվրոպայում թռչնաբուծությունը դրված է մեխանիկական հիմունքների վրա. թխսկան հավն անցյալի սեփականությունն է դառնում և նրան փոխարինում է ինկուբատորը, այսինքն մեխանիքական պահարանը, որտեղ շոգու միջոցով չերմության որոշ աստիճան պահպանելով՝ ձվերը հասունանում և ճաեր են բաց թողնում։ Մինչդեռ մի թխսկան հավ 21 որում 10—15 ճուտ է հանում մի ինկուբատոր միանգամից հարյուրավոր ճաեր է բաց թողնում։

Միացյալ Նահանգներում այդ հիմքերի վրա չե դրված արդյունաբերական թռչնաբուծությունը, որտեղ թռչունների հատուկ գործարաններում միլիոններով թռչուններ են անվում։

Այս գործարաններում նույնիսկ թռչունների կերակրումը մեքենայի միջոցով և կատարվում։

Հայաստանի թռչնաբուծության արտադրանքն ըստ տարիների.

	1909—13	1924	1925	1926	1927
Թռչուններ (հազ. հատ)	1.725	912	1.049	1.296	1.494
Ձու (հազ. հատ)	63.965	40.744	48.048	55.390	60.000
Արժեք (հազ. ռուբլ.)	1,634,7	1038,4	1.224,4	1,414,6	1560

Թռչնաբուծությունը մուտք է արել և գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ, սակայն դեռ շոշափելի գործունեություն կոոպերացիայի ցանցի մեջ ցույց չի տվել։ Ընկերությունները մեծ մասամբ կազմակերպված են դեղջկուհիներից և խոստանում են մեծ ապագա՝ մեր անտեսության այդ ճյուղի զարգացման և կոոպերացման գործում։ Հայգյուղկոոպը արամադրել է չերկու թռչնաբուծական ընկերություններին 64 ավնվացեղ թռչուններ։ Ընկերությունների համար ինկուբատորներ են պատվիրված թռչուններ բազմացնելու համար։

Ուշադրություն

1. Կազմակերպեցեք ձեր գյուղում ավնվացեղ թռչնաբուծություն։

2. Ձեր քաղաքում կամ շրջանում ընտանի թռչունների ցուցահանդես կազմակերպեցեք։

ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը խոշոր ջրատարներ չունի, ուստի և ձկնորսությունը Հայաստանի անտեսության մեջ համեստ տեղ է բռնում։

Միակ ջրամբարը, որը և կազմում է Հայաստանի ձկնորսական ռայոնը, այդ Սևանա լիճն է։ Լիմը հարուստ է ընտիր ձկնեբով. սակայն ձկների տեսակները շատ չեն։ Ձկների հետևյալ տեսակ՝երը կան՝ իշխան, գեղարքունի, կողակ, խրամուլի և կարմրախայտ։ Վերջերս փորձեր են արված և այդ փորձերը մեծ հաջողությամբ են պսակված՝ Սևանա լճի ջրերում բազմացնել Լագոդա և Ձուդ լճերից տեղափոխված սիգ ձուկը։

Նկատված է, որ վերջին տարիները Սևանա լճում համեմատաբար քիչ ձուկ է որսվում։ Դարի սկզբում տարեկան 16,3—16,8 հազար կվինտալ ձուկ էր որսվում, իսկ ներկայումս մոտ 50 տոկոսով պակաս։

Սևանա լիճը ձկնատնտեսական տեսակետից ուսումնասիրելու և ձկնային անտեսությունը բարելավելու համար 1923 թ. Հայաստանի Հողժողկոմատը ձկնաբուծական կայան հիմնեց։ Կայանի գլխավոր նպատակն է ուսումնասիրել լճի ձկների կենսաբանությունը։ Կայանը տեսական աշխատանքներ է ձեռնարկում լիճն, իբրև ջրամբար, բազմակողմանի ուսումնասիրելու և որսի գործիքների վերաբերյալ փորձեր է անում։

Իշխան ձկնով լիճը հարստացնելու նպատակով Նոր-Բայազետում ձկնաբուծական դործարան է հիմնված, որը տարեկան 10 միլիոն հատ մանր իշխան պիտի մատակարարի լճին։ Լիճը սիգ ձկով հարստացնելու նպատակով Լագոդա և Ձուդ լճերից բերմնավորված ձկներ են բերվում և տարեկան մոտ 2,000,000 հատ ձկնկիթներ ջուրը գցվում։

Սիգ ձուկը մեծ հաջողությամբ է զարգանում Սևանա լճում. թերևս ավելի լավ, քան իր հայրենիքում։ 1926 թ. արդեն սկսված է սիգի որսը, գրաված է 10,000 հատ սիգ։ Ապետած Սիգը չափազանց համեղ կերակուր է և մեծ ընդունելություն է գտել Երևանի շուկայում։

Ստորև բերված թվերը ցույց են տալիս Սևանա լճի ձկնորսության արտադրությունն ըստ տարիների.

	1909-13	1923	1924	1925	1926
Արտադրանքը հազ. կվինտ.	13,1	3,3	4 9	6,5	8,2

Հայաստանի մյուս լճերի և գետերի ձկնորսությունը շատ աննշան է։

Ձկնաբուծությունը շատ է տարածված առաջադեմ յերկիրներում։ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում ջուրն է գցվում տարեկան 5 միլիարդ ձկնիկ։ Արևմտյան Յեվրոպայում ձկներ են բազմացնում վոչ միայն ձկներով աղքատ բնական ջրերում (գետերում և լճերում), այլև մինչև անգամ ջրանցքներում և արհեստական ավազաններում։ Այդպիսի արհեստական ավազաններ, որոնք ձկնատնտեսական նշանակություն ունեն, Բոհեմիայում 5 հազար հեկտար տարածություն են բռնում։

Ուշադրություն

1. Անդամատուեցեք վորևե ձուկ և ծանոթացեք ձկան մարմնի կազմությանն։

2. Կազմակերպեցեք եքսկուրսիա դեպի Սևանա լիճը և ձկնաբուծական կայանն ու գործարանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ

ԱՆՏԱՌԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անտառը շատ մեծ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության մեջ։ Անտառը հայթայթում է մի շարք մթերքներ՝ մարդկանց կարիքները բավարարելու համար, այն է՝ շինարարական նյութեր, վառելափայտ, կուպր և փայտային նյութ՝ թուղթ պատրաստելու համար։ Անտառանյութից կահ-կարասիք, գործիքներ և ատաղձեն են պատրաստում և այլն։

Սակայն միայն սրանով չի սահմանափակվում անտառի նշա-

նակութիւնը։ Անտառը կլիմայական խոշոր նշանակութիւն ունի երկրի համար։ Անտառը երկրի մթնոլորտային տեղումներից գոյացած ջրերը հավաքում, պահպանում և կանոնավոր կերպով բաշխում է։ Իր տերևներով ջուրը գոլորշիացնելով, նա շրջապատող ոդի հարաբերական խոնավությունն է բարձրացնում և ձգում է իրեն հեռվից յեկած ամպերը և այդպիսով մեղմացնում երկրի կլիման։ Թափվող մթնոլորտային տեղումները նա հավաքում է։ Անձրևն անտառում ծծվում է հողի մեջ թե ծառերի արմատների շուրջը և թե անտառի խոտեղենի հյուսվածքի մեջ. ձյուռը յեկած ձյունը, արեգակի ճառագայթներից անտառի ծառերի սաղարթներով պաշտպանված լինելով, չի անցնում և, թերևս, մեկ ամսով ավելի յերկար է պահպանվում, քան տափաստանի վրա։ Յեթե անտառը չը լիներ, թափվող անձրևը և հալչող ձյունը ժամանակ չեյին ունենալ հողի մեջ ծծվելու, այլ թեք մակարդակների—գարիվայրերի վրայով հոսելով՝ կթափվեյին գետակները, վորոնք ժամանակավորապես վարարելով, ավերածություններ պատճառող հեղեղներ կկազմեյին, յերկրի ջրերը գետերի միջոցով յերկրից հեռավոր ծովերը կթափվեյին և թափված ջրերը չեյին ոգտագործվի յերկրի՝ իրեն համար։ Լեռնալանջերում հողմնահարությունից գոյացած հողը պահպանվում է անտառի ծառերի արմատների և խոտերի միջոցով։ Անտառազուրկ լեռնալանջերի վրա գոյացող հողը տեղում չի մնում. թափվող ջրերը լվանում տանում են այդ հողը, գլում ձորերի մեջ հոսող գետակները, վորոնք պղտորվում են, հողը տանում, հեռու քշում։ Անտառը պաշտպանում է յերկիրը քամիներից և հողը չորացնելու նրանց ազդեցությունը մեղմացնում է։ Անտառապատ յերկրներում գետերը կանոնավոր սնունդ են ստանում և գետերի ջրառատությունը պահպանվում է ամբողջ տարին, այնինչ անտառազուրկ յերկրներում, գարնան ձյունը հալչելիս, գետերը վարարում, հեղեղներ են առաջացնում և գյուղատնտեսությանն անպիտան վնասներ տալիս։ Հեղեղները կարճ ժամանակում վերջանում են, ջրերը հեռացվում են յերկրից և գետերը ջրերով աղքատանում։ Այդպիսով անտառը ջրապահական և ջրաբաշխական անպիտան նշանակություն ունի։ Անտառի այդ խոշոր նշանակությունն աչքի առաջ ունենալով, Խ. իշխանությունն առանձին դեկրետով վերացրեց անտառի մասնավոր սեփականությունը, հռչակելով այն հանրապետության գույք։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՎԻՃԱԿԸ

Անդրկովկասյան հանրապետություններից անտառներով ամենահարուստը Հայաստանն է։ Միայն Վրաստանի անտառների տարածությունը 2,468,3 հազ. հեկտ. է և նրա անտառոտությունը՝ 26% Ադրբեջանի անտառների տարածությունը 1.247.7 հեկտար է և անտառոտությունը՝ 14%։ Հայաստանի անտառներն 353,3 հազ. հեկտ տարածություն են բռնում, վորից ծառատունկով բռնված է մոտ 246,1 հազ. հեկտար, իսկ մնացած 109,254 հեկտ. նոսրացած թփուտներ են, անպետք հողեր և բացատներ։ Հայաստանի անտառոտությունն է 7 տոկոս։

Նախապատերազմյան շրջանում Հայաստանի ներկա սահմաններում անտառների տարածությունը հավասար էր 437,000 հեկտար։

18-րդ դարում Հայաստանի անտառներն էլ ավելի մեծ տարածություն են ունեցել։

ԽՍՀՄ-յան անտառը բռնում է 983 միլիոն հեկտար տարածություն և նրա անտառոտությունը միջին հաշվով հավասար է 36 տոկ.։

Այդպիսով Հայաստանը կարելի յե դասել անտառազուրկ յերկիրների շարքը։

Պատերազմը և նրան հաջորդող ազգամիջյան կռիվները Հայաստանի անտառին անուղղելի վնասներ պատճառեցին։ Հակոզության բացակայության պատճառով, անտառները մի քանի տարի շարունակ չենթարկվեցին անխնա վոչնչացման ու հափշտակման։

Մերձանտառային շրջանների բնակչությունը հնուց ի վեր սովոր է ձմեռն իր անասունն անտառում պահել՝ անտառները ձմեռային արոտավայրեր դարձնելով։ Հնարավորություն չունենալով ձմեռն անասունը գյուղում պահելու, գյուղացիք ոգտվում են անտառում կիրճերի և լեռների հարավային արեգունի կողմերում աճած խոտով։ Այժմ Հայաստանի անտառներում հաշվում են 471 ձմեռանոց 5493 դոմով։ Այս ձմեռանոցներում պահվում է մինչև 75 հազար խոշոր և մանր յեղջյուրավոր անասուն։

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր այդ շրջաններում անտառները վոչնչանում են և նրանց բնական նորոգումը չի կարող տեղի ունենալ։

Հայաստանի Ժողկոմխորհը վորոշել է 3 տարվա ընթացքում ամբողջովին վերացնել ձմեռանոցները, հնարավորություններ տալով գյուղացիներին իրենց գոմերն անտառից հեռու և ապատ վայրեր տեղափոխելու։

Ամռան ամիսներին Ադրբեջանից, Վրաստանից և Հայաստանից ամառային արոտավայրերն են բարձրանում մինչև 300,000 գլխ. անասուն, խոշոր յեղջյուրավոր կենդանիների վերաճած)։ Այդ անասունները 50 հազար քոչվորների հետ միասին անցնում են անտառների միջով և ապրում յենթալպյան գոտու անտառների կողքին։ Այս անտառների ծլերն ու մատ-

*) Մանր անասունն արտահայտված է խոշորով՝ 10 : 1-ի հարաբերությամբ։

դաշը անտառները կրծում են, քաշվորները փչացնում, ուստի և անտառը հրճատվում և իր բարձր սահմանի կողմից ևս։

Հետևյալ տախտակը ցույց է Հայաստանի անտառների անմխիթարական պատկերը*).

Մինչև քան տարեկան ծառեր համարյա չկան։

Մինչև 60 տարեկան ծառերը կազմում են անտառի 1,3 տոկոսը.

Մինչև 100 » » » » » 11,7 »

Ջառամյալ ծառերը » » » 87 »

Այդպիսով մենք տեսնում ենք, որ Հայաստանի անտառը չնչին չափով և չեղել անխնա վոչնչացման, նրա տարածությունը ծայր աստիճան կրճատված է և նրա գոյությունը վտանգի մեջ է. նա նման է անժամանակ ծերունու։

Խորհրդային իշխանությունը դեռևս 1922 թվից ձեռք է առնում վերականգնական միջոցներ՝ վերջ տալու անտառի այդ աննեղելի վոչնչացմանը։ 1922 թվին նա հրատարակում է՝ ա) Ինքնակամ հատումներ կատարելը և անտառներ արածացնելն արգելող և պանցառտներին քրեական պատասխանատվության չենթարկելու դեկրետ և բ) Արդյունկոմատի կողմից ժողտարաններին տրված շրջաբերականը՝ հերթից դուրս քննության առնելու անտառային որինախախտումները։

Միայն արգելքներով չի կռվում Խ. իշխանությունն անտառի վոչնչացման դեմ։ Նա ձեռնարկում է նախ և առաջ անտառների կառավարման գործը, կազմակերպում է անտառային տնտեսությունն և անտառաշինարարությունը։

Հայաստանի անտառային տնտեսությունը բաժանված է 11 անտառատեսության։

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անտառային տնտեսության նպատակն է՝ այնպիսի մի ձև ընդունել, որն ապահովի անտառի փայտեղենի ամբողջ բերքի ոգտագործում տարեցտարի, անընդհատ։

Անտառային տնտեսությունը ապրնտել վարելու համար անհրաժեշտ է անտառաշինարարական աշխատանքներ կատարել։ Այդ նշանակում է՝ ուղումնասիրել անտառային տարածությունը, անտառի հատման չեզոնաձկները, հատումների տեղերն ու կարգը վորոշել և անտեսական ծրագիր մշակել։

Անտառաշինարարական աշխատանքները կատարված են հետևյալ անտառատեսություններում.

Ախթալայի	անտառատեսություն	. .	56100 հեկտ.
Դարաքլիսխայի	»	. .	22265 »
Իջևանի	»	. .	25873 »
Կոտայքենդի	»	. .	43650 »
	Ընդամենը		147888 »

Այսպիսով հետազոտված և բարեկարգված է Հայաստանի անտառների 39%-ը։ Անտառների 61%-ի անտառաշինարարությունը դեռ իր հերթին է սպասում։ 1925–1927 (առ 1 հունվ.) թ. թ. ժամանակամիջոցում Հայաստանի անտառներից բաց և թողնված 46,2 հազ խոր. մետր չինափայտ և տաղաձափայտ և 146,6 հազ. խոր. մետր վառելափայտ, վորից գեղչով 45,5 հազ. խոր. մետր։

Այդ ժամանակամիջոցում անտառային չեկամուտը հավասար է եղել 361.172 ռ., վորից 1924/25 տ. 134.879 ռ., իսկ 1925/26 թ. 226.293 ռ.։

Անտառային անտեսությունը ծախք ունեցել է մոտ 188 հազ. ռուբլի։

Զուտ արդյունք է ունեցել՝ 36 հազ. ռուբլի։ Ավելացնելով դրա վրա ձրի և գեղչով բաց թողնված փայտեղենի արժեքը՝ 37.329 ռ., ընդհանուր ոգուտը հավասար կլինի 75.329 ռուբլու։

ԱՆՏԱՌԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի նման լերկրում, վորտեղ անտառայնությունը 7—9%-ից վեր չի բարձրանում, վորտեղ կլիման խիստ ցամաքային է, ամենատրտային տեղումները՝ անբավարար, անտառաբուծությունը, այսինքն անտառային տարածության ընդլայնումը խոշորագույն և կարևորագույն նշանակություն ունի։

Ծրագրված է անտառացման աշխատանքներ կատարել՝ ա) այն անտառներում, վորտեղ բնական նորոգում չկա, բ) անտառային բացատներում, վորոնք 27,312 հեկտ. տարածություն են բռնում և գ) այս կամ այն անտառատեսության տարածությունն ընդարձակել։ Ծրագրված է մինչև 1930 թվին անտառապատել մինչև 1638 հեկտար բացատ։

Անտառաբուծության գործի հիմքը դրվել է 1924 թվին, յերբ հիմնվեցին չորս անտառային տնկարաններ՝ Յերևանի ու Ծաղկաձորի, Լոռու և Դարաքլիսխայի անտառատեսություններում։

Այժմ Դարաքլիսայի տնկարանում կան մինչև 80.000 հատ յերկու տարեկան և 100,000 հատ մի տարեկան տունկեր, զանազան տեսակի, Լոռու տնկարանում՝ մոտ 550.000 հատ սոճի, զարդաջ,

*) Տես «Գյուղատնտեսական կյանք» 1927 թ. № 1, Ա. Մուշեղյանի հոդվածը. «Հայաստանի անտառային տնտեսությունը 1925—26 թվին» խորագրով։

թղկի և աղն։ Յենթադրվում է, որ տունկերը կարելի չէ բաց թողնել 1927 թվից։ Տունկեր ձրիաբար տրամադրելը լայն չափով կը նպաստի գյուղացիության և, որ շատ կարևոր է, դպրոցական տանների կողմից կատարվելիք ծառատնկման։ Հայաստանը մի այնպիսի յերկիր է, որտեղ մի ծառ անգամ տնկելը կուլտուրական գործ է, և յուրաքանչյուր քաղաքացի պարտականությունն պիտի համարի այս կամ այն չափով իր մասնակցությունը ծառատունկի գործին։

1925 թ. գարնանից սկսած՝ Յերևան քաղաքի շրջակայքի սարալանջերի վրա սկսված է անտառապատման գործը։ Նույն ուղղությամբ փորձեր են կատարվում Արագածի լանջերին անտառապատելու։

Հայաստանում անտառապատման գործը հարվածային խնդիր է այս պետք է դիտակցի ամեն մի քաղաքացի։

Ուշադրություն

1. Գարնանը ծառատունկի տոնին ամենալայն մասնակցություն ցույց տվեք։ Նշանակեցեք ձեր հաշվեգրքույկում՝ քանի ծառ եք տնկել։

2. Գյուղացիների հետ զրույցներ ունեցեք անտառի նշանակության և այն խնամքի մասին, որ բնակչությունը պիտի ցույց տա անտառի վերաբերմամբ։

ՎՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Անտառային անտեսության հետ սերտ կապ ունի վորսորդությունը։ Հնում, ըստ յերևույթին, յերբ անտառային տարածությունը Հայաստանում անհամեմատ ավելի մեծ է յեղել, ժողովրդական անտեսության մեջ նկատելի տեղ է ունեցել և վորսորդությունը։ Այժմ անտառները կրճատվել են, և վորսորդությունն աննշան արդյունք է տալիս։

Հայաստանը կենդանական աշխարհով աղքատ չէ, թռչուններով նույնիսկ հարուստ կարելի չէ համարել։ Լինում են տարիներ, յերբ ձմեռներն այնքան մեղմ են, որ Հայաստանում մնում են ձմեռելու բազմաթիվ չվող թռչուններ, ինչպես ճահճային կռցար (бекас) մեծ ճահճային կռցար (дупель) և վայրի կռցար (вальдшнеп) բազերի բազմաթիվ տարատեսակներ, սագեր և արոտուլներ։ Հայաստանը չվող թռչունների մեծ ճանապարհն է։ Աշնանը և ձմեռը թռչունները Հայաստանի վրայով չվում են հարավ՝ դեպի Միջագետք, իսկ գարնանն այնտեղից յետ են դառնում։

Համեմատաբար հարուստ է Հայաստանը և կաթնասուն կենդանիներով։ Բայց, դժբախտաբար, շնորհիվ անտառների կրճատման, այդ կենդանիների թիվը սակավանում է։ Սակավանում է կենդանիների թիվը և շնորհիվ այն անկանոն վորսի, վորը տեղի է ունենում Հայաստանում։ Վորսի ամոթաբեր այնպիսի ձևեր, ինչպիսիք են կենդանիներին թունավորելը կամ վառոդը պայթեցնելով գետերում ձուկ վորսալը, դժբախտաբար, հաճախ տեղի յեն ունենում Հայաստանում։

Վորսորդության համար սահմանված վորոշ կանոնները շատ տեղերում չեն կիրառվում հսկողության բացակայության պատճառով։

Դժբախտաբար, պետք է ասել, որ կաթնասուն կենդանիների վորոշ տեսակները տարեցտարի պակասում են, և այժմ հազվադյուտ են դարձել այնպիսի կենդանիներ, ինչպիսիք են՝ յեղջերուն, քարայծը (серна), վայրի մխրուքավոր այծը, վայրի վոչխարը և յղաքիսը։

Հասարակական հիմնված է բնության հուշարձանների պահպանության կոմիտեն, որի նպատակն է Հայաստանի բնության՝ կենդանական և բուսական աշխարհների այդպիսի հազվադյուտ ներկայացուցիչների պահպանությունը։

Գավառագիտական ընկերությունները, որոնց ցանցով այժմ պատած է Հայաստանը, այս ուղղությամբ մեծ դեր ունեն կատարելու։ Վորովհետև դպրոցները մտնում են իրրև բջիջներ, գավառագիտական ընկերությունների մեջ, ուստի աշակերտների անելիքներն այս հարցում առաջնակարգ նշանակություն են ստանում։ Յուրաքանչյուր աշակերտ գավառագիտական ընկերության անդամ լինելու իրավունք ունի և կասկած չկա, որ վոչ մի աշակերտ չի ցանկանա զրկվել իր այդ իրավունքից։ Բնության հուշարձանների պահպանության կոմիտեն և Ընության պահպանության կոմիտեն, այդ յերկու բարձր հիմնարկությունները, կյանքի յեն կանչված պահպանելու այն ամենը, ինչ մնացել է բնության անցյալի ստեղծագործությունից և մարդկային պատմությունից։

Հայաստանի անտառներում և այլ վայրերում վորսի հետևյալ կենդանիները են պատահում՝ վարազ (Յերևանի գավառ), բորենի (Ջուլֆայի և Յերևանի գավառ), գայլ, կովկասյան աղվես, արջ, կզաքիս, աքիս (лиска), յեղջերու, քարայծ, վայրի այծ և վայրի վոչխար, նապաստակ, և ինչպես ասացի, բազմաթիվ թռչուններ՝ բարձրասրուն, յեզերաբնակ, ջրահավեր, լողացողներ, մաշկոտաններ, Թանձրահավեր և այլն ևայլն թռչուններ։ Թռչուններով շատ հարուստ է Գիլլի լիճը և Մազրա գետի ավազանը, Սևանա լճի բարձրավանդակի հարավ-արևելյան մասը։ Դարալագյազում և Զանգեզուրում մեծ քանակությամբ աղվես և կզաքիս են վորսում, և մուշտակեղենը մթերում է Հայպետառը։

Վորսի և մուշտակեղենի ընդհանուր արդյունաբերության վերաբերյալ ճիշտ տեղեկություններ չկան։

Առաջադեմ յերկիրներում, որ. Կանադայում և Միացյալ Նահանգներում, վորտեղ վորսորդությունը խոշոր արդյունարերական նշանակություն ունի, վորսորդության հետ կապված է վորսաբուծությունը։ Բնության վրչ մի բարիք, ինչ ել վոր այն լինի՝ ձուկ, վորս, անտառ, մշակույթ և այլն, չի կարելի անվերջ շահագործել, առանց նրա ակունքները անելու համար հող տանելու։ Հակառակ դեպքում, վերաբերմունքը դեպի բնության բարիքները հափշտակողական կլինի։ Հափշտակողական, ավազակային վերաբերմունքի արդյունքն այն յեղավ, վոր անտառները ծայր աստիճան կրճատվեցին և, յեթե արվեստական վոռոգում չլիներ, Հայաստանի մեծագույն մասն անապատ կդառնար. նման վերաբերմունքի հետևանքով վորսը և ձուկը կրճատվել և, հողը ուժասպառ և յեղել և այլն և այլն։ Ռացիոնալ անտեսությունը պահանջում է, վոր մարդս մի ձեռքով ոգտագործելով բնությունը՝ մյուս ձեռքով նրա բարիքների ակունքները անուցանի, անտառը նորոգի, հողը պարարտացնի, ձկնաբուծությամբ ջրամբարների ձկների քանակային հավասարակշռությունը պահպանի և այլն, և այլն։

Վորսորդությունն ել պահանջում է ռացիոնալ վերաբերմունք։ Կանադայում ցանկապատում են անտառի մեջ վորոշ տարածություն և այսպիր տեղավորելով վորսի թանկարժեք տեսակները՝ նրանց բազմանալու ամենայն հնարավորություն են տալիս և բազմացած տերունդները ցած են թողնում արտ անտառը, վորպեսզի վորսի հավասարակշռությունը չը խախտվի։

Ա. իշխանությունը ժողովրդական անտեսության մեջ կիրառում է բոլոր ռացիոնալ ձևերը և այդ ձևերի կիրառման կոչ և անում իր քաղաքացիներին։ Գավառապիտական ընկերություններն են, վոր պիտի այդ ռացիոնալ ձևերը մտցնեն ազգաբնակության մեջ։

Ուշադրություն

1. Յեթե ձեր դպրոցը գավառապիտական ընկերության անդամագրված չե, անմիջապես անդամագրվեցեք և կապեր հաստատեցեք ձեր ուսուցչի միջոցով այդ ընկերության հետ։

2. Ձեռք բերեք գավառապիտական ընկերության, Բնության Հուշարձանների Պահպանության կոմիտեի և Հնության պահպանության կոմիտեի կանոնադրությունները և ծանոթացեք այդ կանոնադրություններին։

3. Ձեր ձեռքն ընկած սպանված թռչունների և կենդանիների էքսպլիկատները պատրաստեցեք և պահեցեք ձեր դպրոցի թանգարանում։

4. Յեթե ձեր գավառում կան բնության անձեռնմխելի վայրեր (заповедник), այցելեցեք այդ վայրերն՝ ուսուցիչների ղեկավարությամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Ուսումնասիրելով Հայաստանի գյուղատնտեսության տարբեր ճյուղերը, մենք տեսանք, թե ինչ հարվածներ են կրել այդ ճյուղերը իմպերիալիստական և մանավանդ ազգամիջյան պատերազմներից՝ 1914—20 տարիների ընթացքում։ Ա. իշխանությունը ժառանգություն ստացավ մի յերկիր, վորտեղ անտեսության ձևերը դեռ խառը ժամանակն եքստենսիվ եյին առանց բացառության, ազգաբնակությունը ոգեա, կրոնի և անոսիպաշտության խավարի մեջ խարխափող։ Այդ յերկիրը, շնորհիվ հիշած պատերազմների, բոլորովին քայքայված, և բնակչությունը սովի ժամանված՝ անցյալ Ա. իշխանության հոգատարության։ Ա. իշխանությունը բուժող ձեռքերով մոտեցավ այդ հիվանդ յերկրին և բնակչությանը։

1920 թվից մինչև մեր՝ արդի ժամանակը—1927 թիվը Ա. իշխանությանը հաջողվել է այդ ժողովրդի անտեսությունը հասցնել նախապատերազմյան մակարդակին, կամ վերջինիս մոտեցնել։

Ներքև բերված աղյուսակում դրված է Հայաստանի գյուղատնտեսության բոլոր ճյուղերի արտադրանքի արժեքը նախապատերազմյան հազ. ռուբլիներով.

ՃՅՈՒՂԵՐ	1909-13	1923-24	1924-25	1925-26	1926-27
Հողագործություն	28,888,0	16,911,0	19,796,4	20,934,4	24,988,2
Ընդ. գումարի % %	64,3 %	62,5 %	63,9 %	62,6 %	63,9 %
Կենդնբծություն.	15,422,4	9,876.8	10 871,5	12,024,6	13,583,1
Ընդ. գումարի % %	34,3 %	36,5 %	35,1 %	36,0 %	34,8 %
Անտառ, ձկն. վորս.	648,8	272,4	319,0	465,1	526,5
Ընդ. գումարի % %	1,4 %	1,0 %	1,0 %	1,4 %	1,3 %
Ընդ. գումար	44.959,2	27,060,2	30,986,9	33,424,1	39,097,8
Ընդ. գում. % %	100 %	100 %	100 %	100 %	100 %

1926/27 թվ. Հայաստանի գյուղատնտեսության արտադրանքի արժեքը նախապատերազմյան արժեքի 88%-ն է։ Կարելի յե հուսալ, վոր 1927—28 տարում գյուղատնտեսության արտադրանքը մինչ պատերազմյան մակարդակին կհասնի։

Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի արժեքն աս-

ատհայտվում է 39.097,8 հազ. ռուբլի։ Հիմնական դերն ընկնում է հողագործությանը, որին ընկնում է 24.988,2 հազ. ռուբլի, այսինքն՝ ընդհանուր արտադրանքի արժեքի 63,9 %-ը։

Կենդանաբուծությունը 13.583,1 հազ. ռուբլի արժեք է տալիս, կամ ընդհանուր արժեքի 34,8 %-ը։

Մնացածը՝ անտառային տնտեսությունը, ձկնորսությունը և վարսորդությունն աննշան դումար են տալիս՝ 526,5 հազ. ռուբլի կամ 1,3 %-ը։

1903—1906 թ. թ. բնակչության ամեն մի հոգուն ընկնում էր գյուղատնտեսության արտադրությունից 46 ռ. 34 կ.։ Աղքատացման հետևանքով 1925-26 թ. մի հոգուն ընկնում է 37 ռ. 85 կ., իսկ 1926-27 թ. 42 ռ. 96 կ.։

Խ. Ս. Հ. Մ.-յան մեջ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքից մարդապտխ ընկնում է 91 ռ. 18 կ.։

Ուրեմն մեզնում մի հոգուն գյուղատնտեսության յեկամուտ 2 անգամ ավելի պակաս է ընկնում քան Միության մեջ։ Այս հարաբերությունը թեթև տատանումներով մինչև հիմա էլ պահպանվում է։

		1909-13	1923-24	1924-25	1925-26	1926-27
Գյուղատն. արտադրան. նախապատ. միլիոն ռուբլիներով	ԽՍՀՄ մեջ	12.826	8.858	9.535	11.306	11.902
Մի հոգուն ընկնում է		91 ռ. 80կ.	65 ռ. 71կ.	69 ռ. 04կ.	79 ռ. 95կ.	82 ռ. 12կ.
Գյուղատնտ. արտադրանքը նախ. հազ. ռուբլիներով	Հայաստանում	44.959,2	27.060,2	30,986,9	33.424	39.097,8
Մի հոգուն ընկնում է		46 ռ. 34կ.	32 ռ. 55կ.	36 ռ. 41կ.	37 ռ. 85կ.	42 ռ. 96կ.
Ընչաքաժին %-ատ ԽՍՀՄ-ի ընչաքաժ.		50,47 %	49,53 %	52,73 %	47,34 %	52,26 %

Ահա, Հայաստանի գյուղատնտեսական վիճակը ներկայումս։ Մենք աղքատ ենք։ Մենք պետք է հարստանանք։ Հարստանալու հանապարհը մեզ ցույց է տալիս Սորբրգային իշխանությունը։ Այդ հանապարհն է՝ անգրագիտության վերացումը, գյուղատնտեսության բոլոր ճյուղերի ինտենսիֆիկացիան, աշխատանքի ռացիոնալիզացիան, մեխանիզացիան և կոլեկտիվիզացիան, այսինքն՝ կոոպերացիան։

Ուշադրեցեք

Աղյուսակների մեջ բերված ավյալները վերածեցեք դիագրամների և կախ ավեք ձեր դասարանի պատին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունագործություն կոչվում է մարդուս աշխատանքը, որն ուղղված է յերկրի խորքերից հանքեր ստանալու և, ինչպես այս վերջիններս, այնպես և այլ բնական հում նյութեր վերամշակման յենթարկելու մարդկային հասարակության բազմատեսակ կարիքները բավարարելու համար։

Բնական հում նյութ ասելով՝ մենք հասկանում ենք այն բոլոր նյութերը, որ մարդ ստանում է բնությունից ոգտագործելու համար։ Այդ նյութերը մարդ վերցնում է թե անկենդան բնությունից (հանքեր, հանքանյութեր, շինարարական քարեր և այլն) թե կենդանի բնությունից՝բուսական աշխարհից(հողագործության մթերքներ) և կենդանական աշխարհից։

Նյութերը կոչվում են հում, որովհետև նրանք անմիջապես մարդու կողմից ոգտագործվել չեն կարող, այլ պետք է վերամշակման յենթարկվեն։ Որինակ՝ հանքանյութը հում նյութ է, նրանից մարդս ստանձին բարձր վառարաններում մետաղներ է ձուլում և մետաղներից գործարաններում պատրաստի ապրանքներ պատրաստում (մեքենա, ասեղ, գրիչ, գործիք և այլն)։ Հում նյութեր են և գյուղատնտեսական մթերքները։ Որինակ՝ հում նյութ է ցորենը. այս վերջինս ալրաղացում աղվում, ալյուր է դառնում և ապա փուռում ալյուրից հաց է թխվում. հում նյութ է շաքարի ճակնդեղը, որից շաքար են պատրաստում։ Այդպես, բամբակից գործվածքներ են գործում, կտավհատից ձեթ են շինում, կենդանու կաշին մշակում են և նրանից կոշիկ են կարում և այլն և այլն։

Տարբերում են լեռնային արդյունագործությունը, որն ուղղված է յերկրի կեղևից ոգտակար հանքեր ստանալու և հանքանյութերից մետաղներ ձուլելու և մշակող ական արդյունագործությունը, որն ուղղված է բնական հում նյութերը գործարաններում վերամշակման յենթարկելու։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ՊՂԻՆՁ

Հայաստանը պղնձի հանքերով շատ հարուստ է։ Այդ հանքերը կենտրոնացած են յերկու գավառներում՝ Լոռի Փամբակում՝ Ալլահվերդու խումբը և Զանգեզուրում՝ Դաֆթարի խումբը։

Ալլահվերդու խումբը.— Այս խմբի կենտրոնն են Ալլահվերդու պղնձահանքերը, վորոնք յերկաթուղագծի համանուն կայարանից 3,2 կիլոմետր հեռավորության վրա յեն գտնվում։

Այս հանքերից 19,2 կիլոմետր հեռավորության վրա գտնվում են Շամբլուղի հանքերը։ Շամբլուղի շահագործումը սկսված է 1770 թվից, վորից թագավոր Հերակլի ժամանակ։ Յերկրորդ հանքավայրն Ախթալա կայարանի մոտ է։ Շահալի կայարանի մոտ 6,4 կիլոմ. հեռավորության վրա Շահալի—Եյլիորի և 3,2 կիլ. հեռավորության վրա՝ Սիսի-Մադանի հանքերն են գտնվում։

Այս խմբի պղնձահանքի պաշարները, նամանավանդ առաջին յերկու հանքավայրերինը, շատ մեծ են։ Հանքի մեջ պղնձի պարունակությունը 2,5% է։ Բայց պղնձից, հանքի մեջ պարունակվում են և վոսկի ու արծաթ։ Վոսկին մի տոննի մեջ 0,6—0,8 գրամ է, իսկ արծաթը՝ 36—57 գրամ։ Ալլահվերդու պղնձահանքերն այն առավելությունն ունեն վոր գտնվում են յերկաթուղու վրա։ Այդ հանքերը շահագործվում են ներքին Ֆրանսիական կապիտալով և բավականին լավ են սարքավորված։ Պատերազմի ընթացքում հանքավայրերը մեծ չափով վնասվել են։

Զանգեզուրի Դաֆթարի խումբը.— Այս հանքավայրերը Զամդուր գետի միջին հոսանքի ավազանումն են գտնվում։ Այդ պղնձահանքերի շրջանի հարավային սահմանն է Արաքս գետը, արևմուտքից Զանգեզուրի լեռնաշղթան, արևելքից՝ Բարգուշետ գետը։ Ալյաթ Զուլֆա յերկաթուղագծի Բեկմանլու կայարանը գտնվում է 60 կիլոմետր հեռավորության վրա։ Ծրագրվում է հիշած կայարանից գետի հանքերը յերկաթուղու մի ճյուղ անցկացնել։

Ըստ յերկրաբանների վկայության, Դաֆթարի պղնձահանքերը խոշոր նշանակություն ունեն ոչ միայն Անդրկովկասյան, այլ և Միութենական մասշտաբով։

Այս խմբի մեջ մտնում են, ա) Սայադ-Դաղ լեռների հանքերը Բաշքենդ գյուղի մոտ բ) Գավարդի հանքավայրերը Գավարդի գյուղի մոտ, գ) Վերին Դաֆթարի, դ) Ներքին Դաֆթարի հանքերը, և ե) Բարաբաթում գյուղի հանքավայրերը։

Այս ռայոնի պղնձահանքերն ավելի հարուստ են պղնձի պարունակությամբ, վորը սահմանվում է 8%—16% միջև։

Դաֆթարի պղնձահանքերը շահագործվում են ինչ ֆրանսիական և տեղական կապիտալով։ Բայց շահագործումը գիշատիչ բնույթ ես կրում։ Շուտ հարստանալու տենդով տարված, գիշատիչները մշակում են միայն 8%-ից վոչ-պակաս պղինձ պարունակող հանքերը։

Այս հանքերի շահագործումն սկսված է 1848 թ. և տևել է մինչև 1918 թիվը։ Շահագործման սկզբից մինչև 1918 թիվը սահմանված է այս հանքերից 30.532 տոննն պղինձ։

1913 թ. սահմանված է Հայաստանի պղնձի յերկու շրջաններից.

Ալլահվերդու հանքերից		3794 տոննն.
Սիսի-Մադանի	,,	21,2 ,,
Դաֆթարի	,,	1305 ,,
	Ընդամենը՝	5120,2 տոննն.

Բանվորների քանակն այդ թվին յեղել է 4.400 մարդ։ Արտադրանքի արժեքը՝ 3.421 հազար վոսկի ռուբլի։

1923/24 թ. պղնձի արդյունաբերությունը գեռևս անկման վիճակում էր գտնվում։

Դաֆթարի պղնձահանքերը և ձուլարանները չեյին աշխատում։ Ալլահվերդու խմբում բուն պղնձի արտադրության վրա չեյին աշխատում, այլ աշխատում եյին յերկրորդական նյութեր ստանալու համար, այն է կարբիտ, ծծմբային և ազոտին թթուներ։

1924 թ. նոյեմբերի 7-ին սկսվում է Դաֆթարի հանքերի շահագործումը և ապա նույն աշխատանքները վերսկսվում են և Ալլահվերդու ռայոնում։

Դաֆթարի «Կարմիր Նոյեմբեր» ի հանքերը և գործարանները	1924/25	1925/26
Պղնձի հանածոյի ստացումը տոններով	1431,4	5664,9
Պղնձի ձուլումը ,,	505,5	747,5
Ալլահվերդու հանքերը և գործարանն.		
Պղնձի հանածոյի ստացումը	—	3848,0
Պղնձի ձուլումը	172,4	151
Պղնձի հրաքարի ստացումը	—	4064
Կարբիտի արտադրությունը	133,5	277
Ընդամենը պղնձի հանածոյի ստաց.	1432,0	9513,0
Պղնձի ձուլումը	669,8	798,2

Պղնձի արտադրանքի արժեքը		%	բանվոր. թիվը		%
1913	3.421 հազ. ռ.	100	4400 մարդ		100
1923/24	65,6 ,,	2	145 ,,		3,3
1924/25	449,4 ,,	13	792 ,,		18
1925/26	583,9 ,,	17	2082 ,,		47,3

Թե Ղաթարի և թե Ալլահվերդու պատերազմից մեծապես տուժած հանքավայրերի և գործարանների վերանորոգումն ու կրկին սարքավորումը մեր պետության առաջին ծախսերն են նստել և նրանից առաջին չանքեր պահանջել։ Այժմ կարելի է ասել, որ մեր պղնձի արդյունաբերությունը կայուն հիմքերի վրա է դրված, և մոտ ապագայում մենք ոչ միայն նախապատերազմյան քանակներին կհասնենք, այլ ավելի մեծ ծավալով արտադրանք կունենանք։ Հույս կա որ, հոգալյա ծրագրի իրականացումից հետո, Հայաստանի պղնձի արտադրությունը կհասնի 6552 տոննի, որը Միության պղնձի տարեկան արտադրության (արտադրվում է 32.760 տոնն) 20%-ը կլինի։

Ա. Հախատուր

Եքսկուրսիա կազմակերպեցեք Հայաստանի պղնձահանքավայրերը։ Ծանոթացեք արտադրության պրոցեսներին։ Հավաքեցեք ձեր թանգարանի համար հանքերի նմուշները և պղնձի ձուլման նյութերը։

ՊԵՄԶԱ ԿԱՄ ՉԵՉԱՔԱՐ

Պեմզայի գործնական ոգտագործումը բազմատեսակ է։ Պեժան գործադրում են փայտագործության, մետաղագործության ասպարիզում, ապակուց զանազան իրեր պատրաստելիս, լիտոգրաֆիկ գործում հղկելու համար, գործադրում են նաև ռեակտիվ ու կաշվի արդյունաբերության և ներկարարության մեջ, ճենապակե ամանեղեն պատրաստելիս, շինարարության ասպարիզում և այլն։

Պատերազմից առաջ պեմզա ստացվում էր Ղարսի շրջանում՝ տարեկան 400—500 տոննի, որը և Ռուսաստանի կարիքների 25% էր բավարարում. մնացած պեժան ներմուծվում էր՝ Գերմանիայից, Անգլիայից, Իտալիայից և Հոլանդիայից։

1913 թ. ներմուծված է Ռուսաստան 1630 տոննի պեժա, 152.143 ռ. արժողությամբ։

Պատերազմից առաջ Հայաստանում պեմզա չէր ստացվում, այժմ Միության ամբողջ շուկան բացված է Հայաստանի պեժայի համար։

Հայաստանի պեմզայի շրջաններն են.

1. Անի համանուն կայարանից 6,4 կիլոմետր հեռավորության վրա՝ «Զագա» և 8 կիլոմետրի վրա՝ «Աբդուրաժան» հանքավայրերը պարունակում են մինչև 62,500 տոնն ընտիր պեմզա։ Անի կայարանից 6 կիլոմետր հեռու Ղոշավանք գյուղի մոտ գտնվում են մոտ 18,700 տոնն հանքեր, և տակավին չպարզված քանակության պաշարներ կան Քափանակ գյուղի մոտ։

2. Գյոթան-դաղի շրջան.— Նովոսիկոլաևկա և Սուխոյ-Ֆոնտան գյուղերի մոտ Յերևան—Դիլիջան տանող խճուղու վրա։ Պաշարներն այս շրջանում հսկայական են, սակայն պեժան շատ ցածր վորակի է և կարող է ոգտագործվել միայն ապակեգործության նպատակով։

3. Ծաղկաձորի շրջան.—Ներքին Ախտալի շրջան Կոնստանտինովսկոյե գյուղի մոտ. պաշարի քանակը տակավին պարզված չե։

4. Եջմիածնի շրջան.—Կարաջորան և Գյալաշամ գյուղերի մոտ. շատ բարձր վորակի չե, պաշարի քանակը դեռ պարզված չե։ Ալիքուշակ և Բաշ-Աբարան գյուղի մոտ գտնվող պեժան արդյունաբերական նշանակություն ունի։ Այս պեմզայի պաշարը հաշվում են մոտ 1.600.000 տոնն։

Այժմս Հայաստանից տարեկան 500 տոնն պեմզա չեն արտահանում։ Մեր պեմզան գնում է Մոսկվա, Լենինգրադ, Ն. Նովգորոդ, Կիև ու այլ քաղաքներ։ Պեժայի տոննը գնահատվում է 732 ռ.։

Ա. Հախատուր

Ձեռք բերեք պեմզայի նմուշներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԼ ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պղնձահանքեր կան Հայաստանի և այլ վայրերում։ Ղաթարի հանքերից 35 վերստ հեռավորության վրա, Փիրդովդան կոչված տեղում, մոտ 10925 հեկտ. տարածության վրա պղնձահանքեր են գտնվում, վորտեղ պղնձի պարունակությունը 21%-ի չի հասնում։

Պղնձահանքերով այդպես հարուստ մի վայր գտնվում է և Մխախանա գետի հովտում, հունական Նովո-Մեխայլովկա գյուղի մոտ։ Այստեղ մի ժամանակ կար պղնձաձուլարան, վոր այժմ չի գործում։

Ածխաթթու-կապարի հանքերով նույնպես հարուստ է մեր յերկիրը։

Դարալագյազի լեռնաշղթայի հարավային ճյուղավորությունների վրա, Յայջի գյուղից 2 վերստ հեռավորությամբ, Յենգիջա գյուղից 3 վերստի վրա Կոզլու-դարա կիրճում և Գյումուշ-խանա գյուղից նույնպես 3 վերստի վրա արծաթա-կապարի հանքեր կան թաղնված։

Հնում Գյումուշ-խանայի հանքերը շահագործվում էին, և այստեղ այժմ կարելի է գտնել յերբեմնի հնոցների և «Փողհանք» գյուղի ավերակները։

Կապարի հանքեր գտնվում են՝ Բղովդալ և Շահ-դաղ լեռներում։ Կարմիր, մագնիսային և քրոմի յերկաթահանքեր ու կոբալտի հանքեր գտնվում են Շահ-դաղ լեռներում, Սևանա լճի հյուսիս-արևելյան ափերում։

Ասբեստի (մկնդեղ) հանքեր կան Զանգեզուրի Ալանդյաղ լեռնաշղթայի Գյուբ-դաղ լեռան մոտերքը։

Յերևանի գավառում գտնվում է **ապաթար**, վորը հնում շահագործվելիս է յեղել։

Մարմար.—Մխխանա գետի հովտում, Նոր-Մխիթարովկա գյուղի մոտ, այնտեղ, վորտեղ բղխում են հանքային քաղցրահամ ջրեր, գտնվում են մարմարի հանքավայրերը։ Մարմարը 25 սանտիմետր հաստություն ունեցող շատ բնական տեսակի մարմարի թերթաքարեր է տալիս։ Շատ հաճախ ստացվում են թերթաքարեր՝ $7^1/_2$ վոտնաչափ յերկարությամբ և 4 վոտնաչափ լայնությամբ մարմարի շերտերով։

Մարմար գտնվում է և Զանգեզուրի լեռնաշղթայում՝ Ազնաբերդ գյուղի մոտ։

Ծծումբ.—Արագածի գագաթների վրա՝ վերջինիս ճեղքերի մեջ և կուտակված։

Ծծումբի օքսիդներ.—Տեղական բնակիչները, հնարավորություն չունենալով այդ անմատչելի ծործորները մտնելու, հրացանի գնդակներով վայր են քցում այդ շիթաքարերը։ Ծծումբ գտնվում է Յերևանի գավառում, Զանգիբասարի Շուգայիբ գյուղի մոտ։

Գրաֆար (գրաֆիտ).—Այս վերին աստիճանի ոգտակար հանքը Հայաստանում գտնվում է բավականին խոշոր պաշարներով և արդյունաբերական նշանակություն ունի։ Գրաֆարի հանքեր կան Սևանա լճի հյուսիս-արևելյան ափերում և Զանգիզուրում։

Այս վերջին գավառում Աչառլ գյուղի մոտ գրաֆարի հանքը 2 մետր հաստություն ունի, բավականին մաքուր է։ Գրաֆարը կազմում է հանքի 49,5%-ը։ Նույն գավառի Դյարմյազուրի կիզի գետակի ափունքներում գրաֆարը յերակներ է կազմում՝ 56% պարունակությամբ։ Աշխարհում ամենալավ գրաֆարը Ցեյլոն կղզուց է ստացվում։ Հայաստանի գրաֆարից կարելի չե պատրաստել թանկարժեք հրատուկուն (անկիզելի) ամաններ (տիգլեր—тигли) և. գործածել չուգունի գործարաններում։

Լիտոգրաֆիկ քար.—Հայաստանում գտնվում է յերկու տեղ՝ Վեդի չալի հովտում, Մեծ Վեդի գյուղի մոտ, Գեղամա լեռների Բողբուրուն կոչված մասում և 2) Դիլիջանի գավառում՝ Ագստեվ գետի հովտում, Իջևանի մոտ։ Ագստեվ լիտոգրաֆիկ քարի բնած տարածությունը 6,5 կիլոմետր է։ Հայկական լիտոգրաֆիկ քարը վորակով ամենալավ տեսակից է և Գերմանիայի Զոլենհոֆենի հռչակ ստացած լիտոգրաֆիկ քարից իր վորակով ցածր չե։

Լենինականի գավառում, Հաջի-Նազար գյուղի մոտ գտնվում է ոսպիտակ կավ կաոլին, վորից կարելի չե ֆայանսե ամաններն պատրաստել։

Ինֆուզորիս.—Նոր Բայազետի գավառի Ղզլաղ, Վալի, Ագալի ու Յերամուս գյուղերի մոտ գտնվում է ինֆուզորիտ՝ լեռնային ալյուր, վորը կավճի նման փուխր լեռնային տեսակ է, բաց-դեղնավուն գույնով։ Ինֆուզորիտով հղկում են ապակին, փայտերենը և մետաղները։ Սրանից ոգտվում են անիլինի և ալիզարինի ներկեր պատրաստելիս, անհրաժեշտ է նաև դինամիտ և ցեմենտ պատրաստելու համար։ Ինֆուզորիտը գտնվում է Յերևանի գավառի՝ Եղլար, Արամուս, Արզնի, Սոլակ և Ախտա գյուղերում։

Վոսկեբեր ավազ.—Գտնվում է Դիլիջանի Ագստեվ գետի հովտում։ 1,6 տոն ավազի մեջ պարունակվում է 1—17 գրամ վոսկի։ Ըստ յերևույթին, հնում այդ ավազը շահագործվել է։

Շատ քիչ յերկիրներ կան, վորոնք Հայաստանի պես հարուստ լինեն շինարարական քարերով (տարբեր գույների, դյուրատաշ, բայց շատ դիմացկուն հայկական տուֆ) և շինարարական նյութերով (կրաքար, պուզպոլան, ցեմենտաքար, բազալտ և այլն)։

Հանքային ջրեր—Հայաստանի հանքային ջրերի մասին խոսված է գրքիս առաջին մասում։ Արդյունաբերական նշանակություն ունեն Հայաստանի այնպիսի բուժավայրերը, ինչպես՝ Դիլիջանը, Արզնին և Դարալագյազում Խոսի-Սուն։ Այս բուժավայրերը, յեթե կարգի բերվեն, վոչ միայն անդրկովկասյան, այլ միութենական մասշտաբով հռչակ կունենան։



Նկ. 5. Դիլիջանի սանատորիան

Մորդպային իշխանությունը ծրագրել և առաջիկա հնգամյակում Հայաստանի հանքային հարստությունների բազմակողմանի ուսումնասիրությունը և վորոշ ճյուղերի շահագործության համար պատրաստություններ ձեռնարկելը։ Այդ աշխատանքների արդյունքը Հայաստանի լեռնարդյունաբերության հետագա ծավալումն ու զարգացումն է լինելու։

Յուրաքանչյուր աշակերտ, մինչև դպրոցն ավարտելը, պիտի ձգտի Հայաստանի տարբեր վայրերն անձամբ այցելելու, եքսկուրսիաների միջոցով։ Սակայն, ամենից առաջ նա շատ լավ ծանոթ պետք է լինի իր գավառին։ Եքսկուրսիաների ընթացքում ժողոված Հայաստանի լեռնային հարստությունների նմուշները պետք է տեղավորվեն դպրոցի թանգարանում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական Ռուսաստանի բուրժուազիան նայում էր Հայաստանի վրա, իբրև մի գաղութի վրա։ Նրա շահերին կհակասեր, եթե Հայաստանում զարգանար մշակողական արդյունագործությունը։ Արդյունագործությունը Հայաստանում զարգանալով, վոչ միայն Ռուսաստանի գործարանային ապրանքների համար կփակեր հայկական շուկան, վոչ միայն կանգ կառներ Հայաստանից հում նյութերի հոսանքը դեպի ռուսական կենտրոնը (բոժոժ, բամբակ, մրգեղեն, կաշվեղեն և այլն), այլև ռուսական բուրժուազիան կկորցներ ավելի մեծ շուկա, այն է՝ հյուսիսային Պարսկաստանը և Տաճկաստանը։ Պարզ է վոր, եթե նախկին Յերևանի նահանգը (այժմյան Հայաստանի մեծ մասը) մի արդյունագործական կերկիր լիներ, վերջինիս ապրանքներն ավելի մեծ հաջողությամբ կվաճառվեին հարևան կերկիրներում, քան հեռվից բերված ապրանքները։

Մշակողական արդյունագործությունը Հայաստանում կարող է զարգանալ այն չափով, վոր չափով այդ կերկիրը հում նյութեր է արտադրում և վոր չափով այդ կերկիրը կարող է էներգետիկ ուժ ստեղծարարել։

ԳԻՆՈՒ-ՍՊԻՐՏԻ ԿՈՆՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Այգեգործական դաշտային Հայաստանն իր խաղողի այգիներով, խաղողի բազմաթիվ տեսակներով և բարձր վորակով կյանքի կե կանչել գինու-սպիրտի և կոնյակի արդյունագործությունը, վորը զգալի դեր է խաղում կերկրի տնտեսության մեջ։

Հայաստանն ունեցել է 10925 հեկտ. տարածությամբ խաղողի այգիներ, խաղողաբուծությամբ զբաղվող տնտեսությունների թիվը 1913 թ. հասել է 16,969-ի և խաղողի միջին տարեկան բերքը 476,830 կվինտալ է եղել։

Այս արդյունագործությունը Հայաստանում զարգանալու բոլոր նպաստավոր պայմաններն է ունեցել և խոշոր ծավալներ է ստա-

ցել։ Իր հերթին ծավալվող արդյունագործությունն ազդել է խաղողաբուծության վրա, այգիների տարածությունը հետզհետե ընդարձակվել է, նրանց վորակը՝ լավացել և տնտեսություններն եքստենսիվ ձևերից ինտենսիվ ձևերի չեն անցել։ Հայաստանից արտահանվում էր տարեկան 86-98 հազ. հեկտոլիտր գինի, խաղողի սպիրտ արտադրվում էր 9,4 միլ. աստիճան, կոնյակի սպիրտ՝ 7,2 միլ. աստիճան։

Պատերազմն ու քաղաքացիական կռիվները խոշոր վնասներ հասցրին թե խաղողաբուծությանը, և թե գինի-սպիրտի և կոնյակի արդյունագործությանը։ Այգիները կրճատվեցին, իսկ գործարաններից վոչը ի շատե լավ պահպանվեց միայն Շուստովի գործարանը։

Յերկրի խորհրդայնացումից հետո կառավարությունը ջանքեր է թափում խաղողաբուծությունը վերականգնելու և յերկրում կիզած արդյունագործության հիմնարկությունները հետագա ավերումից պահպանելու։ Առաջին նպատակին հասնելու համար՝ պետությունը ձեռնտու պայմաններով այգեգործներին յերկարատև վարկ եր բաց թողնում և խաղողի բերքն ինքը գնում եր բավականին բարձր գներով։ Յերկրորդ նպատակին հասնելու և այս ճյուղի արդյունագործությունը լայն ծավալներով գարգացնելու համար՝ 1921 թ. ողոստոսի 3-ի դեկրետով ազգայնացվում են հետևյալ խոշոր գործարանները.

Սառաջնի կոնյակի և ռեկտիֆիկացիոն գործարանը՝ Յերևանում։

Աֆրիկյանի գինու-կոնյակի գործարանը Յերևանում։

Սողոմոնյանի գինի-կոնյակի գործարանը Յերևանում։

«Ha Bepe» ընկերության ռեկտիֆիկացիոն գործարանը՝ Ղամարլվում։

«Արաքս» ռեկտիֆիկացիոն գործարանը Ղամարլվում։

Վերջապես Հայաստանի ամենամեծ, Շուստովի գործարանը։

Այս բոլոր գործարանները կազմել են մի տնտեսական միություն և ստացել են «Արարատ արեստ» անունը։

Տրեստի ներկայումս գործող ձեռնարկությունները միավորում են հինգ արտադրություն, 1. գինու, 2. կոնյակի, 3. ռեկտիֆիկացիոն (սպիրտի գաում), 4. ողու և 5. տակառագործություն։

Տրեստը մի կողմից մթերում է հում նյութեր և այդ հում նյութերից տալիս է պատրաստված արտադրանք։ Մթերման և արտադրանքի շարժումը պարզվում է ստորև բերված աղյուսակներից.

Մթերում

Արտադրանքի անունը	1921-22 թ.	22-23 թ.	23-24թ.	24-25 թ.
Խաղող՝ տոններով	49,14	2210,9	2014,7	1850,9
Գինի՝ հեկտոլիտրերով	1475,9	1598,9	6754,6	27500,6
Հում-սպիրտ՝ աստիճան.	23,000	170,000	1,448,000	521,700
Դեշաբ՝ հեկտոլիտրերով	—	—	1117	1721,9

Արտադրանքը

Կոնյակի սպիրտ՝ աստիճ.	30,400	306,000	—	1,500,000
Ջուրած սպիրտ »	158,000	422,000	2,240,000	5,607,000
Հուժ » »	179,000	447,000	948,000	913,000
Նոր գինի՝ հեկտոլիտրերով	4550,7	11069	9,839	10823

Այս տվյալները ցույց են տալիս, որ մթերման և արտադրանքի բոլոր տեսակներն աճել են, և արդյունագործության հետագա աճումն ապահովված է։

Տարեցտարի աճում է և բանվորների ու ծառայողների թիվը։ 1923 թ. հոկտ. 1-ից մինչև 1925 թ. հոկտ. 1-ը այդ թիվն աճել է 308%-ով։

Գինի-կոնյակի և սպիրտի արդյունագործության արտադրանքը սպառվում է թե ներքին և թե դրսի շուկաներում, գլխավորապես Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. մեջ։ Տրեստը բաժանմունքներ ունի Լենինգրադում, Մոսկվայում և Ռոստովում (Դոնի վրա)։ Արդյունագործության այս ճյուղի արտադրանքի արժեքը (նախապատ. ռուբլիներով) համեմատած մինչ-պատերազմյան արժեքի հետ, հետևյալ պատկերն է տալիս։

			Բանվորների թիվը	%
1913 թ.	1,745,100 ռ.	100	175	100
1923/24 թ.	456,100 »	26	54	30/9
1924/25 թ.	965,600 »	55	101	57,7
1925/26 թ.	789 300 »	45,2	114	65,1

1925/26 թ. արտադրանքի նվազումը բացատրվում է ձմեռվա ցրտահարության պատճառով խաղողի բերքի անկումով։

Կարևոր է շեշտել և այն հանգամանքը, որ «Արարատ տրեստը» տալիս է Միության ամենաբարձր վորակի կոնյակը։ Միության մեջ Հայաստանի կոնյակը մրցակից չունի։ Արտաքին շուկա չեն հանվում նաև դեսերտի և լիքյորային գինիները (պորտվեյն, մադերա, խերես) վորոնց պահանջը Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. շուկաներում շատ մեծ է։

Աշխատանք

1. Կազմակերպեցեք եքսկուրսիա դեպի «Արարատ» գործարանը։

2. Ձեր խմբում դպրոցական բժշկի հետ ալկոհոլիզմի մասին զրույց կազմակերպեցեք։

ԿԱՇՎԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի խորհրդայնացման սկզբին կաշվի արդյունագործությունն այնպիսի դրության մեջ եր, վոր համառ աշխատանքի մի շարք տարիներ էին պետք արդյունագործության այս ճյուղը ներկայիս վիճակին հասցնելու համար։

Եթե համեմատենք կաշվի արդյունագործությունը գինու, կոնյակի և սպիրտի արդյունագործության հետ, հատկապատությունն առաջինի ոգտին չի խոսի։ Պայմանները նույնն են, իսկ արդյունքը՝ տարբեր։

Հայաստանում զարգացած խաղողագործությունը կյանքի չե կանչել խոշոր գինու-կոնյակի արդյունագործությունը, բայց Հայաստանն նույնպես լայն ծավալներ ունեցող անասնապահություն կաշվի խոշոկ արդյունագործություն ե ստեղծել։ Հայաստանն ավեն մի 100 շնչին ընկնող անասունների քանակով ռուսական նախկին կայսրության մեջ առաջին տեղերից մեկն ե գրավելիս լեղել։ Սակայն կաշվի մշակության ձեռնարկությունները շատ հեռու չեն լեղել գործարանների կոչումից, նրանք ավելի ուշ կիսարդյունագործական ձեռնարկություններ են լեղել։ Բացառություն են կազմել 2 ձեռնարկություն Յերևանում, վորոնք իրենց սարքավորումով վորոշ չափով մոտեցել են գործարանային տիպի ձեռնարկության։ Այդ լերկու գործարաններն ազգայնացված են և անտեսական մի միավոր են դարձել,

Այս գործարանները հիմնական վերակառուցման են յենթարկվում, նոր մեքենաներ և սարքավորում են ստանում, յենթարկվում են ելեքտրիֆիկացիայի և վոտքի չեն կանգնեցնում անկման մոտեցած արդյունագործությունը։

1923—24 տարում 20,400 ռ. իսկ 1924/25 թ. 83,000 ռ. վաստակ և ստացվում։ Այս լերկու գործարաններից, վորոնք գտնվում են Ժողտնտխորհի անորինության տակ, մեկը պատրաստում է մանր կաշիներ և յուֆտ, իսկ մյուսը՝ մեծ կաշիներ։

Կաշվի արդյունագործությունը Հայաստանում իրեն նպատակ է դնում՝ տեղական հում նյութի ոգտագործումը, վորպեսզի սրանով զարկ-տրվի լերկրի անասնապահության զարգացման և կաշվի այնպիսի տեսակներ պատրաստելուն, վորոնք հատպատասխան լինեն գյուղացիության և քաղաքի բնակչության լայն խավերի պահանջներին, ապա՝ ապրանք մատակարարել անասնագործների և արհեստավորներին։ Անցած ժամանակաշրջանում արտադրանքի աճումը հետևյալ պատկերն է տալիս.

Պատրաստված և կաշի

	1922 թ. (9 ամս.)	1922/23	1923/24	1924/25
Մաշոր	3026	6753	6475	8920
Մանր	9706	27,883	53,730	71,647

Գործարանները տալիս են լայն չափով սպառվող ֆաբրիկատներ՝ ներբան, պոլուվալ, սաթկա, վոչխարի ապած կաշի (գանազան գույնի) մեշին, սեկ, յուֆտ. Սահմանափակ քանակությամբ մշակվում են՝ շեվրո, շեվրետա։

Արտադրած ապրանքների 27% իրացվել է Հայաստանից դուրս Վրաստանում, Հյուսիսային Կովկասում և Նուկինսկ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. սահմաններում։

Ըստ հնգամյա արտադրական ծրագրի՝ չենթադրվում է արտադրությունը 1929—30 ամս. տարում հասցնել հետևյալ չափի — տարեկան՝ խոշոր 50.000 հատ, մանր՝ 300,000 հատ։ Այս ծրագիրն իրականացնելու համար չենթադրվում է հատկացնել հինգ տարվա ընթացքում 640,000 ռ. գործարանների ընդարձակման և նոր մանր կաշիներ պատրաստող գործարանի կառուցման համար։

Կաշվի արդյունաբերության արտադրանքի արժեքը 1913—1926 տարիների ընթացքում՝ յեվ բանվորների քանակի շարժումը

Տարի	Արժեքը	% %	Բանվորների քանակը % %	
1913	400 000 ռ.	100	100 մարդ	100%
1923/24	188,000 »	47 2	104 »	104%
1924 25	264,600 »	66,2	108 »	108%
1925/26	396,000 »	99,0	96 »	96%

Այսպիսով, արդյունագործությունը հասել է նախապատերազմյան մակարդակին և այսուհետև վոչ թե վերանորոգման, այլ բեկոնստրուկցիայի, այսինքն՝ վերակառուցման ուղիով պիտի ընթանա։

Աշխատանք

1. Եքսկուրսիա գնացեք դեպի կաշվեգործարանը և պարոցի թանգարանի հաժար գործարանի ֆաբրիկանների նմուշներ ձեռք բերեք։

2. Տվյալներից դիագրամներ կազմեցեք։

ԲԱՄԲԱԿԱԶՄՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի դաշտային գոտին բամբակի մշակույթի շրջան լինելով, պայմաններ է ստեղծել բամբակագործության զարգացման։ Պատերազմից առաջ բամբակագործան ձեռնարկությունները թվով 328, մեծագույն մասով մանր տեսակի յեն յեղել և շատ հազարակ սարքավորում են ունեցել։

Հոկտեմբերյանից հետո վերանորոգված է Յերևանի խոշոր գործարանը և նոր գործարան է կառուցված և սարքավորված ելի Յերևանում՝ կայարանի մոտ։ Գործարաններ են կառուցված նաև Ղամարլուում և Սարդարաբադում։

Բամբակի բերքի աճումը նույնությամբ կրկնվել է բամբակագործան արդյունագործության արտադրանքի նկատմամբ։

Ստացված է բացարձակ թվերով (տոններով)

	1924/25 թ.	1925/26 թ.
Ձաած բամբակ	3.182,6	3 969.2
Լինտեր	41.5	21.2
Հունդ	6.361.5	9.072,8



Նկ. 6. Հայբամբակկոմի գործարանին ամբնթնը բանվորական շենքը

Այս արդյունագործության մեջ վերին աստիճանով է բամբակագործան արդյունագործությունը մեքենայացված, որը խորհրդայնացումից հետո լիակատար վերակառուցման (բեկոնստրուկցիայի)

չենթարկվեց օտարների վարչ և տնտեսական բազմաթիվ ձեռնարկությունների փոխարեն այժմ Հայաստանն ունի կենտրոնացված արտադրություն՝ 2 խոշոր նորակառույց գործարաններում (կատարելագործված սարքավորումով) և 1 վերասարքավորված գործարանում։ Այս արդյունաբերության արտադրողական կարողությունը միանգամայն բավարար է առաջիկա տարիների համար։ Թեթև նույնիսկ բամբակագործությունը շարունակի նույն թափով զարգանալ։



Ա. Ջիլոյան

1. Եքսկուրսիա գնացեք դեպի բամբակազտման գործարանը։
2. Տվյալները դիագրամների վերածեցեք։

Բամբակագործության արդյունքների համեմատական տվյալները (նախապատերազմյան և ներկա շրջանի համար)

	Արժեքը	% %	Բանվորների թիվը	% %
1913 թ.	3.247.500 ռ.	100	200 մարդ	100
1923/24	751,000 »	23,1	52 »	26
1924/25	2.645.000 »	81,5	81 »	40,5
1925/26	3.325.100 »	102	59 »	29,5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿՎԱԾԱՅԻՆ (ՏԵՔՍՏԻԼ) ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում գործարանային տեքստիլ արդյունագործության հիմնադրումը Ա. Իշխանութեան ամենամեծ նվաճումներից մեկն է։ Ռուսական այն կենտրոնը (կենտրոնական Արդյունագործական շրջանը), որը ցարական ռեժիմի որով վոչ մի դեպքում թույլ չեր տալ ժամանել անգամ Հայաստանում այդ արդյունագործությունը կյանքի կոչելու մասին, այժմ խորհրդայնացումից հետո ինքն է նվիրում Հայաստանին (Որեխովո-Զուևեվո քաղաքից և տեղված գործարանի սարքավորման մեծ մասը) մի ամբողջ տեքստիլ գործարան՝ 40,000 իլիկով։

Լենինականում այդ գործարանի համար կառուցված է ամենայն հարմարություններ ունեցող շենք, որտեղ այժմ հիանալի շարքերով կանգնած են իլիկները և վոստայնանկային հաստոցները։

Մեկ իլիկի տարեկան արտադրողականությունը 0.5 կիլոնատալ ընդունելով, հեշտ է հաշվել, որ Լուկաշինի անվան գործարանն իր 40.000 իլիկով, մի հերթափոխով աշխատելու դեպքում, 19650 կիլոնատալ զուտ բամբակ կգործադրի։ Մեր բամբակամանի գործարանները 1925/26 թ. արտադրել են 39300 կիլոնատալ զուտ բամբակ։ Այդպիսով, Լուկաշինի անվան գործարանը 1925/26 թ. արտադրած բամբակը կարող է մշակել յերկու հերթափոխով աշխատելով։

Հայբամբակկոմի հնգամյա ծրագրի համաձայն, հինգ տարուց հետո, մեր բամբակի ցանքսերի տարածության ընդլայնման շնորհիվ մեր բամբակագործության արդյունաբերության արտադրությունը կհասնի 114660 կիլոնատալի։ Այն ժամանակ գործարանը կընդարձակվի և Հայաստանի տեքստիլ արդյունաբերության արտադրանքները կարող են Հայաստանի սահմաններից արտածվել հարևան յերկիրները՝ Տաճկաստանի և Պարսկաստանի շուկաները։

Բանվորական ուժը պատրաստվում է 1924 թվի հոկտեմբերից, գործարանի կառուցման աշխատանքներին զուգընթաց, հատուկ սարքավորված ուսումնագուցադրական արհեստանոցում (2170 իլիկով և 90 վոստայնանկային հաստոցով) բանվորների կարգ պատրաստելու աշխատանքներ են կատարվում։ Այդ արհեստանոցն արտադրում է ամսական 81—98 կիլոնատալ ժանյակ թել և 60.000—70.000 մետր բյազ։ 1925 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1927 թ. հունվարի 1-ը պատրաստված 1310 կիլոնատալ մանվածք, 657.300 մետր բյազ և 36.000 ռուբլու տրիկոտաժ գործվածքներ։

Գործարանը, իր աշխատանքներն սկսվելու դեպքում, 800 բանվորի պահանջ և ունենալու Գործարանի («ըհեստանոցի») արտադրանքն է եղել 1924/25 թ. 24.500 ռ., 1925/26 թ. – 238.200 ռուբլի։



Նկ. 8. Լուսային ապակու պատրաստման էլեկտրական վառարանը Լենինականում. հիմնվելի բանվոր

Բրդի մշակութիւնը Հայաստանում աննշան չափերով է տարվում (տես «տնայնագործութիւն»)։

Յերևանում հիմնված է Հայաստանի առաջին մետաքսագործարանը, 48 ավազանով և վերանորոգված է Ղափանի մանարանը։ Այս յերկու գործարանները կարող են Հայաստանի բուժումի 80%-ը վերամշակել։

ՊՈԼԻԳՐԱՖ ՕՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Յարական իշխանութեան շրջանում Հայաստանը՝ նախկին Յերևանյան նահանգը՝ ռուսական կայսրութեան հեռավոր ծայրագավառներից մեկն եր։ Հայ ժողովրդի կուլտուրական կենտրոններն եյին՝ Թիֆլիսը, Պոլիսը, Բագուն, Մոսկվան, թերևս հեռավոր Վենետիկն ու Վիեննան և վոչ յերբեք Յերևանը։ Հայ գեղարվեստական և գիտական գրականութիւնը տպագրվում եր հեռավոր կենտրոններում և չի կարելի ասել, վոր այդ գրականութիւնը լայն չափերով եր ներժուծվում Յերևանի նահանգը։

Անուամենայնիվ, մի քանի տպարաններ Յերևանում կային և մեկ տպարան՝ Էջմիածնում, սակայն այդ տպարանները հայ ժողովրդի կուլտուրական բարգավաճման չեյին ծառայում։

Պոլիգրաֆ արդյունագործութիւնը վերելք չստացավ նաև դաշնակցականների կառավարութեան որոք, քանի վոր պատերազմներով զբաղված այդ կառավարութիւնը շատ հեռու յեր ժողովրդական կուլտուրայի բարձրացման գործից։

Հայաստանի խորհրդայնացումից հետո յերկրում գտնվող տպարանները և, առհատարակ, ամբողջ պոլիգրաֆ գործը կենտրոնանում է պետութեան ձեռքում, Յերևանի 5 տպարանները ժողտնտխորհը միացնում և «Առաջին խորհրդային տպարան» անվան տակ։

Սակայն խորհրդային հասարակակարգի հաստատված այս արդյունագործութեան տեխնիկական սարքավորումը ծայր աստիճանի անբավարար եր։ Կարիք կար վոչ միայն այդ սարքավորումը նորոգել, այլև ավելացնել, տեխնիկապես ընդլայնել և կատարելագործել։ Ձեռք է բերվում նոր սարքավորում գծագրատան համար, կազմակերպվում է ձուլարան՝ անհրաժեշտ քանակութեամբ տառեր ժամանակարարելու համար։

Միայն պարբերական հրատարակութիւնները հինգ տարվա ընթացքում աճել են 550%։

1921 թ.	հրատարակվել է	2	պարբերական
1922 »	»	»	3	»
1923 »	»	»	7	»
1924 »	»	»	9	»
1925 »	»	»	13	»

«Սարդարյան Հայաստան» թերթի տիրաժը 1922 թ. 600 օրինակ եր, իսկ 1925 թ. հասնում է 8.000 օրինակի։

Անցած շրջանում պոլիգրաֆ արեստի գործունեության արդյունքը բնորոշվում է հետևյալ պատկերով

	1921/22	1922/23	1923/24	1924/25
Տպված է տանուլ հազարներով	2.248,1	3.471,8	9.260,7	12.838,3
Կիլոգրամներ՝ քաղ. տանտիրտար	—	45.890	129,032	167,741
Տառերի ձուլում կիլոգրամներով	13,3	60,0	81,9	70,1

Պոլիգրաֆ արդյունագործության արտադրանքի արժեքը (նախապատ. ռուբլիներով) ըստ տարիների հետևյալ չարժումն է ունեցել.

1913 թ.	46.000 ռուբլի	100%
1923/24	133.600 »	297 »
1924/25	284.800 »	633 »
1925/26	430.700 »	957 »

Հետևյալ պատկերը ցույց է տալիս, թե վորքան ուժեղացրած է տարքավորումը 1922–25 թթ. ընթացքում.

Մեքենաներ	1922	1925
Արագատիպ մեքենաներ	7	17
Ժեռիկանկաններ	3	4
Վիմագր. մեք. և հաստոց.	—	4
Լինոտիպներ	—	3
Ելեքտրամատորներ	9	17

Հեռանկարային հնգամյա ծրագրով նշված են մի շարք այնպիսի ձեռնարկություններ, վորոնք նպատակ ունեն արդյունաբերությունը լայնացնել՝ բոակչության աճող կուլտուրական պահանջները բավարարելու համար։

Տրեստի համար կառուցվում է նոր շենք, վորտեղ ծրագրվում է դնել նոր կատարելագործված մեքենաներ ու հաստոցներ և ձեռքի աշխատանքից անցնել մեքենական աշխատանքի։ Այդ նպատակի համար չենթադրվում է դնել՝ լինոտիպներ, ռոտացիոն մեքենա և նոր շարժիչներ։

Ս. Ջիլաեացի

Եքսկուրսիա գնացեք տպարան և ծանոթացեք տպագրության պրոցեսին ու պոլիգրաֆ արդյունագործության գանագան ճյուղերին։

ՄԵՔԵՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունագործության այս ճյուղը Հայաստանում դեռ սաղմնային դրության մեջ է։ Ցերևանում գտնվում է ազգայնացրած մի մեքենագործարան, վորը պատերազմի և ազգամիջյան կռիվների ընթացքում վերանորոգման չի ենթարկվել և խորհրդայնացման ըսկզբին այնքան մաշված սարքավորում ուներ, վոր հազիվ եր կարողանում կատարել ամենայա աշխատանքները։ Այդ գործարանի սարքավորումը հետզհետե վոխարինվում է նորով, վորը մասամբ ձեռք է բերված, մասամբ էլ նվեր է ստացված Խորհրդային Միության Ժողովրդ. Տնտեսության Բարձրագույն Խորհրդից (Ф. .Տ. Բ. Խ.)։

Ընդհանուր առմամբ մեքենագործության արտադրանքը (նախապատերազմյան ռուբլիներով) հետևյալ պատկերն ունի.

	Արժեք	% %	Բանվորներ	
1913 թ.	60.000 ռ.	100%	40	100%
1923/24	46.000 »	77,3 »	35	87,5 »
1924/25	54.700 »	91,2 »	51	128 »
1925/26	69.000 »	115 »	77	192 »

Մեքենագործության ներկա այս դրությունը բավարար համարել չի կարելի, չնայելով վոր նրա արտադրանքը նախապատերազմյան մակարդակից անցել է։ Մեր մերկրի արտադրողական ուժերի բարձրացումը, նոր ելեքտրակայանների կառուցման աշխատանքները և որ որի վրա աճող բնակարանային շինարարությունն այնպիսի պահանջներ են առաջադրում մեքենագործությանը, վոր անհրաժեշտություն է զգացվում թե չեզած գործարանն ընդարձակելու և վերատարքավորելու և թե նորը կառուցելու։

Ժողանախորհը իր հնգամյա հեռանկարային ծրագրի մեջ նախատեսել է նոր գործարանի կառուցումը, վորն ունենալու է տեխնիկապես բարձր սարքավորում և վորտեղ աշխատելու է 160 բանվոր։ Այդ կառուցման համար նախատեսված է 123.000 ռուբլի։

Ս. Ջիլաեացի

Կազմակերպեցեք եքսկուրսիա դեպի մետաղագործարան։

ՉԱՓ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հայաստանի տեղամասերում չափերի ու կշիռների ստուգումը կանոնավոր իրագործելու նպատակով 1923 թ. նոյեմբերի 1 ին Ժողանախորհին կից հիմնվում է մի մարմին, վոր կոչվում է «Չափ ու կշիռների Պալատ»։

Անհրաժեշտ սարքավորում ու գործիքներ, ինչպես և առանձին շենք ստանալով՝ Զափ ու կշիռների Պալատն սկսում է իհանդուն գործունեության անցնել ամբողջ Հայաստանի տարածության վրա։ 1924 թ. հուլիսից Ժողանտարորի կարգադրությամբ ստուգումը դադարեցվում է, վորովհետև չափերը և կշիռները վեր են ածվում մետրական սիստեմի Զափ ու կշիռների Պալատն իր գործունեության ընթացքում մինչև 1925 թ. ստուգել է Հայաստանում գանազան կշեռքներ՝ 1625 հատ և այլ չափեր՝ 50.300 հատ։ Ներկայումս Հայաստանում ընդունված է չափերի և կշիռների մետրիկական սիստեմը։

Ա. Հախատաճի

Այցելեցեք Զափ ու կշիռների Պալատը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ալլահվերդու պղնձահանքերում և սևկին տարիներում կարբիտ, ծծմբային և ազոտին թթուների հաղող վորձերով և Յերևանում կառուցված կարբիտի գործարանով Հայաստանում քիմիական արդյունագործության հիքն է դրվում։ Կարբիտի գործարանի արտադրությունն է տարեկան 1000 տոն։ Կարբիտը հիմնական նյութ է ծառայում քիմիական տարբեր նյութեր ստանալու համար։ Որինակ՝ կարբիտից կարելի է ստանալ ացետիլեն և յեռխլորեթիլեն։ Այս վերջինը հեշտությամբ լուծում է յուղերը և ճարպերը, ինչպես ջուրը լուծում է աղը կամ շաքարը։

Ավելի շահավետ և ձեթ ստանալ ձիթհան գործարաններում, փոխանակ յուղաբեր սերմերը մամուլի տակ սեղմելու, մանրացրած սերմի յուղային նյութերը յեռխլորեթիլենի մեջ լուծելով։ Այդ պրոցեսով ստացվում է ձեթ ավելի բարձր տեսակով և քանակ՝ ավելի աղքատ ձեթով, ապակյա և ավելի անշդարար՝ կենդանիների համար։ Բուսական մեջ անշդարար նյութը ձեթը չե, այլ նրա մեջ պարունակված ալիտակուցը։ Կարբիտը ծառայելու յե իբրև նախնական նյութ ցիանամիդ ստանալու համար։

Քիմիական արդյունագործությունը հսկայական ծավալներ և ստացել Գերմանիայում, Յեվրոպական այլ յերկիրներում և Միացյալ Նահանգներում։

Քիմիական արդյունագործությունը լաբորատորիաներում ընության անսպառ նյութերից արհեստական ձևով այնպիսի նյութեր և կառուցում, վորոնք մարդու անհատության համար չափազանց ոգտակար և արժեքավոր են։ Այդ նյութերը ընության մեջ կամ սակավաթիվ են, կամ կառուցվում են ընության մեջ գոյություն չունեցող նորանոր նյութեր, ինչպես՝ սախարին, պլեյերին, պարաֆին, նաֆտալին, վազելին, անիլինի ներկեր, գանա-

դան ածխաջրածիններ, գեղորայք և այլն, և այլն։ Քիմիական արդյունագործության հնարավորություններն անսահման են։

Հայաստանը հնարավորություն չունի վորպեզրել քիմիական արդյունագործությունն իր ամբողջությամբ։ Նա իրեն նպատակ է դնում քիմիական արդյունագործության այն պրոցեսները կատարելագործել, վորոնց անհրաժեշտ են այդ յերկրի գյուղատնտեսությունը բարձրացնելու համար։

Ուսումնասիրելով Հայաստանի գյուղատնտեսությունը, մենք տեսանք, վոր հողագործության անկման պատճառներից ամենապլսավորն այն է, վոր մեր հողը դարերի ընթացքում, շնորհիվ եքստենսիվ ձևերի, իր բերրիությունը կորցրել, ուժասպառ և դարձել, ուստի և արգավանդ չե։

Դեռ ևս անցյալ դարի 40-ական թվականներին գերմանացի հանճարեղ Լիբիխը ցույց է տվել, վոր հողը, առատ բերք տալու համար, միշտ իր մեջ բորակածնի, ֆոսֆորի և կալիումի վորոշ պաշարներ պիտի ունենա։ Սակայն այս տարրերը հողից բույսերն են հանում, և հողը, այդ տարրերով աղքատանալով, անբերրի յե դառնում։

Բորակածին հողին արվում է գոմաղբի միջոցով։ Սակայն մեր գյուղացին, գոմաղբով հողը պարարտացնելու համար, բավարար թվով անասուն չունի, յեղած գոմաղբն էլ նա սպառում է իբրև վառելանյութ։ Հողին ֆոսֆոր և կալիում տալու համար գյուղացին չեր էլ մտածում, վորովհետև այդ բանը նրա համար նորություն և և շատ անգամ գոմաղբով հողը պարարտացնելով՝ նա սպասած բերքը չեր ստանում և զարմանում եր, թե թե ինչն է դրա պատճառը։

Նա չգիտեր, վոր գոմաղբը հողին **միայն բորակածին է տալիս, իսկ հողը պահանջում է նաեվ ֆոսֆոր ու կալիում։**

Հետևյալ աղյուսակը պարզ գաղափար է տալիս այն մասին, թե տարբեր բույսեր վորքան աննդարար նյութեր են վերցնում հողի մի դեսյատին տարածությունից (կիլոգրամներով)։

Բույսեր	Բորակածին	Ֆոսֆոր	Կալի	Կիր
Բամբակ	95,6	37	57,8	58
Հացահատիկներ	40	14,4	28,4	10
Կարտոֆիլ	54	31,2	104	24
Շաքարի ճակնդեղ	80	20,2	100	17
Կերի ճակնդեղ	111	33,6	224	35

Հայաստանի հողերը կրով հարուստ են. կալիումի աղերով մեր հողերը միշտ բավարարվում են՝ շնորհիվ լեռնային հոսող ջրերի, վորոնք լեռների քարահատակներից այդ աղերը լուծում բերում են և առուների միջոցով հաղորդում հողին։

Այդպիսով, Հայաստանի հողերը կարիք ունեն գրսի բորակածնի և ֆոսֆորի։ Հայաստանի քիմիական արդյունագործությունը պետք է իր վրա վերցնի հողերին թե բորակածին և թե ֆոսֆոր մատակարարելու գործը։

Առաջինն, այնինքն բորակածինը, որ կազմում է ոդի 79%-ը, որվում է հողին քիմիական միացման ձևով, այսինքն՝ բորակածնային թթվի աղի կամ ցիանամիդ նյութի ձևով։ Իսկ բորակածինը հնարավոր է միացնել միայն էլեքտրական էներգիայի միջոցով։ Ահա, այդ է պատճառը, որ Զորագետի էլեքտրականը գտնալու չի Հայաստանի քիմիական արդյունագործության շարժիչ ուժը։

Ինչ վերաբերում է ֆոսֆորին, այս վերջինն էլ որվում է հողին աղի ձևով. այդ աղը՝ ֆոսֆորիան անապատ չափերով գտնվում է Յեվրոպական Ռուսաստանում։ Սակայն ֆոսֆորիան ինքնըստինքյան, իրրև ջրի մեջ լուծվող մի աղ, հողի համար անոգուտ է. անհրաժեշտ է նրան ջրի մեջ լուծվելու ընդունակություն տալ, այդ պատճառով ֆոսֆորիան անհրաժեշտ է մշակիլ ծծմբային թթվով և սուպերֆոսֆատ ստանալ։ Ծծմբային թթվով Հայաստանը հարուստ կարող է համարվիլ։ Իսկ սուպերֆոսֆատ պատրաստելու համար, ինչպես ասում են, «թթուն չի հոսում դեպի ֆոսֆորիտը, այլ ֆոսֆորիան է վազ տալիս դեպի թթուն»։ Այդպիսով, Հայաստանը, որ ունի ածան ծծմբային թթու, կարող է լայն ծավալներ տալ սուպերֆոսֆատի արդյունագործության։

Այդպիսով քիմիական արդյունագործությունը, որի սկիզբն է դրվում Հայաստանում, խոստանում է մեր հողերին վերադարձնել դարերի ընթացքում սպառված բերրիությունը։

ՁԵԹ-ՈՃԱՌԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ձեթհան արդյունագործության անվան տակ հասկացվում է յուղաբեր բույսերի սերմերից հեղուկ ճարպեր (ձեթ) ստանալու գործը։ Հայաստանում մշակվում են հետևյալ յուղաբեր բույսերը կտավհատ (վուշ), քունջութ (քնջիթ) գենագերչակ, բամբակ և այլն։

Տնայնագործական ձեթհանությունը Հայաստանում հնուց գոյություն ունի։ Լեռնային վայրերում ազգաբնակությունը ձեթ ստանում է կտավհատից, դաշտային գոտում՝ քունջութից և գենագերչակից։

Ստացված ձեթը բանեցվում է սննդի, լուսավորության և դեղի համար. կարծր ճարպերի հետ խառնելով՝ ձեթին ոգտագործում են իբրև ածանյութ։

Շիր-ջրանցքն անցկացնելուց հետո թե՛ ճակնդեղի և թե՛ յուղաբեր բույսերից կտավհատի համար Շիրակի դաշտում լայն հորիզոններ են բացվում։ Կարելի չէ սպասել, որ կտավհատի ձեթհանությունը հիմք կգանի Լենինականում։

Քունջութից ձեթ ստանալու գործը տարածված է Ղարդուղու շրջանում, և այստեղ ա՛յնագործական ձևով հաջողվում է ստանալ անգույն, մաքուր, հազվագյուտ համով և բույրով ընտիր ձեթ։

Գենագերչակը մշակվում է Հայաստանում իբրև դեկորատիվ) բույս, թեև գենագերչակից գյուղացիներն աննշան քանակությամբ կաստորի յուղ են ստանում իրենց կարիքների համար։

Սարդարաբադի դաշտը վոռոգման չենթարկելուց հետո գենագերչակի մշակության համար բացվում է նույն լայն հորիզոնները, ինչ կտավհատի համար Շիրակի դաշտում։ $2^1/_2$ հազ. հեկտար հող հատկացնելով գենագերչակի մշակությանը, այստեղ կարելի կլինի այդ բույսից ձեթ ստանալու համար գործարան հիմնել, որը 15,000 կվինտալ կաստորի յուղ կտա, $1^1/_2$–2 մլն. ռ. արժողությամբ։ Այդ գործարանը Յերևանում կառուցվելու դեպքում, կարող եր ամբողջ փեղերացիային կաստորի յուղ մատակարարել։ Ի. Միության մեջ միայն մեկ կաստորի ձիթհան գործարան կա Տաշքենդում (Ռւզբեկստան), որը չի բավարարում Միության կարիքները, և մեծ քանակությամբ կաստորի յուղ ներմուծվում է արտասահմանից։ Ինչ վերաբերում է բամբակի հնդից ձեթ ստանալուն, այստեղ մենք արդեն ներկայացրել ենք մեր ընդարձակ բազա ունենք։

Մեր բամբակագործ գործարանները ներկայում տալիս են մոտ 90 հազար կվինտալ բամբակի հունդ։ Այդ հունդից ձեթ ստանալու համար Յերևանում կայարանի մոտ հիմնված է ձիթհան գործարան։ Գործարանն ունի 4 ժամուլ, և կարող է ունենալ 16—17 հազար տոննն հունդի մշակության արտադրողականություն։ Բամբակի հունդն անցնելով ձիթհան գործարանի պրոցեսի բոլոր շրջանները, տալիս է հետևյալ նյութերը.

Լինտեր	1,5%
Սև-յուղ	16 »
Քուսպ	38 »
կճեպ	42 »
Մնացորդ	2 »

Լինտերը հունդի սերմի վրա գտումից հետո մնացած ժազմզուկներն են, որ վառոդի և թղթի արդյունագործության և արվեստական մետաքսի համար նյութ է ծառայում։

Քուսպը մանրացած և ձեթից ազատացած սերմն է։ Քուսպը արժեքավոր նյութ է թե՛ անասունների կերի համար և թե՛ իբրև պարարտացման նյութ։ Հայաստանն ունի կամ՛նատնտեսական ռայոններ, որոնց համար քուսպն ապրանքի խոշոր նշանակություն է ստանում։

Կճեպը մամուլի տակ սեղմվելով՝ պլյուսների (բրիկետների) է վերածվելու և ոգտագործվելու է իբրև բարձր ջերմություն տվող վառելանյութ։

Հույս կա, որ բամբակի հունդից ստացված այս բրիկետները կփոխարինեն գյուղացիների տնտեսության մեջ ներկայումս այրվող թանկագին գոմաղբին, որի դերը վոչ թե գյուղացիների տները տաքացնելն է, այլ որ ավելի կարևորն է, հողը պարարտացնել։ Յերևանի ձիթհան գործարանին մոտ 350 ձիու ուժ մեխանիկական էներգիա մատակարարելու է Ռիկովի անվան Յերևանի էլեքտրականը։

*) Դեկորատիվ նշանակում է զարդ տվող։

Գործարանի արտադրանքի կարողությունը հետեվյալն է.

Լինաեր	1457	կվինտալ	կվինտալն արժե	30 ռ. 50 կ.
Սև-յուղ	26208	»	» »	31 ռ. 72 կ.
Քուսպ	62240	»	» »	3 ռ. 60 կ.
կճեպ	68790	»	» »	1 ռ. 25 կ.

Այդ նյութերի ընդհանուր արժեքը հավասար է 1,240,000 ռուբլու։ Յերևանի ձիթհան գործարանից ստացված ձեթը նյութ է ծառայում ոճառի հասար, որի գործարանը կցված է ձիթհան գործարանին։



Նկ. 9. Հայրամբակկոմի ձեթհան գործարանի գլխավոր շենքը

Ոճառի արդյունագործության արտադրանքի արժեքն է 1924/25 թ. 118 400 ռ. և 1925/26 թ. 94,500 ռուբլի։ Ապագայում գործարանն արտադրելու է և գլիցերին։

Ց.ՀԱՏԱՑԱԳԻ

1. Եքսկուրսիա գնացեք Յերևանի Զ-թ-ոճառ գործարանը։
2. Թանգարանի համար վերցրեք լինաեր, սև յուղ, քուսպ, կճեպի բրիկետ, ոճառ և գլիցերին։
3. Հաշվեցեք՝ որքան ոճառ և ընկնում ձ որ գալ ո՞ր ակչության յուրաքանչյուր շնչին։

ԱՆՏԱՌԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն անտառարդյունագործության այն հեռանկարները չունի, ինչ հարևան Վրաստանը, որ անտառով շատ հարուստ է։ Մեր անտառարդյունագործության գործող արտադրական ձեռնարկությունները հետևյալներն են.

1. Փայտամշակման գործարան Յերևանում, որ աշխատում է 1926 թ. դեկտ. 1 ից։ Գործարանն ունի 5 էլեքտրոժամոր $75^1/_2$ ձիաուժ, 22 դազգյան՝ կահ-կարասիք և շենքերի փայտյա մասեր պատրաստելու համար (լուսամուտներ, դռներ, հատակ, առաստաղ և այլն)։ Գործարանն արտադրում է տարեկան 45,000 իր՝ 500,000 ռ. արժողությամբ։

2. Սղոցարան-գործարան Յերևանում, մի շրջանակավոր և մի ժեռանիքական ցիրկուլյար սղոցներով։ Գործարանն որական 425 խոր. մետր սղոցած վայտանյութ կարող է արտադրել։ Այդ դազգյանների նշանակությունն այն է, որ, սովորական սղոց-դազգյանների հետ համեմատած, արտադրողականությունը բարձրանում է մինչև $300^0/_0$, իսկ սղոցելու ծախքը, ընդհակառակը, $50^0/_0$-ով իջնում է։

3. Շահալի կայարանի սղոցարան գործարանը՝ մի շրջանակավոր դազգյանով և ցիրկուլյար սղոցով։ Այս գործարանի արտադրողականությունն է տարեկան 2831 խոր. մետր։

4. Դիլիջանում, վերաասրքավորված է յերկու սղոցարան-գործարան, մեկական ցիրկուլյար դազգյանով, յուրաքանչյուր 1699 խոր. մետր արտադրողականությամբ և 18 ձիաուժ։

5. Շամշադինի 4 հատ սղոցարան-գործարաններ, որոնցից մեկը՝ ձիապատույտ անիվով, իսկ մյուսները՝ կողքի-ցիրկուլյար։ Դրանցից առաջինի արտադրողականությունը հասնում է մինչև 1415 խոր. մետր, իսկ մնացած յերեքինը՝ մինչև 200,000 շպալի յերկաթուղու համար։

6. Ալրուժի շրջանի յերկու ցիրկուլյար դազգյան՝ 5663 խոր. մետր փայտանյութի և 180,000 շպալի հնարավոր արտադրողականության։

Ց.ՀԱՏԱՑԱԳԻ

Եքսկուրսիա գնացեք ձեր գպրոցին մոտիկ անտառարդյունագործական ձեռնարկության ծանոթանալու համար։

ՍՆՆԴԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԱՂԱՅՆԵՐ. Հայաստանի ժողտնտխորհի տնօրինության ներքո մինչև 1924 թ. գտնվում էին 4 էլեքտրական ալրաղացներ, 2 նավթամոտոր և մեկ ջրաղաց։ 1924 թ. այդ ալրաղացները հանձնվե-

ցին Յերևանի կոմմունալ անտեսությանը։ Արդյունաբերությունից առաջ, որը Հայաստանը կտրված եր աշխարհից, և Ռուսաստանից այլևս չեր ներմուծվում ու բավական փոխարեն չկրկին անչափ հացահատիկների մշակության, այդ ձեռնարկությունները շահագործվում եյին ամբողջությամբ։

գործարան	կաթի կուլեկտիվ քանակը	Տոկոսը ընդհանուրի	կաթի կուլեկտիվ քանակը տոննաներով	Ընդհանուր կաթի քանակը տոննաներով
Յերևանի	17,617	4,9	8,656,9	65,179
Լենինականի	28,647	6,6	18,687	94,393
Եջմիածնի	14 959	4,9	7 351	43,402
Ն. Բայազետի	18,836	5,7	10,798,5	53 414
Լ. Փամբակի	34,859	7,4	25,694,5	75 756
Դիլիջանի	15,234	6 6	9 981,2	54,056
Զանգեզուրի	15,969	5,7	9,149	50,408
Դարալագյազի	4,585	5,7	2,628,5	24 390
Մեղրու	1,144	4,9	562,1	12 322
Հ. Ս. Հ	151 840	6,11	93 508 8	473,300

Տոկոսը ընդհանուր կաթի քանակի

8'0

Ընդհանուր կաթի քանակը տոննաներով	38,467,6	131,976,5
Ընդհանուր վերլուծված կաթի տոննաներով	5 338,2	13,995,1
	7,730,7	26,417,8
	3,554,2	10,905,2
	4,374 4	15,173,0
	6,204,4	31,898,9
	4,425,5	14,406,7
	4,128,4	1,3274,4
	1,702,7	4,331,2
	1,009,1	1,571,2
Տոկոսը ընդհանուրի	0,8	

Հետագայում, այդ ալրաղացներից շահագործում եր մեկ էլեկտրաղաց «Հատիկ» անունով։ Յերկոմտրեստը 1926 թ. այդ ձեռնարկները լուծարքի յենթարկեց։ Մեկ էլեքտրաղաց հանձված է Լուսվաշինի անվան դպրոցին։

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ։ Յերկրի ամբողջ կաթի արտադրանքը կարելի չե հաշվել հաժապատասխան 98 եջում դրված աղյուսակի։

Վորպեսզի վորոշած լինենք ամբողջ կաթի արժեքը, ընդունենք թե ամբողջ 131,976 տոնն կաթը պանրի չե վերածվում։ Կստանանք 19656 տոնն պանիր։ Ընդունելով պանրի մի կվինտալը 61 ռուբլի, ամբողջ կաթի արժեքը հավասար կլինի մոտավորապես 12 միլիոն ռուբլու։

Արդյունագործական կաթնատնտեսությունը Հայաստանի գավառներում ամենից շատ զարգացած եր Լոռի-Փամբակում։ Պատերազմի և քաղաքացիական կռիվների ընթացքում այդ արդյունագործությունը խոշոր վնասներ կրեց։ Ներկայումս այդ գավառում կաթնատնտեսությունը վերականգնվում է. ամենուրեք կազմակերպվում են կաթնատնտեսական արտելներ, գյուղական ընկերություններ, բացվում են պանրագործարաններ։ Կաթնատնտեսական կոոպերացիան դրավում է գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ առաջին տեղը թե վիլավորների և թե կոոպերացված անտեսությունների հաշվով։

1925 թ, հունվարի 1-ին Հայաստանում չեղել է ընդամենը 70 կաթնատնտեսական արտել—5,325 անտեսությամբ և 16,400 կովով։ 1926 թ. հոկտեմբերի 1-ին կաթնատնտեսական կոոպերացիան ընդգրկում է 18,652 կով*)։

Հայաստանի պանրագործարանների արտադրանքի արժեքն այժմ բարձր է, քան պատերազմից առաջ։

1913 թ.	500 000 ռուբլի	100%
1923-24 թ.	390,500 »	78,1 »
1924-25 »	541,600 »	108,3 »
1925-26 »	558,800 »	111,8 »

Ինքնահինքյան հասկանալի է, վոր Հայաստանի կաթնատնտեսության արդյունագործությունը կարող է անհամեմատ ավելի մեծ արտադրանք տալ։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կովերի քանակն ավելացնել, բարձրացնել նրանց կաթնատվությունը, լավացնել նրանց ցեղը ռացիոնալ կերակրումով։ Ռացիոնալ կերակ-

*) Այս ճյուղի լայն զարգացումն առաջադրեց նրա առանձնացման հարցը, այսինքն կազմակերպվեց «Պանիր-Յուղ» կենտրոնը։

բուն իր հերթին պահանջում է խոտացանքերի տարածություններն ընդլայնել։

Հիմնական խնդիրը է Հայաստանի համար՝ հրաժարվել գյուղատնտեսական հացահատիկային հնադարյան սիստեմից և անցնել առնասապահական տնտեսությանը։

Ուշադրություն

1. Այցելեցեք վորևե կաթնատնտեսական արտել և պատրաստ գործարան։

2. Դիագրամներ կազմեցեք այս գլխում դրված տվյալների համապատասխան։

ԾԽԱԽՈՏԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

Ծխախոտի արդյունագործությունը Հայաստանում լայն հեռանկարներ ունի և նրա արտադրանքի սպառումը լիովին ապահովված կարելի է համարել։

Ընդունելով Հայաստանի բնակչությունն ընդհանուր թվով մեկ միլիոն, սրանցից ծխողներ՝ 10%-ը և մի ծխողին որպես ծխախոտի 15 մխավոր (գլանակ), գտնում ենք, վոր Հայաստանն ինքը տարեկան 45,000,000 գլանակ է սպառում։ Այդ հաշվով ընդունելով, վոր 1,000 գլանակին գնում է 441 գրամ ծխախոտ, գտնում ենք, վոր Հայաստանում սպառվող ծխախոտը տարեկան՝ 206,4 կվինտալ, իսկ տարեկան՝ 2,447 կվինտալ է անում։ Եթե ծխախոտի այդ քանակը գրամի վերածելու լինենք, ընդունելով 1000 հատ գլանակի արժողությունը 3 րուբլի, կստանանք տարեկան 135,000 ռուբլի, իսկ տարեկան 1,620,000 ռուբլի։

Այժմս Հայաստանի սպառվող ծխախոտի մեծագույն մասը ներմուծվում է Վրաստանից, այն ինչ՝ մեր ծխախոտագործության փորձերը ցույց են տալիս, վոր մոտիկ ապագայում մեր ծխախոտի արդյունագործությունը սեպհական բարձր վորակի հում նյութով ապահովված է լինելու։ Ներմուծվող ծխախոտի քանակը պիտի իջնի, և Հայաստանն իր կարիքները կարող է սեպհական ծխախոտով բավարարել։

Դեռ ևս 1921 թվին Հայկոոպը հիմնում է Յերևանում ծխախոտի գործարան՝ 2 գլխզու, 2 լցնող և 1 մանրացնող մեքենաներով։

Հետագայում գործարանն ընդարձակվում է և գործում է 4-ական գլխզու և լցնող մեքենաներով և տարեկան 4,200,000 գլանակի արտադրողականությամբ։

1925 թվին ծխախոտագործարանն անցավ Հայստատանի ժողտնտխորհի տնօրինությանը։

Ուշադրություն

1. Այցելեցեք ծխախոտագործարանը և ծանոթացեք գործարանի պրոցեսին։ Դպրոցական բժշկի հետ ծխելու վնասի մասին զրույց ունեցեք։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Յերեք տնք հետադարձ հայացք դեպնք Հայաստանի արդյունագործության տարբեր ճյուղերի վրա, կտեսնենք, վոր վերջին տարիները մեր արդյունագործությունն ընդհանուր վերելք և ապրում և այդ վերելքն ընթանում է արագ տեմպով։ Այդ ժամանակաշրջանում տարված աշխատանքները յերեք ուղղություն են ունեցել. ա) գոյություն ունեցող և պատերազմներից քայքայված ձեռնարկությունների և գործարանների վերականգնում (Ալահվերդի, Զաթարի «Կարմիր Նոյեմբեր» գործարաններն ու հանքերը), բ) նոր գործարանների կառուցումը (ձեթ-ոճառ, կաբրիտի, ժանվածքային) և գ) մի շարք այլ գործարանների վերակառուցումը (կամ, ինչպես ասում են, ռեկոնստրուկցիա) ավելի բարձր տեխնիկական սարքավորումով (բամբակափուչ, ատաղձագործարաններ և հիդրոկայաններ)։

Հայաստանի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1913 թ. արտադրանքի հետ համեմատած տալիս է հետևյալ պատկերը*)։

Տարի	1913 թ.	1923-24	1924-25	1925-26
Արտադրանք՝	9,998,500 ռ.	2,407,700	5,942,200	7,324,400
տոկոսներ	100%	24,1%	59,4%	73,3%

1926-27 թվին միմիայն Ժողտնտխորհի ձեռնարկությունների ընդհանուր արտադրանքը հասնում է 6,165,000 ռուբլու**)։ Սրան եթե ավելացնենք Հայբամբակկոմի բամբակափուչ և ձեթ-ոճառ գործարանների և Հայտնտտարեստի արտադրանքը մոտ 4 միլիոն ռուբլի, կստանանք 1926-27 թ. արդյունագործության ընդհանուր արտադրանք 10,165,000 ռուբլի, վորն արդեն անցնում է 1913 թ. արտադրանքից։

*) Տես Հայաստանի Խ. Ս. Հ. Ժողովրդական տնտեսությունը 1924-25 և 1925-26 թ. թ. Պետպլանի Կոնյունկտ. խմբերդի բյուրո։

**) Տես ընկ. Հ. Բալյանի զեկուցումը ՀԽՍՀ կենտգործկոմի 2-րդ հերթական նստաշրջանում։

Արտադրության աճման հետ միասին աճել է նաև արդյունաբերության վրա զբաղված բանվորական ուժը։ Բանվորների, ծառայողների ու սարքին պերսոնալի թիվը փոփոխվում է Ժողտնտխորհի ձեռնարկություններում հետևյալ կերպով.

	առ 1-ն ապրիլի 1925 թ.	առ 1-ն հունվարի 1927 թ.
1. Բանվոր	1,475	4,134
2. Ծառայող	194	401
3. Սարքին պերսոնալ	114	190

Արդյունաբերության և արտադրության վերելքին զուգընթաց բարձրանում է նաև աշխատավարձը։ Աշխատավարձի աճումը հետևյալ պատկերն է տալիս (Ժողտնտխորհի ձեռնարկություններում) չերվոն ռուբլիներով։

Ձեռնարկություն	1924-25 թ.	1925-26 թ.	տոկոս
«Արարատ»	57,5 ռուբ.	61,8 ռուբ.	107,5
Կաշվարդյունագործ.	36,8 »	61,4 »	166,9
Պոլիգրաֆարեսա	47,9 »	62,5 »	130,5
Մեքենագործարան	52,0 »	57,3 »	110,2
Ելեքտրակայան	45,1 »	49,8 »	110,4
Ալահվերդի	34,0 »	40,0 »	119,7
«Կարմիր նոյեմբեր»	24,9 »	37,1 »	149,0
Տեքստիլ գործարան	14,7 »	25,6 »	174,1

ԿԱՊԻՏԱԼ ՕԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Արդյունագործության վերելքը և նրա բուն ընթացքը հասկանալու համար կարևոր է կանգ առնել այն հիմնական կապիտալների վրա, որոնք ներդրված են արդյունագործության մեջ Ժողտնտխորհի, Հալբամբակի և Հայանտառտրեստի կողմից։

Ներդրված հիմնական կապիտալներ

Ժողտնտխորհ	Բացարձ. թվեր. (հազ. ռ.) 1924-25 թ.	1925-26 թ.	ընդամենը	ընդամենը տոկոսով
Մանածագործ.	503,8	822,2	1,326 0	14,6
Ելեքտրակայ.	879,0	1 617,3	2,496.3	27,4
Պղնձի արդյուն.	630,5	1,472,5	2,103.0	23,1
Այլ արտադրութ.	83,8	717,2	80 1.0	8,8
ընդամենը Ժ. Տ. Խ.	2,097,1	4,629,2	6,726,2	73,9
Հալբամբակ Բամբակագման	561,0	1,643,8	2,204,8	24,2
Հայանտառտրեստ Սղոցարան-գործ.	33,4	133,9	167,3	1,9
գումար՝	2,691,5	5,406,9	9,098,4	100

Այդպիսով, ընդհանրապես կարելի չե ասել, որ մեր արդյունաբերության զարգացումն ընթանում է զերազանցապես նոր շինարարության և վերակառուցման (ռեկոնստրուկցիա) գծով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՊԵՏԱԿԱՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1923 թ. վիճակագրության տվյալներով Հայաստանի արդյունագործական ձեռնարկությունների թիվը 895 եր։ Այդ հիմնարկությունները բաշխվում էին ըստ սեփականության հետևյալ ձևով.

Ընդամենը	895	100 %
պետական	112	12, 5 »
մասնավոր	774	86, 4 »
կոոպերատիվ	10	1, 1 »

Սակայն, չեթե մոտենանք այդ ձեռնարկություններին, նկատի առնելով նրանց տեսակարար կշիռը, այսինքն նրանց արտադրանքի տեսակետից, այլ պատկերը ենք ստանում.

Ձեռնարկների արտադրանքի արժեքի տոկոսներն ու Հանրապետության ընդհանուր արտադրանքի գումարը.

պետական	70 %
մասնավոր	15,1 »
կոոպերատիվ	14,9 »

Սրան ավելացնելով ձեռնարկություններում զբաղված բանվորական ուժը, տեսնում ենք.

պետական ձեռնարկություններում	1.421 մարդ
մասնավոր »	1.245 մարդ
կոոպերատիվ »	108 մարդ
Ընդամ.	2.774 մարդ

Այսպիսով, պարզվում է, որ մասնավոր արդյունագործությանը, որ ուներ արդյունագործական ձեռնարկությունների 86,4%-ը, արտադրանքի 15,1%-ն է ընկնում։ Այն ինչ պետական ձեռնարկություններում, որոնց քանակական %-ը ցածր է (12,5%), արտադրանքի 70% է ընկնում, իսկ 1,1% կոոպերատիվ ձեռնարկություններին՝ արտադրանքի 14,9%-ը։ Բանվորների բաշխումը նույնպես մասնավոր արդյունագործության ոգտին չի խոսում։ Մեկին թվով մասնավոր ձեռնարկություններին ընկնում է 6,1 մարդ, այն ինչ պետական ձեռնարկներին ընկնում է մեկին թվով 12—13, իսկ կոոպերատիվ ձեռնարկություններին 10—11 մարդ։

Պարզ է, որ մասնավոր արդյունագործություն ասելով, մենք պիտի հասկանանք մանր անհատագործական և արհեստանոցային տիպի ձեռնարկները, որոնց տեսակարար կշիռը, համեմատած պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների հետ, աննշան է։ Հետագայում, վերջին տարիների պետական և կոոպերատիվ արդյունագործության վերելքի բուռն ընթացքն ավելի ևս խորացնում է այս հարաբերությունը, մասնավոր արդյունագործությանը Հանրապետության արդյունագործության մեջ աննշան տեղ տալով և ավելի ուժեղացնելով մեր սոցիալիստական անհեռանկարությունը։

Ս. Հյուսեան

Վերև բերված թվական տվյալները դիագրամների վերածեք։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ

Հայաստանը վառելանյութեր (քարածուխ, նավթ) չունի, և չեթե արդյունագործական ձեռնարկությունների էներգիայի աղբյուրը չերժությունը միայն լիներ, Հայաստանը դատապարտված կլիներ զրկվելու իր սեփական ինդուստրիան զարգացնելու հնարավորություններից։ Հեռավոր վայրերից քարածուխ ներմուծելով, չի կարելի մտածել անգամ արդյունագործություն ստեղծելու մասին։

Բարեբախտաբար, Հայաստանն ունի էներգիայի անսպառ պաշարներ. նրա լեռնային գետերի մեջ սրընթաց հոսող ջրերի ուժն է այդ, որ հասնում է 500—600 հազար ձիու ուժի։ Ամբողջովին շահագործելով այդ հսկայական էներգիան, Հայաստանը կարող է ծածկվել արդյունագործական ձեռնարկությունների ամենախիտ ցանցով, իր ամբողջ արտնտպրոը վերածել էլեկտրական էներգիայի և նույն էներգիան ծառայեցնել գյուղատնտեսական աշխատանքների համար։

Հին ռեժիմի ժամանակ էլեկտրիֆիկացիային աննշան տեղ էր տրվում չերկրի տնտես. կյանքի մեջ։ Բավական է ասել, որ ամբողջ չերկրում էներգիայի ամբողջ ծավալը 2.944 ձիու ուժ էր, որը բաշխվում էր հետևյալ ձևով.

Կ Ա Յ Ա Ն Ի Տ Ե Ղ Ը	Էներգիայի աղբյուրը	Քանի ձիու ուժ	Ինչ նպատակի էր ծառայում
Ալլահվերդու հանքագործական շրջան	ջուր	1000	հոգում էր արդյունագործության կարիքները
» » »	կերմուխ.	800	
Զանգեզուրի հանքերը	ջուր	400	նույնը
» » »	կերմուխ.	400	
Ձերիան	ջուր	300	հասարակական ոգտագործության համար
Լենինական	կերմուխ.	24	
Դիլիջան	կերմուխ.	25	»
Գորիս	ջուր	25	»
Շահալի	ջուր	20	սղոցարանի համար
Ընդամենը		2994 ձ. ուժ	

Բոլոր այս էլեկտրակայանները խորհրդայնացման ժամանակին կիսաավեր դրության մեջ էին և ունեին մաշված սարքավորում։ Հայաստանի Ժողկոմխորհը, այս կայանները վերականգնելուց և սարքավորումը լրացնելուց հետո, կանգ առավ Խորհրդային Միության էլեկտրիֆիկացիայի հոյակապ շինարարության մեջ իր մասնակցությունը ծրագրելու և կատարելու հարցի առաջ։

Յեթե մենք տոկոսի վերածելու լինենք այն էլեկտրական ուժը, որ մինչև խորհրդայնացումն ունեցել է Հայաստանը, կստանանք մի չնչին թիվ։ 500.000 ձիաուժ էներգիայի պաշար ունեցող մի չերկիր ունեցել է 2.994 ձիու ուժ, այսինքն ոգտագործել է 0,5%-ը։

Ժողտնտխորհին կից կազմակերպված Էլեկտրաշինացման Հանձնաժողովն արագ թափով լայնացնում է չերկրի էլեկտրական գործը։

Յեթե 1913 թ. չերկրի ոգտագործվող էներգիայի քանակը 100% ընդունենք, 1921–22 թ., շնորհիվ ապրած քայքայման, այն ընկնում է մինչև 86,3%, 1922—23 թ. մնում է համարյա նույնը՝ 87,9%, բայց 1923–24 թ. թռիչք է գործում մինչև 127,4%, իսկ 1924—25 թ.՝ 140,5%.

Կառուցված են նոր հիդրոէլեկտրակայաններ

1. Յերևանի Ռիկովի անվան էլեկտրակայանը, որ բացվեց 1926 թ. մայիսի 16-ին	2.800	ձ. ուժ.
(Հասցվելու է մինչև	5.600)	» »
2. Նոր Բայազետինը	216	» »
3. Ղարաքիլիսայինը	65	» »
(Հասցվելու է մինչև	400)	»
Ընդամենը կառուցված	3081	»
(ամբողջ ծագիրն ավարտվելուց հետո հասցվելու է մինչև	9081	» »

Կառուցվում են յեվ շուտով կավարտվեն

1. Լենինականինը	3.000	ձ. ուժ.
(հասցվելու է մինչև	6.000—7.000)	» »
2. Իջևանինը	500	» »
(հասցվելու է մինչև	2.000)	» »
3. Սահիանավանինը	350	» »
(հասցվելու է մինչև	600)	» »

4. Ղաթարի հանքերինը	900	ձ. ուժ
(հասցվելու է մինչև	2.700)	» »
Ընդամ. կառ.	4.750	» »
(հասցվելու է մինչև	16.050)	» »



Նկ. 10. Ռիկովի անվան հիդրոէլեկտրակայանը Յերևանում

Այդպիսով, կառուցված և կառուցվող էլեկտրակայանների ուժը հավասար է 7.831 ձիաուժի։

Պետպլանի 5-ամյա շինարարական ծրագրով 1930 թ. կառուցվող չրեէլեկտրակայանները կունենան 48.016 ձիաուժ էներգիա։ Միայն Քուրագետի վրա կառուցվող էլեկտրակայանն ունենալու է 30.000 ձիաուժ էներգիա։

Այդպիսով, Հայաստանի 500.000 ձիաուժ էներգիայի պաշարների ոգտագործումը կարտահայտվի հետևյալ տոկոսներով.

1. Մինչխորհրդային շրջանում	2.530	ձ. ուժ.	0,5%
2. Խորհրդային շրջանում մինչև 1926 թ.	5.611	ձ. ուժ.	1,1 »
3. Մատ ժամանակներս	9.361	» »	2,0 »
4. 5-ամյա ծրագրով, 1930 թվին	50.546	» »	10,1 »

1930 թվին, 50,000 ձիաուժ էներգիա ոգտագործելով, Հայաստանն ունենալու է մի էներգիա, որ հավասար է 500.000 բանվորների ուժի, որ գիշեր և ցերեկ անդադար աշխատելու է չերկրի բնակչության համար բարեկեցիկ կյանք ստեղծելու համար։

«Սոցիալիզմ+էլեկտրիֆիկացիա—այդ է սոցիալիզմը» ասում է ընկ. Լենինը։

Ուշադրություն

1. Եթե հնարավոր է, ձեր շրջանի կառուցվող և կառուցված էլեկտրակայանները՝ մոտիկից նրանց ծանոթանալու։
2. Թվական տվյալներից դիագրամներ կազմեցեք։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանն արդյունագործություն ստեղծելու հսկայական նախադրյալներ ունի։ Նախ և առաջ մեր յերկիրը խոշոր տվյալներ ունի լայն չափերով ծավալելու լեռնային արդյունագործությունը։

Ինչպես տեսանք, Հայաստանի պղնձի հանքերն այնքան բազմաթիվ են և հարուստ, որ միութենական նշանակություն ունին։

Հայաստանի պղինձն անցյալում մշակում եր ոտար դիշատիչ կապիտալը, հում նյութը դուրս եր տարվում յերկրի սահմաններից՝ ոտար գործարաններում վերամշակելու նպատակով։ Այժմ վոչինչ չի արգելում մեզ մեր հում պղինձը մեր յերկրում, մեր սեփական մետաղագործարաններում վերամշակելու և միայն պատրաստի ապրանքներն արտահանելու արտասահմանյան շուկա։

Հայաստանն ունի գունավոր այլ մետաղներ, որով ազքատ է Միությունը։ Դարալագյազի արճճի կամ կապարի հանքերն, ըստ յերևույթին, անապին պաշարներ ունին. հենց առաջի հնգամյակում ծրագրված է արճիճ ձուլելու գործարան հիմնել։

Հայաստանի պեմզան համայնեվրոպական նշանակություն ունի. Յերևանի գավառում գտնվում է ծծումբ, մարմար և ագաթաբ, Սևանա լճի հյուսիս արևելյան ափերի վրա՝ խրոմիտի և այլ մետաղների հանքեր, Իջևանում՝ ցեմենտի և լիտոգրաֆիկ քարեր։ Հարուստ է Հայաստանը նաև տարբեր գույների շինարարական քարերով։

Ուսումնասիրելով Հայաստանի գյուղատնտեսությունը, մենք տեսանք, որ այն գլխավորապես հացահատիկային յեղանակով է տարվում, որը, Հայաստանի բնական պայմաններին անհամապատասխան լինելով, միանգամայն անշահավետ է յերկրի տնտեսության համար։

Հայաստանի գյուղատնտեսությունը պիտի տարվի և այժմ սկսում է տարվել տեխնիկական բույսերի, այգեգործական և անասնապահական յեղանակներով։ Այդ յերեք յեղանակների տնտեսությունները բոլոր պայմաններն ունին Հայաստանում լայն չափերով ինտենսիվ ձևերով զարգանալու և ծավալվելու։ Այդ տնտեսությունները լրացվող մթերքները բավարար չափով հում նյութեր են ծառայելու յերկրի գյուղատնտեսական մթերքները մշակող արդյունագործության համար։

Անասնապահական տնտեսությունը կյանքի յե կանչելու կաթնատնտեսական և կաշվի արդյունագործությունը. այգեգործությունը՝ գինու-սպիրտ կոնյակի և տեխնիկական մշակույթները՝ տեքստիլ, ձեթ-ոճառի, ծխախոտի և այլն արդյունագործությունը։ Յերրորդ ուղղությունը, որով զարգանալու յե Հայաստանի արդյունագործությունն, այդ քիմիական նյութերի մշակությունն է։ Դաբերի ընթացքում եքստենսիվ ձևերով տարվող հացահատիկային տնտեսությունը միանգամայն ուժասպառ է դարձրել մեր հողերը։ Ինտենսիվ ձևերով տարվող անասնապահական, այգեգործական և տեխնիկական տնտեսությունները հրամայողական պահանջ են դնում հողերի արվեստական պարարտացման։ Քիմիական արդյունագործությունը կանչված է հողին պարարտացման նյութեր մատակարարելու։

Սակայն միմիայն հում նյութերի գոյությունը բավարար չե, վորպեսզի յերկրում զարգանա և ծավալվի արդյունագործությունը։ Անհրաժեշտ է ունենալ արդյունագործության համար էներգետիկ միջոցներ և հաղորդակցության հարմար ճանապարհներ։

Հայաստանը չունի քարածուխ, չունի նաև նավթ և տորֆ։ Սակայն Հայաստանն ունի ապիտակ ածուխ։

Մեր յերկիրը լեռնային գետերի յերկիր է։ Ինչպես տեսանք, նրա գետերը կարող են ստանալ 500,000 ձիաուժ էլեկտրական էներգիա։

Հայաստանի էլեկտրիֆիկացիայի հիմքն արդեն դրված է։

Հրազդանը Յերևանի Ռիկովի անվան էլեկտրակայարանում իր աշխատանքային տուրքն արդեն վճարում է։ Նա լուսավորում է քաղաքը և պատեցնում է պետական գործարանների մեքենաների անիվները։

Լոռու-Փամբակում հիմնադրված է յերկրորդ Զագեսը, մեր Զորագեսի 30.000 ձիաուժ էլեկտրակայանը։ Այդպիսի կայաններ Քանաքեռում և Սոլակում Հրազդանի վրա, 50.000 ձիաուժ իրենց հերթին են սպառում, վորոնք ի միջի այլոց, պետք է ծառայեն նոր 100.000 դես. ներկայումս վոչ-պիտանի հողեր։

Զորագեսի էլեքտրակայանն իր էներգիան պիտի ստանա Լոռու պղնձի հանքերին և այստեղ պետք է հիմնադրվի հսկայական քիմիական արդյունագործություն։ Այստեղ, էլեկտրական էներգիայի միջոցով ոդի բորակածինը կապելով կալցիում կաբիդին, ստանալու յեն ցիան-ամիդ-կալցիում նյութը, որը հրաշալի պարար-

ատնյութ և ծառայելու մեր ուժասպառ լեզած հողերի համար։ Քոլագերանի քիմիական արդյունագործության այլ նյութերը շուկա չեն գտնելու ամբողջ Միության մեջ։

Յերևանի շրջանի էլեկտրակայանների էներգիան ոգտագործվելու չե այս շրջանում արդյունագործական գործարաններ ծավալելու համար, վորտեղ մշակելու չեն Հայաստանի գյուղատնտեսական հում նյութերը (բամբակագործան, ձիթհանքի, ոճառի, ծխախոտի, կաշվեգենի, գինու ոպիրա-կոնյակի և այլ գործարաններ, ինչպես և պղնձի մետաղագործարան)։ Այստեղ մշակման և յենթարկվելու տարեկան 98.280 կվինտալ կարմիր պղինձ։

Արդյունաբերական յերրորդ շրջանը լինելու չե Լենինականը, վորտեղ կենտրոնանալու չե Հայաստանի անկվածային (տեքստիլ) արդյունագործությունը։ Ինչ վերաբերում է հազորդակցության ճանապարհներին, այս բնագավառում նույնպես տարվում են խոշոր աշխատանքներ։

Ծրագրվում է կառուցել Յերևան-Ազատաֆա յերկաթուղագիծը, վորը կապելու չե Հայաստանի դաշտային (Յերևան) նախալեռնային հատայք) և լեռնային (Դիլիջան) գոտիները թե իրար հետ և թե Թիֆլիս-Բագու յերկաթուղագծի հետ։ Այդ գծին միանալու չե մի ճյուղ, վորը կապելու չե Յելենովկան Նոր-Բայազետի հետ։

Ախթա-Ջուլֆա յերկաթուղագծին միանալու չե մի ճյուղ, վորը կապելու չե Զանգեզուրի Ղաթարի պղնձահանքերն այդ գծի հետ։

Եելեկտրական տրամվայով Յերևանը կապվելու չե՝ Եջմիածնի, Աշտարակի, Ղամարլվի և Քանաքեռի հետ։ Ելեկտրական յերկաթուղագծեր են գցվելու՝ մեր գավառները կենտրոնի հետ կապելու համար։ Զանգեզուրը և Դարալագյազը կապվելու չեն Յերևանի հետ խճուղիներով և ավտոտրանսպորտով։

Այդպիսով, Հայաստանում ստեղծվելու չեն արդյունագործական յերեք շրջաններ, իրենց աշխատանքի չեռ ու գեռով, իրենց պրոլետարիատով, և յերեք քաղաքները՝ Յերևանը, Լենինականը և Ղարաքիլիսան հանդես են գալու իբրև խոշոր արդյունագործական կենտրոններ՝ հարյուր-հազարավոր բնակչությամբ։ Այդ շրջանները լինելու չեն՝

1. Յերևանի շրջան—գյուղատնտեսական հում նյութերի և մետաղների մշակության կենտրոն։

2. Լենինականի շրջան—Հայաստանի անկվածային (տեքստիլ) արդյունագործության կենտրոն։

3. Ղարաքիլիսայի շրջան—Հայաստանի լեռնային և քիմիական արդյունագործության կենտրոն։

1926—27 տնտեսական տարում Հայաստանի ժողովրդական Տնտեսական Խորհուրդն ընդունել է առաջիկա հնգամյակի ($^{1926}/_{27}$—$^{1930}/_{31}$ թ. թ.) համար ծրագիր, ըստ վորի այդ ժամանակաշրջանում հետևյալ կերպով է ծավալվելու Հայաստանի արդյունագործությունը.

1. Կառուցվելու չեն պետական վերահսկման և ապրանքի գործարաններ։

2. Տեքստիլ գործարանի իլիկների թիվը 40000-ից մինչև 100 հազարի և գազդյահների թիվը մինչև 2500-ի չեն հասցվելու։

3. Կաբրիտի գործարանը տեղափոխվելու չե Քոլագերան և սահանում չե ավելի մեծ ծավալ։

4. Քոլագերանում կառուցվելու չե ծծմբաթթվուտի գործարան։

5. Չիմշադրվելու չեն բազալտ ձուլող և տուֆի գործարաններ,

6. Յիան-ամիդ-կալցիումի գործարանը Զորագեսի ելեկտրակայանի մոտ։

8. Լայն ծավալներ են տրվում կաշվի, անտառեղենի և պոլիգրաֆ արդյունագործության ու պղնձագործարաններին։

Այդ բոլորի համար նախատեսված և ծախսել 43.317.100 ռուբլի, վորից 9.533.300 ռ. հատկացվելու չե բնակարանային շինարարության։

Ուշադրություն

Կարդացեք «Հասարակական սերիա» պատանու դրադարանի № 1 «Քաղաք և գյուղ» դրքույկը։

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տնայնագործական են կոչվում այն աշխատանքները, վոր կատարում են գյուղացիները գյուղատնտեսական աշխատանքներից ազատ ժամանակը։

Այդպիսով, տնայնագործությունը գյուղացու հաճար յերկրորդական տեղ բռնող, նրա գլխավոր տնտեսության ժամանակ աշխատանքն է։ Կան պայմաններ և վայրեր, վորտեղ տնայնագործությունը տնտեսության մեջ առաջնակարգ տեղ է բռնում։

Տնայնագործությունը մշակողական արդյունագործությունից և. գործարանային արդյունագործությունից նրանով է տարբերվում, վոր ամբողջ աշխատանքը ձեռքով և շատ պրիմիտիվ ձևերով է կատարվում։ Արհեստավորից տնայնագործը նրանով է տարբերվում, վոր արհեստավորը քաղաքում է աշխատում, ունի իր բնակարանից դուրս արհեստանոց և վարձու աշխատավոր (աշկերտ) ու աշխատան-

քը կատարում է վորոշ պատվիրողի համար. այն ինչ՝ տնայնագործը գյուղացի չե, աշխատում է իր ընտանիքի, տնդամների ոգնությամբ և աշխատանքը կատարում է վոչ վորոշ պատվիրողի, այլ լայն շուկայի համար:



Նկ. 11.

Տնայնագործության զարգացումը Հայաստանում ունի բազմաթիվ նպաստավոր պայմաններ.

1. Ճանապարհների և խոշոր արդյունագործական կենտրոնների բացակայության պատճառով հայ գյուղացիներն իրենց ձեռքի տակ ունեն չվաճառահանված հում նյութեր, վորոնցից զանազան իրեր են պատրաստում:

2. Մեր լեռնային վայրերում ձմեռը տևում է 6—7 ամիս, և գյուղացին, գյուղատնտեսական աշխատանքներից ազատ լինելով, իր ուժերը արամադրում է տնայնագործության: Հողի սակավությունը հնարավորություն չի տալիս գյուղացու ամբողջ յեռանդը դրսևորելու հողագործության մեջ:

Վերջապես, քաղաքներից, ճանապարհների բացակայության պատճառով, կտրված լինելով, գյուղացին հնարավորություն չունի գործարանային ֆաբրիկատներ ձեռք բերելու և իր տնտեսության համար անհրաժեշտ իրերն ինքն է պատրաստում:

Հայաստանի տնայնագործները հում նյութերից մշակում են բուրդ, բամբակ, փայտ, կավ և մետաղներ:

ԲՐԴԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Վոչխարի հայկական «ժապեխ» կոչված տարատեսակը տալիս է շատ լավ բուրդ գորգագործության համար: Գորգագործությունը հնուց Հայաստանում բուն է դրել: Պատերազմից առաջ Հայաստանի 574 գյուղերում գորգագործությամբ պարապում էին 6674 տնտեսություն և արտադրում 134.394 ռ. ապրանք: Գորգագործությունը զարգացած էր մեր լեռնային գոտում Դիլիջանի, Իջևանի, Ղարաքլիսայի շրջաններում, Լոռում, Զանգեզուրում և Դարալագյազում. պատրաստում էին ջեջիմ, փալաս, չաժան կամ քիլիմ, խալի կամ գորգ, խուրջին, մաֆրաշ և այլն: Հայկական գորգերը մեծ մասամբ ծանր և կոպիտ են, բայց վերին աստիճանի դիմացկուն. նկարների մեջ մեծ տեղ են բռնում յերկրաչափական որնամենտը, մարդու և կենդանիների նկարներ: Պատահում են շատ հաջող և գեղեցիկ նկարներ: Զանգեզուրի գորգերի վրա հաճախ նկարված են լինում ծաղիկներ, գլխավորապես վարդի փնջեր:

Ներկայումս գորգագործությունը վերականգնվում է: Դիլիջանի գավառում Իջևան, Սևքար, Գելքյանդ և Զայքենդ գյուղերում 592 գորգագործ տնտեսություն կա, վորոնք կազմում են այս գյուղերի բնակչության 48%. նույնը կարելի յե ասել և Կարա-Կոյա, Արդանիշ և Աղբուլաղ թուրք գյուղերի մասին:

Բրդից գործում են նաև մահուդ, սակայն տնայնագործական մահուդը ցածր վորակ ունի: Շատ տարածված են թաղիք գործելը (քեչագործություն) և բրդի թելից տաք շորեր գործելը:

ԲԱՄԲԱԿԻ ՅԵՎ ՄԵՏԱՔՍԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Բամբակի թելից Հայաստանում կտավ էլին գործում՝ գյուղացիների սեփական կարիքների համար: Սակայն այս գործի տեխնիկան շատ ցածր եր և կոպիտ կտորներ էին ստացվում:

Ջուլհակությունն սկսում է զարգանալ Հայաստանում 1917 թվից: Յերևանում ժամերիկական նպաստամատույց կոմիտեն բացեց մեծ արհեստանոցներ, վորտեղ բրդից և բամբակից մեծ քանակությամբ կտորներ էին պատրաստվում: Գաղթած վանեցիներն իրենց բարձր տեխնիկայով բարձրացրին կտորեղենի վորակը: Մեծ հռչակ են ստացել Շատախի շալերը:

Շատ աննշան քանակով, այն էլ միայն Մեղրու շրջանում, մետաքսից ջեջիմներ են պատրաստում:

Պատերազմից հետո Յերևանում և Լենինականում (Ալեքսանդրոպոլում) զարգացավ հաշիանների գործվածքը, վոր իր նրբությամբ և գեղեցկությամբ լուրջ ուշադրության է արժանի:

ԲՐՈՒՏՈՒԹՅՈՒՆ

Այս ճյուղը Հայաստանում տարածված և ամենուրեք։ Լոռում, Փամբակում և Դիլիջանում պատրաստում են կղմինդր և ջրմուղի խողովակներ։ Սակայն տնայնագործության այս ճյուղում հռչակվել է Յերևանի գավառի Յուվա գյուղը, ուրտեղ 89 տնտեսություն զբաղված են այդ գործով, ունեն 181 վառարան և 86000 ամանի արտադրանք՝ 38.800 ռ. արժեքով։ Շնորհիվ Յուվա գյուղի կավի բարձր որակի, ստացվում է լավ փայլաներկված ամանեղեն, որը և վաճառահանվում է Հայաստանի հեռավոր վայրերը։

Նկ. 12.

ՓԱՅՏԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս ճյուղը զարգացած է Լոռի-Փամբակում և Դիլիջանում։ Պատրաստում են՝ գյուղատնտեսական գործիքների փայտեղեն մասեր, թախտեր, պահարաններ և սայլերի ու փուրգոնների անիվներ և այլ մասեր։

ՄԵՏԱՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր գյուղ Հայաստանում ունի իր դարբինը, որը թե նորոգում է գյուղացիների գործիքները, թե ձիեր է պայտում և պայտեր ու մեխեր արտադրում։ Ղլեկչինները գյուղում նույնպես անպործ չեն ձգում։ Բավականին տարածված է Հայաստանում արծաթից զարդեր պատրաստելու արհեստը՝ «զարգյարուԹյունը»։ Արծաթի գոտիներ, մատանիներ, ականջի ող, արծաթի ղրամներից մանյակ՝ ահա «զարգյարների» արտադրանքը։

Այս արհեստը բարձր աստիճանի զարգացման էր հասել Վանում։ Վանեցի վարպետները ստեղծագործում են գեղարվեստական իրեր, որոնք Կովկասում մրցակիցներ չունեին։ Յերևանում սրանք այժմս արհեստանոցներ ունեն, ուրտեղ պատրաստվում են գեղարվեստական բարձր արժեք ունեցող իրեր։



ՋԱՄԲՅՈՒՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այգեգործական վայրերում ուռի ծառի մատղաշ ճյուղերից կոշիկներ են պատրաստում, որ մեծ ծառայություն են մատուցում այգեգործներին։ Ցորենի ցողուններից նույնպես զամբյուղներ են պատրաստում։

Այնտեղ, ուրտեղ կան ճահիճներ, խոտերից խսիրներ են գործում։

ԴՊՐՈՑ-ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ

Տնայնագործությանն ավելի ինտենսիվ ձևեր տալու և արհեստի դիտելիքները մասսայականացնելու նպատակով Հայաստանի Լուսժողկոմատը բացել է մի շարք դպրոց-արհեստանոցներ։

1921 թ. բացված է Ձեռարվեստի դպրոց արհեստանոց, ուրտեղ մանկատան սանները սովորում էին պատրաստել կոշիկներ, զամբյուղներ, ճամբորդական սակեր, աթոռներ և այլն։

1922 թ. հիմնվում է կոշկակարական դպրոց։

1922 թ. բացվում է կար ու ձևի դպրոց-արհեստանոց թե Յերևանում և թե Հայաստանի գանազան վայրերում։ Բացվում են և կազմարարական դպրոցներ։ 1923 թ. հիմնադրվում է կենտրոնական Դպրոց-Արհեստանոց, ուր ուներ փականագործական, ատաղձագործական բաժիններ. սրանց միացան կոշկակարական և զամբյուղա-

գործական արհեստանոցները. Ներկայումս դպրոցն ունի դարբնոց, կառագործական բաժին և գուլպայագործական արհեստանոց։ Սովորում են 106 տղա և 15 աղջիկ։

Ուշադրություն

1. Հայաստանի անասնապահությունը լուրջ ուսումնասիրության առարկա չի եղել, այնինչ ժողովրդական տնտեսության այդ կարևոր ճյուղն անհրաժեշտ է ուսումնասիրել։ Ձեր գավառագիտական բջիջներում դրեք այդ հարցը և ուսումնասիրեցեք ձեր շրջանի, յեթե կարող եք՝ ձեր գավառի, անասնապահությունը։ Այդ նշանակում է՝ պարզել, թե անասնապահության ինչ ճյուղեր կան գավառում, քանի՞ տնտեսություն և զբաղված այս կամ այն ճյուղով, ինչպես և դրված տեխնիկան. տալ պրոցեսի ու կարագրությունը. վճռքան և արտադրանքը. ինչ վորակի յե. ուր են վաճառահանում. ինչ արժեք են ստանում։

2. Յերևանի գավառի աշակերտներին հանձնարարվում է գնալ Յուվա գյուղը և ծանոթանալ այն յուրահատուկ կազմակերպությանը, վորը մշակվել և այնտեղ տասնյակ տարիների ընթացքում։ Նկարագրել այդ ճյուղը։

3. Տնասնապահական կոոպերացիայի մասին տես համանուն գլուխը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Կոոպերացիա նշանակում է գրված, անհատական, մանր անտեսությունների կոլեկտիվորեն կազմակերպված համագործակցություն։ «Կոոպերացիան»—ասում է Լենինը—« սոցիալիստական հասարակությունն կառուցելու համար անհրաժեշտ և բավարար պայմանն է»։ Մի ուրիշ տեղ Լենինն ասում է՝ «քաղաքակրթված կոոպերատորների հասարակակարգը, յեթե արտադրողական միջոցները հասարակության սեփականություն են և յեթե պրոլետարիատը բուրժուազիայի վրա դասակարգային հաղթանակն արդեն տարել է,— այդ սոցիալիզմի հասարակակարգն է»։

Կոոպերացիայի ճյուղավորություններից Հայաստանում լայն ծավալ են ստացել սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիան և սկիզբն է առել անասնագործական կոոպերացիան։

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Սպառողական կոոպերացիան Հայաստանում աճման պրոցեսի մեջ է։ 1925 թվի վերաբերմամբ սպառկոոպերացիան 1926 թվին աճել է 19,1 տոկոսով։

Ծանոթություն	Ս.ո 1 հոկտ. 1925 թ. Սոց. ընկ.	Ս.ո 1 հոկտ. 1926 թ. Քաղաքական ընկերքոլ.	Տոկոսային հարաբերություն
1. Ֆաբրիկ-գործարանային խմբակներ	2	3	150%
2. Գավառային կենտրոնների »	7	7	100%
3. Ռուշոր բանկոոպների »	2	2	100%
4. Գյուղական սպառողական ընկերությունների »	57	69	121%
Ամբողջ ցանցը	68	81	119,1%

Այդ աճումը տեղի յե ունեցել գլխավորապես գյուղական սպառողական ընկերությունների հաշվին, վորոնց թիվը 57-ից բարձրացել է մինչև 69։

Ընկերությունների քանակի հետ աճել է նաև սպառողական կոոպերացիայի խանութների ցանցը, վորը հետևյալ պատկերն ունի.

Սպառող. ընկերութ. խմբակներ	1925 թ. 1 հոկտ. խանութներ	Ս.ո 1 հոկտ. 1926 թ. Խանութ	Տոկոս
Գյուղական. Սպ. ընկերություններ	176	201	114,2%
Ֆաբրիկ-գործարանային »	14	18	128,6 »
Գավառի կենտրոններ »	51	57	111,7 »
Ռուշոր բանկոոպներ »	35	33	94,6 »
Ամբողջ ցանցը	276	309	112,3%.

Տնտեսությունների կոոպերացումը և անդամների քանակի աճումը նույն ժամանակամիջոցում հետևյալ պատկերն է տալիս.

Գավառները	Տնտեսությունների հայտատանում	Ս.ս 1 հոկտ. 1926 թ.		Ս.ս 1 հոկտ. 1925 թ.	
		Անդամների թիվ	Կոոպերացման տոկոս	Անդամների թիվ	Կոոպերացման տոկոս
Երևանի գավառ	37,356	14,481	38,8	19,826	53,1
1. Երևան քաղաք	11,068	6,852	61,9	8,003	72,3
2. Գյուղական վայրեր	26,288	7,629	29,0	11,823	45,0
Լենինականի գավառ	34,643	5,660	16,3	7,167	20,7
1. քաղաքը	8,275	2,346	28,7	2,619	32,0
2. Գյուղական վայրեր	26,468	3,314	12,5	4,548	17,2
Եջմիածնի գավառ	27,317	7,272	26,6	10,140	37,1
Լոռի-Փամբակի »	22,942	5,175	22,6	7,806	34,0
Դիլիջանի »	14,425	4,772	33,1	7,662	53,1
Ն-Բայազետի »	18,684	1,867	10,0	3,981	21,3
Դարալագյազի »	6,383	1,858	29,1	2,366	37,1
Զանգեզուրի »	14,048	4,242	30,0	6,031	42,9
Մեղրու »	1,853	576	31,1	771	41,6
Ամբողջ Հայաստանում	177,651	45,903	25,8	65,750	37,0

Ինչպես տեսնում ենք՝ սպառողական կոոպերացիան Հայաստանում արդեն մասսայական կազմակերպություն է դարձել, աշխատավորության ակտիվ մասերն ընդգրկելով և գյուղում ու քաղաքում կոոպերատիվ հասարակություն ստեղծելով։ Այստեղ տեղին է հիշատակել Լենինի հետևյալ խոսքերը. «Հարկավոր է միայն ույժ տալ այնպիսի կոոպերատիվ կազմակերպություններին, որտեղ *իսկապես մասնակցում են բնակչության իսկական մասսաները*»։

177,651 անտեսություններից դիմաց 65,750 կոոպերացված անտեսություն ունենալ Հայաստանի խորհրդայնացման 6-րդ տարում, այսինքն՝ բնակչության 37%-ը, սոցիալիստական նվաճումներից առնենախորշորն է այդ։

Սպառողական ընկերությունների կոոպերացված ազգաբնակության սոցիալական կազմը առ 1 հոկտ. 1926 թ. հետևյալն է (տոկոսներով առ 67 սպառողական կոոպերատիվ ընկերություններ) գյուղացի—87,8%, բանվոր—4,3% ծառայող—7,4% և այլ—0,5%։ Կանայք կազմում են 6,6%-ը։

Սպառ. կոոպերացիայի ֆինանսական դրության բարելավման գործում խոշոր նշանակություն և ունեցել փայատերական դրամագլխի աճումը։

Ս.ս 1 հոկտ. 1925 թ. 45,908 անդամ մուծել են 136,854 ռ. ընդհ. ընկն. 2 ռ. 98 կ.
Ս.ս 1 հոկտ. 1926 թ. 65750 » » 235,266 ռ. » 3 ռ. 58 կ.

1924/25 թ. սպառողական առուրին ցանցի վաճառքի շրջանառությունը հետել է 8,611,156 ռուբլի, իսկ 1925/26 թ. 13,564,968 ռուբլի, այսինքն՝ աճել է 57,5%-ով։ Այդ թվից գյուղական ընկերություններին բաժին է ընկնում 40,9%, հերկու խոշոր քանկոոպներին՝ 34,9%, գավիճնար. սպառողական ընկերություններին՝ 17,0% և ֆաբրիկ-գործարանային սպառողական ընկերություններին՝ 6,3%։

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Տնայնագործների և արհեստավորների ընդհանուր թիվը Հայաստանում 7,613 հոգի է, վորոնցից քաղաքում՝ 2439 հոգի, իսկ գյուղերում 5120 հոգի։

Տնայնագործների կազմակերպումն սկսվել է 1925 թվի հուլիսից, երբ ընտրված եր «Տնայնագործական կոմիտեն», վորը 1926 թվին վերակազմվեց և անվանվեց «Հայտնարկոոպ»։

Մինչև 1927 թ. փետրվարի 1-ը կոոպերացված են 29 արտել, 365 անդամով և 17,360 ռուբլի փայական դրամագլխով։

Տնայնագործների ընդհանուր թվից կոոպերացման է ենթարկված առ 1 փետրվարի 1927 թ. արհեստավորների և տնայնագործների միայն 4,80% իսկ 95,20% դեռ ևս մնում է անկազմակերպ դրության մեջ և կոոպերացիայից դուրս։

Տնայնագործական կոմիտեին հատկացված է վարկի ձևով—42,800 ռուբլի և անվերադարձ—5,000 ռուբլի՝ աշխատանքներ կազմակերպելու համար։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Պատերազմից առաջ գյուղատնտեսական կոոպերացիան մուտք եր գործել Հայաստան, գլխավորապես իր վարկային և պանրա-յուղագործական ճյուղերով, նվազ չափով ջերման եր եկել և այգեպաղաբուծական կոոպերացիան։ Սակայն պատերազմից առաջ գյուղատնտեսական կոոպերացիան Հայաստանում սաղմնային դրությունից դուրս չեկավ։

Խորհրդայնացումից հետո գյուղատնտեսական կոոպերացիան զարգացման առանձին թափ է առնում 1924 թ., երբ Հայկոոպին

կից կազմակերպված է «Գյուղկոոպ կենտրոնը», վարչական մի մարմին, որին հանձնված եր գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպչական գործը։

Նույն 1924 թ. սեպտեմբերի 20-ին գյուղատնտեսական կոոպերատիվների լիազորների անդրանիկ համագումարը ստեղծեց մի դեկավար ընտրովի որգան «Հայգյուղկոոպ», որի մեջ միանում են Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվները։

Գյուղատնտեսական կոոպերացիան իրեն նպատակ է դնում ա) կազմակերպել և վարկավորել գյուղատնտեսական արտադրությունը, բ) հայթայթել անտեսությունների համար արտադրության անհրաժեշտ միջոցներ, գործիքներ, սերմացու, պարարտանյութեր, աղնվացեղ կենդանիներ և այլն, գ) գյուղատնտեսության պտուղները վերամշակել և վաճառահանել, դ) հողերը բարելավել (մելիորացիա) էլեկտրիֆիկացիայի գործի համար պահանջվող մեքենաներ և գյուղացիական նիստ ու կացի պայմաններում կիրառվող տեխնիկական այլ կառուցվածքներ ձեռք բերել, մի խոսքով՝ գյուղատնտեսությունն ամենայն միջոցներով բարելավել։

Գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի աճման պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը.

	առ 1 հոկտ. 1924 թ.	առ 1 հոկտ. 1925 թ.	առ 1 հոկտ. 1926 թ.	1926 թ. աճման %-ը 1924 թ. համեմատ.
1. Կոոպերատիվների թիվը	76.	147.	205.	269,7%
2. Տնտեսությունների	9,179	19,153	30,075	327,6%
3. Կոոպերացման %	5,94%	12,75%	19,31%	325,1%

Ինչպես յերևում է աղյուսակից, կոոպերատիվ միավորների թիվը 1924-1926 թ. թ. ընթացքում աճել է 169,7%, անտեսությունների թիվը՝ 227,6% և կոոպերացումը՝ 225,1%-ով։

Աճման պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը.

Գյուղ. կոոպերատիվի ձյուղերը	առ 1 հոկտեմբերի 1925 թ.		առ 1 հոկտեմբերի 1926 թ.		աճման տոկոսներ	
	կոոպ. միավոր	Տնտես.	կոոպ. միավոր	Տնտես	կոոպ.	Տնտես.
1. Գյուղվարկային ընկ.	30	11,492	36	18,156	120 0	158,0
2. Միատեսակ գյուղատնտես.»	15	509	12	660	80,0	121,8
3. Բանջարակաղամբատական »	—	—	13	934	—	—
4. Ձյութագործական »	9	875	12	1607	133,3	183,6
5. Ծխախոտագործական »	2	183	5	527	250,0	288,0
6. Մեղվաբուծական »	16	693	19	1509	118,8	217,7
7. Թոչնաբուծական »	—	—	3	91	—	—
8. Հնդհանուների »	1	28	1	28	100,0	100,0
9. Մեքենա ոգտագործ »	—	—	27	602	—	—
10. Հող. աշխ. արտելներ	2	13	2	35	100,0	244,6
11. Տնտնտգործակ. »	1	35	—	—	—	—
12. Վոչխարաբուծ. »	—	—	2	89	—	—
13. Ջինաբուծական »	—	—	1	60	—	—
14. Կոմունա	—	—	1	35	—	—
15. Կաթնատաւելներ	71	5,325	72	5742	101,4	107,8
Ընդամենը	147	19,153	205	30075	130,4	157,0

Այս աղյուսակից մենք տեսնում ենք, որ ա) գյուղկոոպերացիան ընդգրկել է նոր ճյուղեր, ինչպես՝ բամբակագործական, մեքենագործական, թոչնաբուծական, բ) գյուղատնտեսական կոոպերացիայի առանձին ճյուղերը, թեև անհավասար, աճում են. գ) անտեսությունների աճումն ավելի արագ է, քան կոոպ. միավորների։ Այդ ցույց է տալիս, որ ընկերությունները վայելում են գյուղացիների համակրանքը։

Գյուղատնտեսական կոոպերացիայի աճումն ըստ զավառների

	Ս-ն 1-ն հոկտեմբ. 1925 թ.			Ս-ն 1 հոկտ. 1926 թ.			Աճման տոկոսները		
	Կոոպեր. միավոր.	Տնտես-ություն	Կոոպեր-ացված տնտ. %	Կոոպ. միավոր	Տնտ.	Կոոպեր. տնտ. %	Կոոպ. միավ.	Տնտ.	Կոոպեր-ացված տնտ. %
1. Ցեղանի զավ.	22	3882	14,8	34	6690	25,1	154,5	172,3	169,0
2. Լենինական »	13	2362	9,6	17	3194	12·3	130·8	133,9	237·7
3. Եղմիածնի »	14	2800	11,2	35	5158	19,2	250.0	184,2	171,5
4. Նոր Բայազետի »	9	1531	9,0	19	2492	13,6	211,2	162,8	150,9
5. Լոռի Փամբակի »	55	5148	24,3	67	6431	28,1	121,8	124,8	115,4
6. Դիլիջանի	18	1867	14,0	15	3488	24,8	83,3	186,8	177,8
7. Դարալագյազի »	4	401	6,6	5	757	12,7	125,0	188,8	191,4
8. Զանգեզուրի »	9	676	5,1	10	1313	9·6	111,1	194·2	189,9
9. Մեղրու »	3	466	30·3	3	656	39,8	100,0	140,8	131,7
Ընդամենը	147	19,153	12·85	205	30075	19,31	139,4	157,0	151,4

Գյուղատնտեսական կոոպերացիայի կազմն ըստ ազգությունների տալիս և հետեվյալ աղյուսակը.

Ազգությ.	Կոոպերացված անտեսություններ		Հայաստանի գյուղատնտեսությունների թիվն ըստ ազգության	Կոոպերացման տոկոսը
	Բացարձակ.	Ընդհ. տոկոս Հայաստ.		
1. Հայ	24809	83,2	133,913	18,53
2. Ռուս	2250	7,5	3,805	59,14
3. Թուրք	2,250	8,6	15,261	16,71
4 Այլ ազգություններ	195	0,7	2,756	7,08
Ընդամեն	29,804	100,0	155,735	18,5

Գյուղատնտեսական կոոպերացիայի 1926թ. ֆինանսական դրությունը, նրա սեփական և փոխառիկ գումարները տրվում են հետևյալ աղյուսակում.

Տիպեր	Սեփական	Փոխառիկ	Հարաբերական
1. Գյուղվարկային ընկ.	200,955 ռուբլի	2,013,407 ռուբլի	1;6,8
2. Այգեգործական »	49,066 »	119,142 »	1:2,4
3. Մեղվաբուծական »	3,652 »	25,271 »	1:6,9
4. Ծխախոտագործ. »	6,819 »	146,070 »	1:21,4
5. Բամբակագործ. »	6,421 »	200,165 »	1:31,4

Սեփական միջոցների մի քանի անգամ ավելի պակաս լինելը, քան փոխառիկ գումարները, ցույց է տալիս, որ ֆինանսական դրությունն այնքան էլ բարեհաջող պայմաններում չի։ Բայց և այնպես սեփական միջոցներն աճում են ինչպես տեսնում ենք ստորև բերված աղյուսակից.

	Ս-ն 1 հոկտ. 1925	Ս-ն 1 հոկ. 1926	Աճման %%
1. Գյուղվարկային ընկ.	175,747	290,955	165,5
2. Այգեգործական »	15,031	49,066	326,5
3, Ծխախոտագործ. »	3,190	6,814	213,8
4. Մեղվաբուծական.	2,018	3,652	180,9

Ֆինանսական դրության թերի կողմն այն է, որ վճարավճարները լրիվ չեն գանձվում։ Որինակ 275,575 ռ. հասնող վճարավճարներից գանձված է 191,925 ռ. որը ամբողջ գանձվելիք գումարի 69,75 %-ն է։

1926 տարվա ընթացքում Հայգյուղկոոպը շահ է ձեռքում ունեցել 358.211 ռ., ծախս և վնաս՝ 274,316 ռ.։ Այսպիսով, զուտ շահ է ստացվել 83,895 ռ. 66 կ.։

1926 թ. Հայգյուղկոոպի ցանցը հետեվյալ մթերքները յեվ հում նյութերն է արտադրել ու հայթայթել.

Մթերքներ	քանակը	արժեքը
1. Զվիցերական պանիր	217,8 տոննն	399,000 ռ.
2. Թուշի . .	573,3 »	525,000 —
3. կարագ յուղ . .	90,0 »	192,500 —
4. կաթ . .	491,4 »	90,000 —
5. Հալած յուղ . .	16,3 »	30,000 —
6. Ծխախոտ . .	163,8 »	150,000 —
7. Ձու . .	500,000 հատ.	15,000 —
8. Գինի . .	9839,53 հեկտոլ.	320,000 —
9. Ոդի . .	300,000 հատ.	75,000 —
10. Բուրդ . .	36,8 տոննն	56,000 —
11. Բոժոժ . .	39,3 »	72,000 —
12· Գրենա . .	61,500 տուփ	123,000 —
13. Խոտ . .	1146,6 տոննն	38,000 —
14. Մեղր . .	36,0 »	28,000 —
15. Պահածո մրգեր . .	163,8 »	80,000 —
16. Տոծաա . .	49,1 »	21,000 —
17. Գաղի և վարսակ . .	262,0 »	16,000 —
18. Գյուբե . .	49,1 »	12,000 —
19. Վարունգ . .	114,6 »	14,000 —
20. Բանջարեղենի պահածո	24 5 »	15,000 —
Ընդամենը		3.117,000 ռ.

Մթերած ապրանքների խոշոր մոկոսը արտահանած է Թիֆլիս և Բուսաստան։

1926 թ. Հայգյուղկոպը կոոպերատիվ ցանցն ապատարկելու համար ձեռք է բերել հետևյալ ապրանքները.

1. Կաթնատնտեսական ինվենտար	80,000	ռուբլի
2. Մեղվաբուծական »	4,000	»
3. Գինեգործական »	10 000	»
4. Սերմնացաք	50 000	»
5. Տրակտորներ և գործիքներ	110,000	»
6. Հայտամթերք	52,000	»
7. Կլյոպկա	28,000	»
8. Յերկաթեղեն	96,000	»
9. Բուժիչ նյութեր	21,000	»
10. Ցեմենտ	4,000	»
Ընդամենը	452,000	»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Հաղորդակցության ճանապարհները յերկրի հասարակական օրգանիզմի զարկերակներն են, նրանց միջոցով է կատարվում յերկրի տնտեսական կյանքի շարժումը, այսինքն՝ մարդկանց և ապրանքների տեղափոխությունը։ Որքան լավ են հաղորդակցության ճանապարհները, այնքան բարձր է յերկրի տնտեսությունը, և ընդհակառակը։ Ճանապարհների բացակայությունը դատապարտում է յերկրի բնակչությանը փակ բնական տնտեսության, հետամնացության և անկուլտուրականության։ Ճանապարհները յերկրի տնտեսության ցուցանիշներն են։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Հայաստանի յերկաթուղին Թիֆլիս—Ջուլֆա յերկաթուղագծի հայկական հատվածն է, սկսած Սադախլո կայարանից մինչև Ա-րազդայան կայարանը, 387 կիլոմետր յերկարությամբ։ Ռելսային գիծն ամբողջապես մետրի չե։

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ այս յերկաթուղին իր ուժերի խիստ լարումով տանկական և պարկական ճակատներն էր տեղափոխում ամբողջ մարդկային զանգվածը, ռազմամթերքն ու պարենը։ 1917 թ. դարական բանակի անկանոն նահանջի ժամանակ բոլորովին քայքայվեց։

Դաշնակցական կառավարության տիրապետության որով, շնորհիվ ազգամիջյան կռիվների և տանկական արշավանքի, համարյա դադարում է յերկաթուղու գործունեությունը։

Խորհրդային իշխանության առաջ նրա հենց առաջին օրից ծառացավ յերկաթուղին նորոգելու, սարքավորելու և կարգի բերելու բարդ խնդիրը։

Յերկաթուղագծի շենքերը, արհեստանոցները, շոգեկառքերը և վագոնները ավերված եյին, գծի շատ ների մեծ մասը փտած։ Խորհրդային իշխանությունն անցնում է այդ՝ հսկայական ծախսեր և ուժերի լարում պահանջող աշխատանքներին և հետզհետե հաջողում է կարգի բերել ճանապարհը։

Հետևյալ ապրուսակը տալիս է յերկաթուղու շահագործման հետևանքները 1921 1925 թ. թ. ընթացքում։

ՈՑՏԱԳՈՐԾՈՒՄԸ	Ձամբորդների փոխադրություն	Մեծ արագության բագաժի և ապրանքների փոխադրություն տոննաներով	Փոքր արագ. բեռների փոխադրություն տոննաներով	Ընդամենը բագաժ և բեռներ՝ տոննաներով	Յերկաթուղու բնդհանուր յեկամուտը
1922 թ.	166.295	6.559	268.130	274,690	1.120.500
1923 թ.	268 069	16,122	304.160	320.285	2.120.360
1924 թ.	379 280	33,864	339.040	372.910	3.105.880
1925 թ. (10 ամիս)	470 840	29,912	354.420	384.330	3.498.150

Հ. Ս. Խ. Հ. մայրաքաղաք Յերևանը յերկաթուղային ուղիղ հաղորդակցություն ունի Մոսկվայի և Լենինգրադի հետ։

Յերկաթուղին սպասարկող ոչխատավորների քանակի և նրանց կատարած աշխատանքների (փոխադրություն՝ տոննա-կիլոմետրով) պատկերն է տալիս հետևյալ աղյուսակը.

Տարիները	սպասարկող շտատը	փոխադ. տոննա-կիլոմետր.
1921 թ.	2.640 մարդ	տեղեկ. չկա
1922 թ.	2.868 »	18.377.000
1923 թ.	2.792 »	20.528.600
1924 թ.	2.753 »	25.783 000
1925 թ.	2.975 »	54.193.000

Բանվորների քանակը համարյա նույնն է, իսկ աշխատանքի թափն ու արտադրողականությունը հսկայական չափերով է բարձրացել։

Ըստ Անդրկ. Ս. Ֆ Խ. Հ. Պետպլանի հնգամյա ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության սահմաններում ծրագրված է կառուցել յերեք գիծ։ Առաջինն է՝ Յերևան—Դիլիջան – Ազստաֆա գիծը, 182 կիլ. յերկարությամբ, վորի ամբողջ ծախսը նախատեսվում է 30 միլ. 775 հազար ռուբլի։

Այս գիծը կապելու է կենտրոնը լեռնային գոտու յերկու գավառներին (Դիլիջանի և Նոր-Բայազեդի) և արևմտյան Ադրբեջանին։

Նույն հնգամյակում պիտի կառուցվի Ղաթար—Ոխչիչայ գիծը։ Այս գծի կառուցումը հակայական զարկ կտա պղնձահանքերի զործունեությանը։ Յերկաթգծի այդ ճյուղն ունենալու չի 60 կիլ. յերկարություն և նստելու չի 5 միլ. 700.000 ռ. ծախս։

Յերրորդ գիծը Յերևանը փակուղուց հանելու (այժմ Յերևանը կանգնած է Ջուլֆա տանող յերկաթգծից անցնող և 15 կիլոմետր յերկարություն ունեցող մի յերկրորդական գծի վրա) և գլխավոր գիծը Յերևանի վրայով անցկացնելու խնդիրն է։ Այս փոփոխությունը պահանջում է $1^1/_2$ միլիոն ռուբլի ծախս։

Աշխատանք

1. Գլխում բերված տվյալները դիագրամների վերածեցեք։
2. Եքսկուրսիա գնացեք յերկաթուղու դեպոն։
3. Լենինական գնալիս, այցելեցեք յերկաթուղային արհեստանոցը։
4. Տեղեկացեք՝ ինչ վառելիքով է շարժվում շոգեշարժը, պարզեցեք այս խնդիրը, թե 16 կիլոգր. քարածուխ կամ մազութ, այրելով՝ վորքան բեռ և տեղափոխում գնացքը մի կիլոմետր տարածության վրա։ Վորքան բեռ կտեղափոխեր գնացքը, յեթե նա շարժվեր վոչ թե շոգեշարժով, այլ ելեկտրաշարժով։ Իմացեք մի տարվա ընթացքում շոգեշարժը քանի ժամ է աշխատում և քանի ժամ կանգնած մնում (ելեկտրաշարժը մի տարում աշխատում է 8000 ժամ և կանգնած է մնում 760 ժամ)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՃՈՒՂԻՆԵՐԸ ՅԵՎ ՍԱՅԼՈՒՂԻՆԵՐԸ

Ներկայումս յերբ ավտոմոբիլային տրանսպորտը մեծ հաջողությամբ մրցում է յերկաթուղային տրանսպորտի հետ, առանձին նշանակություն են ստանում խճուղիները։ Ամերիկայում այժմս գերազասություն են տալիս ավտոմոբիլային տրանսպորտին։ Հայաստանը, վորպես լեռնային մի յերկիր, առանձնապես կարիք ունի խճուղիների։ Ցարական կառավարության ժամանակներից մեզ ժառանգություն են մնացել հետևյալ խճուղիները՝ Ազատաֆա—Դիլիջան—Յերևան, Ազատաֆա—Դիլիջան—Լենինական, Ղարաքիլիսա—Լենինական, Յերևան—Եջմիածին—Աշտարակ, Ղարաքիլիսա Դիլիջան—Լենինական—Ախալքալաք, Յերևան—Նախիջևան։ Խճուղիների յերկարությունն է 561 կիլոմ. և մոտ 1000 կիլ. այլ ուղիներ։

1915—1920 թ. թ. ընթացքում Հայաստանի խճուղիները, զբոսորհիվ հակոդության բացակայության և ազգամիջյան կռիվների, բոլորովին քայքայվեցին։

Խորհրդային իշխանությունը, հաստատվելու հենց առաջին որերից, առանձին ուշադրություն է դարձնում խճուղիների վրա, ջանքեր է թափում նրանց վերանորոգելու և բարեկարգ դրության մեջ պահելու։ Հանրապետական և տեղական ճանապարհների ընդհանուր հսկողությունը հանձվեց Խճուղային Վարչության։

Մտորև բերված աղյուսակը ցույց է տալիս խճուղիների և այլ ճանապարհների վրա ծախսված գումարները։

ՏԱՐԻՆԵՐ	քանի՞ կիլոմետր ճանապարհ է յեղել խնամքի տակ	ծ ա խ ս վ ա ծ է	
		շտատի վրա	ճանապարհ. վրա
1921 թ.	200	Տեղեկություն	չ կ ա
1922 »	250	»	»
1923 »	510	3.528 ռ.	7.627 ռ.
1924 »	368	39.000 »	141.000 »
1925 »	686	76.450 »	233,400 »
1926 »	1.221	197.000 »	698.250 »

Այս աղյուսակից յերևում է, վոր Հայաստանում տարեցտարի ավելի ու ավելի ուշադրություն է դարձվում ճանապարհների վրա։

Առաջիկա հնգամյակում, Հ. Ս. Խ. Հ. Գնդապետի ընդունած ծրագրի համաձայն, պետք է հիմնական նորոգման յենթարկվեն և կառուցվեն 3.024 կիլ. խճուղիներ, վորոնց վրա ծախս է նախատեսվում 25.019.900 ռ.։

ԱՎՏՈ-ՏՐԱՆՍՊՈՐՏ

1921—22 թ. Խորհրդային Հայաստանում հաշվում եյին անցյալից մնացած 150 ավտո-մեքենաներ, վորոնք մեծ մասամբ հիմնական նորոգում եյին պահանջում և ցրված եյին տարբեր վայրերում։ Այդ մեքենաների մի մասը հետզհետե բոլորովին անպետքացավ։

1923—24 թ. թ. սկսվեց մեքենաների ներածումը.

Ա. 1 հունվ. 1924 թ. Հայաստանում կային 118 մեքենա։

	աշխատող	վերանորոգ.	ընդամենը
1. Մարդատար	45	13	58
2. Ապրանքատար	18	36	54
3. Մոտոցիկլետ	4	2	6
Ընդամենը	68	51	118

Ա. 1 հունվարի 1925 թ. Հանրապետության մեջ մեքենաների թիվը հասնում է մինչև 103, վորովհետև հնացած մեքենաները հաշվից դուրս են գցվել, իսկ աշխատող մեքենաների քանակը՝ (87 մեք.) ավելի բարձր ևր, քան 1924 թ.՝ (68 մեք.)։

1924 թ. Անդրկովկասյան ավտո-տրանսպորտի բաժանմունքը կազմակերպում է Հայաստանում կանոնավոր երթևեկություն, Երևան—Դիլիջան, Երևան—Ղամարլու, Երևան—Դարաչիչագ, Դիլիջան—Ղարաքիլիսա գծերով։

1924 թ. նոյեմբերի 25-ից մինչև 1925 թ. հուլիսի 1-ը ավտոները փոխված է 21.712 հոգի և 1211 փ. ապրանք։

Ա. 1-ն փետրվարի 1926 թ. ավտոմեքենաների քանակն է

աշխատող	121 հատ
վերանորոգման յենթակա	20 »
մասնավոր	44 »
Ընդամենը	185 »

Շոֆերները պատրաստելու համար փոխադրող և հողանտառ միությունները ձմռան ամիսներին բաց են անում յեռամսյա պատրաստություններ։

ԿԱՊԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Յերե հաղորդակցության ճանապարհները հատարակական որգանիզմի արենատար անոթներն են, ժողովրդական կապը, այն է փոստը, հեռագիրը, հեռախոսն ու ռադիոն, այդ որգանիզմի լեզուն են։

Վորքան յերկիրը կուլտուրապես բարձր է, այնքան ուժեղ է ժողովրդական կապը։ Պատերազմից առաջ տարեկան մի հոգուն ընկնում ևր՝

Միացյալ Նահանգներում	150	փոստային հաղորդագրություն
Գերմանիայում	120	» »
Անգլիայում	110	» »
Ցարական Ռուսաստ.	16	» »

Այդ ցույց է տալիս ցարական Ռուսաստանի կուլտուրական հետադիմությունը։

Փոստը, վոր խորհրդայնացումից առաջ բոլորովին քայքայված ևր, այժմ ամբողջովին վերականգնված է։

Փոստային տրակտի դրությունը հետևյալն է.

Փոստային տրակտների փոխանակում	մինչև 1914 թ.	փոխան.	այժմ։
Յերևան-Յելենովկա	62 կիլ.	շաբ. 3	անգ. շաբ. 3 անգամ
Յերևան-Եչմիածին-Աշտ.	36 »	» 3 »	» 3 »
Յելենովկա-Ն. Բայազետ	34 »	» » »	» 3 »
Յելենովկա-Դիլիջան	40 »	» » »	» 3 »
Դիլիջան-Ղարաքիլիսա	39 »	» » »	ամեն որ բացի կիրակի
Դիլիջան-Իջևան	26 »	» » »	շաբ. 3 անգամ
Դիլիջ.-Կարմիր-գյուղ*)	40 »	չկար	» 2 »
Ն.-Բայազ.-Մարտունի**)	35 »	» 2 »	» 2 »
Մարտունի-Բասարգեչար	35 »	» 2 »	» 2 »
Նորաշեն-Քեշիշքենդ	40 »	» 3 »	» 2 »
Քոլագ.-Սաեփ.-Վորոնց.	45 »	» 3 »	» 3 »



Փոստի փոխանակումը յերկաթուղով՝ Թիֆլիզի և Ջուլֆայի հետ կատարվում է ամեն որ։ Զանգեզուրի գավառի փոստային հիմնարկները (Գորիսում, Տեղում, Ղարաքիլիսայում և Ղաթարում կապված են Ցեվլաք-Շուշի փոստային խճուղու հետ)։ Յուրաքանչյուր կարծիք բանակալինի իրավունք է տրված ամեն ամիս ձրիաբար յերեք նամակ և մի փոստային ծանրոց ուղարկելու։

Միության սահմաններում գործածվում են համամիութենական փոստանիշեր։

*) Միխայլովկա։
**) Ղարանլուղ։

ՀԵՌԱԳԻՐ

Քայքայման շրջանից դուրս գալով՝ հեռագիրը 1921 թ. սկսեց ծառայել իր նպատակին։ Այդ տարվա ընթացքում կառուցված և հետևյալ գծերի կառուցումը.

Նորաշեն—Քեշիշքենդ	40	կիլ.
Մալիշկա—Գորիս	60	»
Յերևան—Բաշգյառնի	30	»
Յերևան—Նորագավիթ	9	»
Յերևան—Ղամարլու	32	»
Ղամարլու—Բոյուք-Վեդի	18	»
Նորագավիթ—Իմանշալու	11	»
Յերևան—Յելենովկա	65	»
Քեշիշքենդ—Փաշալու	18	»

Հանրապետության Ժողկոմխորհի դեկրետի համաձայն, տեղական գործկոմները մասնակցել են աշխատանքներին, տրամադրելով անհրաժեշտ քանակությամբ սյուներ և բանվորական ուժ։

Կենտրոնն առաջարկել է բոլոր հրահանգիչներին՝ ուսումնասիրել Մորզե մեքենայի աշխատանքը լսողությամբ։ Այս աշխատանքը կատ հակալական խնդրություն, վորովհետև այն կատարվելու է հատուկ «կլոպֆեր»-յան ձևի մեքենայով, վորը մոչ ներկ և մոչ էլ ժապավեն է պահանջում։

Հեռագրային թղթակցությունների փոխանակման արագությունը ներկայումս արտասահմանի հետ մեկ որ է, իսկ Մոլթյան ամանաններում՝ մի քանի ժամ։

ՀԵՌԱԽՈՍ

1924 թ. Յերևանում հաստատված է ավտոմատ հեռախոսային կայան։ 1925 թ. Ազստաֆայի հեռագրագծի միջոցով հեռախոսային կապ է հաստատված Թիֆլիզի և Բագվի հետ։ Ծրագրված է ևս մի այդպիսի գիծ անցկացնել կամ Յերևան—Լենինական—Թիֆլիզ ուղղությամբ, կամ Յերևան—Ազստաֆա խճուղու ուղղությամբ։ Յերևանում և Լենինականում հեռախոսի մի լարյա գծերը վերաշինված են չերկլարյան գծերի։

Հայաստանի գավառային կենտրոնները կապված են մոտիկ շրջանների հետ հեռախոս վ։ Ծրագրված է հեռախոսային ցանցով պատել ամբողջ չերկիրը։

ՌԱԴԻՈ

Խորհրդային իշխանությունն իր ուշադրությունը դարձրեց

ռադիո-կապի բարելավման և կանոնավորման վրա։ Ներկայումս ռադիո-հեռագիրը կապ է հաստատել Իտալիայի, Անգլիայի, Գերմանիայի, Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Տաճկաստանի և այլ չերկիրների հետ։

1922 թ. կառուցված է հատուկ ընդունող տեղեկատու ռադիո։

Ամսական փոխանակումը հասնում է մի քանի հազար բառի։

Քանաքեռում կանգնեցված է 120 մետրանոց ռադիո կայան, վորը պետք է հավաքի տեղեկություններ աշխարհի բոլոր անկյուններից։



ՌԱԴԻՈ-ԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԱՆՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Յերևան — Լայնահաղորդ ռադիո-հեռախոսային և ընդունող ռադիո-կայան։
2. Քանաքեռ. — ուժեղ ռադիո-կայան։
3. Ընդունող ռադիո-հեռախոսային և ռադիո-հեռագրային կայաններ։
   ա) Լենինական
   բ) Դիլիջան
   գ) Նոր-Բայազետ
4. Ընդունող բարձրախոս կայաններ
   ա) Ելմիածին
   բ) Աշտարակ
   գ) Ղամարլու
   դ) Ղափանի հանքեր
   ե) Ալավերդու հանքեր։

1. Եքսկուրսիա գնացեք հեռագրատուն և ծանոթացեք հեռագրամեքենաներին։

2. Եքսկուրսիա գնացեք ռադիո-կայանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ

1922 թ. հիմնվեց «Հայպետառ»—Հայաստանի պետական առևտուր անվան տակ պետական կենտրոնական մարմին, որի նպատակն էր միացնել Հայաստանի պետական վաղչ առևտուրը։ այդ հիմնարկությունը հետագայում «Հայառ» անունն ստացավ։ Հայպետառն սկսեց իր առևտուրը 660,000 վոսկի ռ. դրամագլխով։ 1923-24 գործառնական տարին Հայառն սկսում է 800,000 ռ. կապիտալով։

Ներածման և հայթայթման առարկաներն էին՝ հացամթերքները, ճութեղեն, շաքար, աղ, յերկաթեղեն ու նավթամթերքները։ Սկզբում Հայառը կատարում էր և ժանրածախ առևտուր։ Հետագայում նա սկսեց սեղմել իր մանրածախ առևտուրը, գիջելով այն կոոպերացիային, որպեսզի այս վերջինն ուժեղանա։

Հայառը ներածել և հայթայթել է 1923-24 թ. 822,642 տուբլու, 1924—25 թվին, մինչև ապրիլի 1-ը՝ 2,788.300 ռ. ապրանք։

Հայառի բոլոր բաժանմունքները թե Հայաստանում և թե Հայաստանից դուրս մեծածախ և մանրածախ առևտրի շրջանառություններ են ունեցել.

1922-23 թ. 3,487,000 ռուբլու.
1923-24 թ. 12,252,100 »

Հայաստանի մեծաքանակ վաճառքի ընդհանուր շրջանառությունը 1924-25 թ. յեղել է 28,584,100 ռ., իսկ 1925 26 թվին՝ 40,141,000 ռ., այսինքն՝ մեկ տարվա ընթացքում աճել է 40,4 տոկոսով (առանց աղյուսակի)։

	1924-25 թ.	1925-26 թ.	% % հարաբ.
Պետական առևտուր	22,313,800 ռ.	29,167,900	130,7
Կոոպերատիվ »	3,270.300 »	6,973,100	213 2
Մասնավոր »	3,000,000 »	4,000,000	125,0
Ընդամ.	28,584,100 ռ.	40,141,000	140,43%

Յեթե վերցնենք պետական, կոոպերատիվ և մասնավոր առևտրի մասնակցությունն այդ շրջանառության մեջ, կստանանք հետևյալ պատկերը.

	Պետ. առև.	Կոոպ. առև.	Միաս. պետ. և կոոպ.	Մասնավ.
1924-25 թ.	78,0%	11, 5%	89,5%	10,5%
1925-26 »	72,8 »	17,3 »	90,1 »	9,9 »

Այսպիսով, կոոպերացիայի առևտուրն աճում է ի հաշիվ պետականն և մասնավոր առևտրի շրջանառության իջեցման։

Պետական և կոոպերատիվ առևտրի ներքին և արտաքին գործառնությունները հետևյալ արդյունքն են տվել (հազ. ռուբլիներով)։

	1924-25 թ.			1925-26 թ.		
	Ցերկրի ներսում	Արտահանում	Ընդամենը	Ցերկրի ներսում	Արտահանում	Ընդամենը
Արդյունաբերական ձեռնարկ.	1,957.7	5,289,4	7,247,1	2,662,8	8,192,7	10,855,2
Առևտրական »	6,211,1	1,098,8	7,309,9	6,559,1	2,398,2	8,957,3
Ներկայացուցչության	7,387,7	369,1	7,756,8	7,756,2	559,5	9,355,1
Ընդամենը պետական	15,550,7	6,757,3	22,313,8	18,017,1	11,150,8	29,167,9
Կոոպերատիվ	3,162,5	197,7	3,270,3	6,143,0	830,1	6,973,1
Ընդամենը	18,719,0	6,865,1	25,584,1	24,160,1	11,980,9	36,141,0
% %	73%	27%	100%	67%	33%	100%

1924.25 թ. մեր արտահանումն ընդհանուր շրջանառության նկատմամբ հավասար էր 27 տոկոսի. հետևյալ տարում նա հասել է 33 տոկոսի։

Արտահանման ուժեղացումը բացատրվում է տեղական արտադրանքի (կոնսերվ, գինի, կոնյակ և այլն) արտահանման աճումով, արդյունագործական հում նյութերի (բամբակ, ժապեղեն, ծխախոտ, բուրդ և այլն) և գյուղատնտեսական մթերքների (պանիր, ձու, մեղր և այլն) վաճառքով յերկրի սահմաններից դուրս։

Մեր առևտուրն ընթանում է այնպես, որ ի հաշիվ պետական և մասնավոր առևտրի աճում է կոոպերացիայի առևտուրը։ Պետական առևտուրն իր տեղը հետզհետե զիջում է կոոպերացիային, յեվակա

ունենալով Ս. Իշխանության պլանային տնտեսության ընդհանուր քաղաքականությունը, իսկ մասնավոր առևտուրը, վորովհետև չի դիմանում այն անհավասար պայքարին, վոր մղվում է որեցոր նըրա և աճող կոոպերացիայի միջև, հետզհետե իր դիրքերը զիջում է կոոպերատիվ առևտրին։

Այս հանգամանքը պարզ կլինի, յեթե մենք համեմատենք այս յերեք առևտրական հիմնարկների առևտրական կետերի հարաբերական շարժումն ըստ տարիների.

	1924 թ.	1925 թ.	1926 թ.
Պետական առևտուր	2.32%	3,14%	3,99%
Կոոպերատիվ »	11,15 »	18,56 »	17,88 »
Մասնավոր »	86,55 »	78,30 »	79,13 »

Պետական և նամանավանդ կոոպերատիվ առևտրի սրտապրական կետերը հետզհետե աճում են, իսկ մասնավոր առևտրինը՝ նըվազում են։

Մանրածախի շրջանառությունը մեր յերկրում նույնպես ցույց է տալիս զգալի աճում (հազ. ռուբլիներով).

	1924-25 թ.	1925-26 թ.	
Պետական առևտուր	2,240,0	3,752,8	167,6%
Կոոպերատիվ »	10,926,1	17,086,9	156 4 »
Մասնավոր »	11,214,7	13,500,0	120,4 »

Բավականին բնորոշ յերևույթ է այն, վոր մասնավոր շուկան զարգացման ավելի թույլ թափ ունի, քան պետական և կոոպերատիվ մանրածախը։ Մինչդեռ կոոպերացիայի առևտրի շրջանառությունը 1924.25 թ. մասնավորից մի փոքր ցածր եր 1925.26 թ. վերջինս չափազանց յետ է մնացել նրանից։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդի լուսավորությունը հասարակական կյանքի վերնաշենքն է և, իրըև այդպիսին, հասարակական կառուցվածքի մի մասն է, վոր իր կառուցման նյութերն ստանում է ներքևից՝ ժողովրդի տնտեսությունից, պայմանավորվում է այս վերջինով և ինքն իր հերթին նրա հետագա զարգացման ազդակն է դառնում։

Ժողովրդական լուսավորության գլխավոր ներգործական գենը դպրոցն է։ Հոկտեմբերյան հեղափոխությունը հիմնովին հեղաշրջեց ոչ միայն մեր կյանքի տնտեսության հին ձևերը, այլ և դպրոցը։ Հին դպրոցը կործանվեց և նրա փլատակների վրա կառուցվեց Աշ-

խատանքի Իշխանական նոր դպրոցը, վորի կանոնադրության 1 կետը հետևյալն է ասում.

«Բանվորական հասարակության մեջ դպրոցն ոգտագործվում է իրըև աշխատավոր դասակարգերի շահագործման հոգևոր գործիք։

Պրոլետարիատի դիկտատուրայի վրա կառուցված Խորհրդային Հանրապետության մեջ Աշխատանքի Միասնական Դպրոցի նպատակն է՝ առեղծել կոմունիստական հասարակության կառուցման համար մարտիկների մի նոր սերունդ, վորը պիտի ոժտված լինի կոլեկտիվիզմի հոգեբանությամբ, ամուր կամքով, անհրաժեշտ հասարական վորակավորմամբ և մատերիալիստական աշխարհայացքով, հիմնված բնության և հասարակության զարգացման որենքների գիտության վրա»։

Դպրոցը կյանքի յե կանչված դասատարակելու մանուկ և յերիտասարդ սերունդը։ Յերկրի արտադրողական ուժերի զարգացման համար անհրաժեշտաբար պետք եր ձեռնարկել վորակավոր բանվորների և լուսավորված գյուղացիների պատրաստման գործին։ Այդ պատճառով, Աշխատանքի Միասնական Դպրոցի ծրագրերը կազմված են արդիականության և յերկրում կիրառվող և կիրառվելիք արտադրողականության պրոցեսների պահանջներին համապատասխան։

Դպրոցական գործը Խորհրդային Հանրապետության մեջ յերկու հունով է ընթանում, այն է՝ սոցիալական դաստիարակություն և արհեստագիտական կրթություն։

Համակալով բնակչության կրթությունն ընթանում է Քաղաքական լուսավորության ուղիով։

Յերկրի ազգաբնակության գրագիտություն մատակարարելու համար կազմակերպված է Պետական Հրատարակչություն։

Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին նույն չափերով, ինչ և հայերին, հնարավորություններ է տրված ձեռք բերել լուսավորությունը և զարգացնել իրենց ազգային լեզուն ու կուլտուրան։

Յերկրի տնտեսությունը դեկավարելու և ժողովրդի հոգևոր կուլտուրան զարգացնելու, վորակավորված աշխատավոր բարձր ինտելիգենցիա ստեղծելու համար բարձրագույն դպրոցներ են բացված՝ Պետական Համալսարանը և Պետական Կոնսերվատորիան։

Յերկրի կուլտուրան դեկավարելու համար հիմնադրված են բարձրագույն գիտական և գեղարվեստական մարմիններ և հիմնարկություններ։

Մանուկ և յերիտասարդ սերունդների քաղաքական դաստիարակությունը տարվում է Պիոներական և Հ. Լ. Կ. Յե. Մ. կազմակերպությունների գծով։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սոցդաստիճանարկների ցանցը 1924/25 և 1925/26 ուս. տարիներում հետևյալ պատկերն է ներկայացնում։

Դպրոցների տիպը	1924/25 ուս. տարի		1925/26 ուս. տարի		Ուսուցիչների թիվը	
	Հիմնարկ	Աշակերտ	Հիմնարկ	Աշակերտ	1924-25	1925-26
Մանկապարտեզ	12	777	15	1,060	2111	2216
Ա. աստիճանի դպրոց	688	58,611	704	62,370		
Յոթնամյա »	36	10,632	40	12.549		
Գյուղբիա *) »	—	—	6	225		
Բ. աստիճանի »	9	1,997	9	2.418		
Ընդամենը	745	72.017	774	78,622	2111	2216

1926/27 ուս. տարում սոցհիմնարկների թիվը է 786
» » » աշակերտության » » 82,276

Բացի սրանից, Լուսժողկոմատի իդեական ղեկավարության ներքո Ամերկոմն իր միջոցներով պահում է՝

Մանկապարտեզ . . .	3	— 3701 աշակերտով.
Ա. աստիճանի դպրոց . .	8	
Յոթնամյա » . .	6	— 1920 »
Բ. աստիճանի » . .	1	— 370 »

1926 թ. սկզբից սկսվեցին աշխատանքներ ընդհանուր պարտադիր ուսման վերաբերյալ, որը իրագործվելու համար ծրագիրը և մշակված։

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հատուկ ուշադրություն և դարձված ազգային փոքրամասնությունների դպրոցական կրթական հիմնարկների ցանցը լայնացնելու վրա։

Թուրքական դպրոցներում գործադրվում է թուրքական նոր այբուբենը։ Ձեռնարկված և ասորական դասագրքեր կազմելու գործը։ Մշակված և ուղարկված է Միութենական Գիտական Ճեմարանին քրդական այբուբեն կազմելու նախագիծը։

*) Գյուղական յոթնամյա դպրոցներն աստիճանաբար վեր են ածվում գյուղբիա. դպրոցների, գյուղատնտեսական և կոոպերատիվ թեքումով։ Այս դպրոցներն իրենց ծրագրով կոչված են բավարարելու գյուղի շինաարության, կուլտ-կրթական և տնտեսական պահանջները։

1925 թ. Յերևանում բացված է Թուրքական Մանկավարժական Տեխնիկում, ինտերնատով, 50 սովորողների համար։

Դպրոցների տիպը և լեզուն		Քանակը	Աշակերտների թիվը	Ուսուցիչների թիվը
Ա. աստիճանի դպրոցներ՝	Թուրքական	116	3,994	216
» » »	Ռուսական	27	3,513	77
» » »	Յեզդինների	10	316	11
» » »	Ասորական	4	217	6
» » »	Հունական	4	354	9
Բ. աստիճանի դպրոց՝	Ռուսական	1	134	14
	Ընդամենը	162	7,528	333

Յերևանի բանֆակին և բարձր տիպի դպրոցին կից յերկուական թուրքական խմբեր կան։

ԳԻՏԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՑԱՆՑԸ

1. Պետական Հանրային՝ Ալ. Միասնիկյանի անվան՝ Գրադարանն ունի մոտ 160,000 գիրք, որից հայերեն՝ 30,000, ռուսերեն՝ 120,000 և մասր լեզուների՝ 10,000։

Գրադարանին կից աշխատում է ընթերցարանը, որի հաճախորդների թիվը հասնում է տարեկան 500 ի։

2. Գիտության և Արվեստի Ինստիտուտն ունի բնապատմական, մաթեմատիկական, հասարակագիտական-պատմական և գեղարվեստական բաժիններ։

3. Եչմիածնի Մատենադարանն ունի հարուստ ձեռագրատունն՝ մոտ 2,000 հայկական հնագույն ձեռագրերով։

4. Եչմիածնի թանգարանը բաղկացած է՝ հնագիտական, ազգագրական և գեղարվեստական բաժիններից։

5. Յերևանի Պետական Թանգարանն ունի 6 բաժին, գեղարվեստական պատկերասարահով, — հեղափոխական, հնագիտական, պատմագրական, տնայնագործական և ռազմական։

6. Մանկավարժական Թանգարանն ունի ֆիզիկական, քիմիական, բնախոսական, հասարակագիտական, հանքաբանական և աշխարհագրական բաժիններ։

7. Հնությունների Պահպանության Կոմիտեն, որ ուսումնասիրում է յերկրի հնությունները և միջոցներ է ընձեռում այդ հնության հուշարձանների պահպանության համար։

8. Բնության հուշարձանների պահպանության կոմիտեն մշտեն միջոցներ է ձեռք առնում յերկրի բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ տիպերի և տեսակների պահպանության համար:

9. Հայաստանի Գավառագիտական Ընկերությունն ունի կենտրոնական գավառագիտական բյուրո և գավառային կենտրոններում ընկերություններ՝ իրենց խորհուրդներով: Գավառագիտական Ընկերությունը մասսայական ընկերություն է, իրեն նպատակ է դնում բազմակողմանի ուսումնասիրել Հայաստանը:

10. Պետական տակդեմիական թատրոն:

11. Պետական Գիտական Խորհուրդը (ՊԳԽ) կազմակերպված է Լուսժողկոմատին կից և նպատակ է դնում դեկավարել յերկրի լուսավորության գործը:

12. Պետական հրատարակչություն (Պետհրատ) ունի 36,000 ռ. դրամագլուխ, 3 տպարան և 14 բաժանմունք՝ Հայաստանի գավառներում և հարևան հանրապետություններում: Պետհրատական հրատարակչությունը լույս է ընծայում գիտական, գեղարվեստական հայկական գրքեր, իր ուշադրության մեծ մասը նվիրելով դասագրքերին: 1926 թ. ընթացքում Պետհրատը լույս է ընծայել.

№№	Ս Ե Ր Ի Ա	Անուն	Տպագրական թերթ	Տիրաժ	Հանածո	Գումարը
1	Դասագրքեր	32	550¼	568,500	7,382,500	642,250ռ
2	Բազ. գրականութ.	35	315	128.000	1,937.600	
3	Գրական գիզարվեստ.	21	230	55,00	733,200	56·285 »
4	Լ. կ. յ. Մ, գրադար.	26	131¼	102,000	39,700	40,050 »
5	Մանկական և մանկավարժ.	21	53	77.000	212 000	18,400 »
6	Լենինյան գրադար.	10	177½	52,000	414,000	26,600 »
7	Բանվորա-գյուղաց.	5	10½	18,000	43,000	4,050 »
8	Գիտական	9	51	36,000	212,000	19,150 »
9	Այլ տեսակի	3	48	51.000	181,500	4,000 »
	Ընդամենը	162	1566½	1.087·700	11,155800	810,785 ռ

ԱՐՀԵՒՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Արհեստավորության ցանցը 1924/25 – 1926/27 ուս. տարիներում հետևյալն է յեղել.

	Դպրոցների տիպը	Վիրաեղ	Քանի՞ դպրոց	Աշակերտների թիվը
1	Համալսարան	Յերևան	1	1186 հոգի
2	Կոնսերվատորիա	Յերևան	1	290 »
3	Գյուղատնտես. Տեխնիկում	Յերևան և Լենինական	2	100 »
4	Մեդիցինական »	» »	2	429 »
5	Մանկավարժակ. »	» »		
		Վաղարշապատ, Ստեփանավան	4	569 »
6	» »	Թուրքական Յերևան	1	40 »
7	Կոոպերատիվ »	Յերևան		
8	Գյուղատնտեսական սովրին տիպի դպրոցներ	Զանազան վայրերում	10	753 »
9	Բանֆակներ	Յերևան, Լենինական	2	604 »
10	Կենտ. դպրոց-արհեստանոց	Յերևան	1	121 »
	Ընդամենը		24	4092 »

ՓԱՂԱՀՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Փոդուսհիմնարկների ցանցը հետևյալն է.

	Լուսհիմնարկների տիպը	Քանակը	Սովորողների թիվը
1	Լիկկայաններ	476	15,791
2	Կիսագրագետների խմբ.	46	1,385
3	Նախազին. Լիկկայան	59	1,648
4	Բարձր տիպի դպրոց	4	840
5	Կուս. դպրոցներ	4	173
6	Բազ. դպրոցներ	33	843
7	Շրջիկ դպրոցներ	80	2,241
8	Ընթերց-ընթերցարաններ	328	
9	Գրադարան	207	
10	Ակումբ	37	
11	Թատրոն	13	
12	Կինո	16	
	Ընդամենը	1,303	22,920

Ա.ՀԱՅԱՏԱՆ

1. Հաշվեցեք՝ Հայաստանի բնակչության վոր տոկոսն է սովորում գանազան լուսհիմնարկներում։ Նույնը հաշվեցեք Հայաստանում ապրող ուրիշ ազգությունների նկատմամբ։

2. Հաշվեցեք՝ դպրոցական հասակ ունեցող բնակչության վոր տոկոսն է սովորում դպրոցներում և վոր տոկոսը դուրս է մնում դպրոցից։

3. Եքսկուրսիա գնացեք Յերևանի պետական թանգարանը և Էջմիածնի թանգարանն ու Մատենադարանը։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդի առողջությունը անտեսական գործոններից մեկն է։ Վորքան առողջ է ավյալ յերկրի ժողովուրդը, վորքան յերկար է միջին կյանքի տևողությունը, վորքան մահացությունը ծննդաբերությունից պակաս է, այնքան մեծ է այն յեռանդը, վոր գնում է բնակչությունը յերկրի անտեսությունը բարգավաճելու համար։ Մյուս կողմից, հասկանալի չե, վորքան բարձր է յերկրի անտեսությունը, այնքան բարձր է և ժողովրդի առողջապահությունը։ Հայաստանի բնակչության առողջապահության գործը ցարական կառավարության որով վերին աստիճանի թույլ եր դրված։ Ամբողջ Հայաստանի տարածության վրա 1914 թ. կար ընդամենը 15 հիվանդանոց, 150 մահճակալով և 32 բժիշկ։

Համաշխարհային պատերազմը և նրանից հետո ազգամիջյան կռիվները և, վերջապես, տաճկական արշավանքն անասելի հարված հասցրին ժողովրդի առողջապահությանը։ Դաշնակցական կառավարության որով ամբողջ Հայաստանում իշխում էին սովն ու հատաճարակը։

Սկզբում խոլերան, ապա բծավոր տիֆը հալածավոր դեր էին կատարում։ Խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո առողջապահության ժողկոմատը ժողովրդական առողջապահության գործի մեջ միանականություն է մտցնում։ Ամենից առաջ նա աշխատում է ժողովրդական առողջապահության վերաբերյալ գիտելիքները մասսայական դարձնել։ Մտցվում է յերիտասարդության մեջ մասսայական ֆիզկուլտուրա, կազմակերպվում է մոր և մանկան պահպանումը իր մսուրով և բժշկական խորհրդակցություններ։ Սոցիալական հիվանդությունների դեմ (սիֆիլիս, պալարախտ) լայն պայքար է սկսվում։ Մեր յերկրի չարչքի՝ մալարիայի դեմ հիմնական պայքար է տրվում։ Ապահովագրված բանվորներին և ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվում է վորակավորված բժշկական ոգնություն պետության հաշվին։ Լայն չափով դրվում է աշխատավորության համար սանատորա-կուրորտային ոգնությունը։ Ներքև բերված ապյուսակը ցույց է տալիս բժշկա-սանիտարական ցանցի զարգացումն ըստ տարիների։

Տարիներ	Հիվանդանոցների թիվը		Մահճակալների թիվը		Վերջին տարվա ընթացքում բուժվածների թիվը	Վերջին տարվա ընթացքում դուրս գրվածների թիվը	Վերջին տարվա ընթացքում պլիկլինիկաների միջոցով բուժվածների թիվը	Վերջին տարվա ընթացքում տանը բուժվածների թիվը	Ամբողջ թիվը
	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական					
1913	8	7	95	55	—	8	—	—	—
1922	16	8	985	144	19	8	—	—	13
1923	14	8	925	130	12	11	3	—	13
1924	17	8	773	153	19	8	18	—	13
1925	17	8	785	179	28	8	21	1	14

ՊԱՅՔԱՐ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ

Առանձին ուշադրության և արժանի մալարիան։ Այս հիվանդությունը չափազանց տարածված է Հայաստանում։ Կարելի չե ասել վոր Հայաստանի բնակչության առնվազ 35%. յերթե վոչ ավելին, հիվանդ է մալարիայով։ Ներքև բերված ապյուսակը ցույց է տալիս մալարիկների շարժումն ըստ տարիների ամբողջ Հանրապետության մեջ։

Տարիներ	Այցելումների ընդհանուր թիվը	1000 բնակչին մալարիայով հիվանդների թիվը	Ծախված խինինի քանակը	Դասախոսությունների թիվը	Լսողների թիվը
1922	146,758	87	—	—	—
1923	148,689	69	50,872,00	—	—
1924	196,031	78	60,146,90	366	19,245
1925	285,775	88	174,692,65	845	47,876

Մալարիայի դեմ պայքար մղելու համար 1923 թ. հիմնադրվում է Հայաստանի Տրոպիկական Ինստիտուտը։ Ինստիտուտն իր հիմնադրման որից սկսում է ուսումնասիրել Հայաստանի տարբեր վայրերի թե մալարիա և թե գանազան տրոպիկական հիվանդությունները առաջացնող պատճառները։ Այդ ինստիտուտում պատրաստվում են բարձր և միջին բժշկական աշխատավորներ Հանրապետության գավառներում և շրջաններում աշխատելու համար։

Աշխատանք

1. Հաշվեցեք՝ Հայաստանի բնակչության վոր տոկոսն է տովրում գանազան լուսհիմնարկներում։ Նույնը հաշվեցեք Հայաստանում ապրող ուրիշ ազգությունների նկատմամբ։

2. Հաշվեցեք՝ դպրոցական հասակ ունեցող բնակչության վոր տոկոսն է սովորում դպրոցներում և վոր տոկոսը դուրս է մնում դպրոցից։

3. Եքսկուրսիա գնացեք Երևանի պետական թանգարանը և Էջմիածնի թանգարանն ու Մատենադարանը։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդի առողջությունը անտեսական գործոններից մեկն է։ Վորքան առողջ է ավյալ յերկրի ժողովուրդը, վորքան յերկար և ժարդուս կյանքի տևողությունը, վորքան մահացությունը ծննդաբերությունից պակաս է, այնքան մեծ է այն յեռանդը, վոր գնում է բնակչությունը յերկրի անտեսությունը բարձրացնելու համար։ Միայն կողմից, հասկանալի յե, վորքան բարձր է յերկրի անտեսությունը, այնքան բարձր է և ժողովրդի առողջապահությունը։ Հայաստանի բնակչության առողջապահության գործը ցարական կառավարության որով վերին աստիճանի թուլլ եր դրված։ Ամբողջ Հայաստանի տարածության վրա 1914 թ. կար ընդամենը 15 հիվանդանոց, 150 մահճակալով և 32 բժիշկ։

Համաշխարհային պատերազմը և նրանից հետո ապրամիջյան կռիվները և, վերջապես, տաճկական արշավանքն անասելի հարված հասցրին ժողովրդի առողջապահությանը։ Դաշնակցական կառավարության որով ամբողջ Հայաստանում իշխում եյին սովն ու հիվանդարակը։

Սկզբում խոերան, ապա բծավոր տիֆը հալածավոր դոհեր եյին կլանում։ Խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո առողջապահության ժողկոմատը ժողովրդական առողջապահության գործի մեջ միանականություն և մտցնում։ Ամենից առաջ նա աշխատում է ժողովրդական առողջապահության վերաբերյալ դիտելիքները մասսայական դարձնել։ Մտցվում է յերկուսաստիճան մեջ մասսայական ֆիլդշուրա, կազմակերպվում է մոր և մանկան պահպանումը իր մսուրով և բժշկական խորհրդակցություններով։ Սոցիալական հիվանդությունների դեմ (սիֆիլիս, պալարախտ) յեղ պայքար է սկսվում։ Մեր յերկրի չարիքի՝ մալարիայի դեմ հիմնական պայքար է տղվում։ Ապահովագրված բանվորներին և նրանց

ռայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվում է վորակավորված բժշկական ոգնություն պետության հաշվին։ Լայն չափով դրվում է աշխատավորության համար սանատորա-կուրորտային ոգնությունը։ Ներքև բերված ապյուսակը ցույց է տալիս բժշկասանիտարական ցանցի զարգացումն ըստ տարիների։

Տարիները	Հիվանդանոցների թիվը		Մահճակալների թիվը		Բժիշկների ընդհանուր թիվը	Բժիշկների պետական հիվանդանոցներում	Միջատների դեմ պայքարող մարտական ջոկատների թիվը	Ամբուլատորիաների և դաշտային կայանների թիվը	Վերջինների
	ընդհանուր թիվ	պետական	ընդհանուր թիվ	պետական					
1913	8	7	95	55	—	8	—	—	—
1922	16	8	985	144	19	8	—	—	13
1923	14	8	925	130	12	11	3	—	13
1924	17	8	773	153	19	8	18	—	13
1925	17	8	785	179	28	8	21	1	14

ՊԱՅՔԱՐ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ

Առանձին ուշադրության և արժանի ժալարիան։ Այս հիվանդությունը չափազանց տարածված է Հայաստանում։ Կարելի յե ասել վոր Հայաստանի բնակչության առնվազ 35% յերթե վոչ ավելին, հիվանդ է մալարիայով։ Ներքև բերված ապյուսակը ցույց է տալիս ժալարիկների շարժումն ըստ տարիների ամբողջ Հանրապետության մեջ։

Տարիները	Այցելումների ընդհանուր թիվը	1000 բնակչին մալարիայով հիվանդների թիվը	Ծախված խինինի քանակը	Դասախոսությունների թիվը	Լողների թիվը
1922	146,758	87	—	—	—
1923	148,689	69	50,872,00	—	—
1924	196,031	78	60,146,90	366	19,245
1925	285,775	88	174,692,65	845	47,876

Մալարիայի դեմ պայքար մղելու համար 1923 թ. հիմնադրվում է Հայաստանի Տրոպիկական Ինստիտուտը։ Ինստիտուտն իր հիմնադրման որից սկսում է ուսումնասիրել Հայաստանի տարբեր վայրերի թե մալարիա և թե գանազան տրոպիկական հիվանդություններ առաջացնող պատճառները։ Այդ ինստիտուտում պատրաստվում են բարձր և միջին բժշկական աշխատավորներ Հանրապետության գավառներում և շրջաններում աշխատելու համար։

ՀԱՎԵԼՈՒՄ

ՆՈՐ ԼԵԳԵՆԴԱ

Այղըր լճի հորդառատ և սառն ակունքներով հարուստ ավազանը և իր կողքին դարավոր Մեծամորն անժամանակ թվականներից ի վեր անպետք են չեզել, վորովհետև թե լճի և թե Մեծամորի, այժմյան Սև Ջրի ավազաններն այնքան են խոր, վոր Արարատյան դաշտը ճեացել է չոր, չոր ինչպես անզավակ պառավի ստինքները։ Ամառվան տապին, յերբ Արարատյան դաշտի անջրդի ավազուրքյունները խանձվում են և գարնան կանաչ խոտն սկսում է դեղնել, ժաղճային գուշն սառնալ, հեղեղների նման հոսում են ջրի առուները, վորոնք սուզվում են Արագածի սրտից։ Չկա ժայռի մի ծերպ, չկա հողի մի շերտ, վորի միջից սառը հոսանքներ չժայթքեն գուրս։ Թե լճի և թե Մեծամորի յեղերքներն ամայի չին, չկա մի ծառ, միայն ջրի միջից յեղեգներ են բարձրանում, վորոնք ջրի առատությունից շուտով հագենում են և սկսում են դեղնել։

Դարեր շարունակ այս վայրերում միայն գորտերն են կռկռացել միօրինակ, միօրինակ, միօրինակ։ Ամեն կրիաներ, դանդաղ և վախկոտ, փուռի մեջ նետված քարերի նման տաք քարերի վրայից յերերալով, գալիս ընկնում են ջուրը, լողում են և զովանում։ Քարերի ծերպերից մողեսներ և մկլեզներ են դուրս գալիս, մի ակնթարթ նայում և վազում մի ուրիշ քարի ծերպ։ Այստեղ իշխում են մոծակները, իշխում են միահեծան, և յերբ տապը սաստկանում է՝ նրանք թողնում են իրենց հայրենիքը և սկսում են տարածվել Արարատյան դաշտը, մինչև այնտեղ, ուր տոթի, տապի թագավորությունն է։

Այստեղ չկա ժողովուրդ, վոր լեգենդաներ պատմի լճի և Մեծամորի մասին, այս վայրի պատմությունը գիտեն մոծակները, կրիաները, մկլեզները և վայրի խոզերը, վորոնք միայն ձմեռն են յերեվում յեղեգների մեջ։

Ամառը՝ յերբ կեսորից հետո բարձրանում է քամին՝ հեռվից փոշու ամպ է բերում, պատում է լիճը դեղնացած ամբի նման, ջուրը կատաղում է, ալիքներ է կազմում, Մեծամորի յեղեգները կատաղում են մինչև ջուրը, բարձրանում, ելի կռանում, դարձյալ է

1925։

Ա. Կոջոյան

(*) Ծանոթություն. Ներկա վեպիկը տպագրվում է հայտնաբերված տարբեր շրջաններում 1925 թ. ամառվան ընթացքում։ Ինչպես տեսնում ենք, վեպիկի հեղինակը Տիգրան Ա Երվանդունի (95-55 թ. Ք. ա.) անունով կապված ավանդությունները վերագրում է Հայկական լեռնաշխարհի ամենագեղեցիկ լճերից մեկի՝ Սևանա լճի ծագմանը։ Ըստ վեպիկի հերոսների՝ Սևանա լիճը ստեղծվել է Արարատյան դաշտի ոռոգման համար։ Ինչպես հայտնի է, Սևանա լճի ջրերը ոռոգում են Արարատյան դաշտի մեծ մասը։ Վեպիկում հիշատակվող Մեծամորը գտնվում է Արարատյան դաշտում, Երևանից 8 կիլոմետր հեռավորության վրա։ Մեծամորի ավերակների մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել Ա. Տերտերյանի «Հին Հայաստանի քաղաքները» աշխատության մեջ։

գորտերի կռկռոցը, վոչ մի մկրեզ դուրս չի գալիս, միայն ժայռի կամ քարի ծերպից նրանք նայում են դուրս, գլուխները պոչի նըման չերերցնելով, ժոծակները փակչում են չեղեգներին և սեզերին, մինչև քամին դադարի, ջուրը հանդարտի և առջն սկսի ճնշել ամբողջ շրջապատը։

Այստեղ գիշերօդներ չեն լեղել, միայն ճամբորդներ են անցել, վորոնք ցած են չեկել իրենց իշուց, կռացել, խմել են Աբռաքածի սրտից ժայթքած սառը ջրերից, հետո վոտներն են լվացել, նապել են ջուրը հուսահատ նայվածքներով, գլուխին չերերցրել, թե ինչպես ջրի այս հարուստ ավազաններն այսքան խոր են և հարուստ, հոգի տարածություններն այնքան բարձր։

* *
*

Բայց Այղրը լճի շուրջն սկսել է հյուսվել մի հերոսական լեգենդա, բնության կամակորության, չկամության հաղթանակող տեխնիկայի մի լեգենդա, վորի առջև ապշել են գորտերը, ժոծակները, քարերի ծերպերից գաղտագողի նայող մկրեզները և հավտա, չոր, անպտուղ և անպատկառ ժայռերը։

Մեքենաների տեղծագործ ոգմուկը լռեցնում է հիմա գորտերի կռկռոցը, չկա հիմա լուսավորչի կանթեղը, գիշերը ելեքտրական լույսերը վրդովում են ամայի տարածությունների անդորրը, դարավոր անմարդաբնակության փոխարեն տասնյակ հարյուրավոր բանվորներ և տեխնիկներ են վխտում այնտեղ վերջնականապես կործելու բնության հավատությունը։

Անվերջ խոխոջ չերկաթի ոգմուկ։ Պայթում է դինամիտը, լճի անորինակ հուզումներ և ապրում, վիթխարի և վայրկենական շառավան և գոյանում լճի կրծքի վրա. փորում են լճի ավազանը, նրա խորությունը ավելի չեն խորացնում, վորպեսզի հափշտակեն լճի սառը հոսանքները, բարձրացնեն վեր և զովացնեն դարերի չոքությունը։

Այս ամայության մեջ մեր նախնիքները միայն ժառուռ կկառուցելին միջնադարի միատիպ ոգով, մուխ փորքը և խնկավետ մի ժառուռ, վոր շուրջը մի քանի վանականներ, աշխարհից փախած, կաղոթելին, կուտելին, կխմելին, ելի կուտելին, կը քնելին չերկար և կերազ չին գյուղ ալի մի կին, կարմիր թշերով, առողջ և բոբիկ, վոր գալս, վոսը դնում է իրենց կրծքի վրա և հեռանում։

Բանվորներն այստեղ, ժայռի գագաթին կառուցել են միջնադարյան ժառուռի ճարտարապետական արտաքին վոճով մի շենք,

վորի ներսը վոչ խաչ կա, վոչ ժամ և վոչ ել մի դոշակ ծունկ չոքելու համար, այլ տրանսֆորմատորի չերկաթյա թեվերն են, վորոնց ուժը պիտի գրկի լճի ջուրը և բարձրացնի վեր և կանաչացնի դարավոր ամայությունը։

* *
*

Նոր օրերի լեգենդան բնության հաղթահարելու լեգենդան է, վորի գործող անձերը վոչ վանականներ են և վոչ ել ազնվականներ, նոր օրերի լեգենդան հյուսում են բանվորներն ու տեխնիկները, վորոնք զսպում են ջրի ալիքները, բետոն են թափում, կանգնեցնում են ջրի մեջ այնպիսի պատնեշներ, վորոնց դեմ վորքան կըռվեն ջրի ալիքները՝ այնքան ուժեղանում են, դառնում են դաժանորեն դիմադրող և հավերժական։

Բանվորները նստած ճաշ են ուտում, նստած են նրանք խոշոր չերկաթյա խողովակների վրա, վորոնց միջից ջուրը՝ հյուս և հնադանդ, շուտով պիտի հոսի և տարածվի հացի գույն ունեցող դաշտերում։

Այս լեգենդայում անհատներ չկան, չկա մեկը, վորի գլուխն ավելի բարձր կանգնի քան տասնյակ հարյուրավորներինը։ Նրանց ինժիները կոչվում է աշխատանքների դեկավար, վորի դեմքը քաղից հեռու, նման է բանվորների դեմքին, ակոսացած, նրբությունը կորցրած, ընդհանուր աշխատանքի թափով վոգևորված ձայնով։

— Մեր բանվորները, ասում է նա, ասում է մի քանի անգամ, ձմեռը աշխատում ելին ջրի մեջ կանգնած, յերբ առաջ ելին տարվում բետոն թափելու ամենահանդուգն և գործի ամբողջ հիմքը կազմող աշխատանքները։

* *
*

Իսկապես հանդուգն է աշխատանքն այստեղ և դրանից բղխում է այն անկեղծ և ցանկալի դոռոզությունը, վորը արտահայտվում է Այղրը լճին հաղթող ամեն մի աշխատավորի այրած ճակատի վրա։

Թող ամեն մարդ լինի հպարտ, յերբ աշխատում և ստեղծագործում է։

Ղեկավարել բարձրից հոսող ջրերը, տանել այդ ջրերը ցանկացած հունով և ոգտագործել անկման ուժն անջրդեության դաժանությունից առաջող դյուղացիության համար՝ մեծ է, բայց մեծագույն է անհուսալի խորությունից վեր բարձրացնել անպետք հոսող ջրերը։

Արաբատյան դաշտի գյուղացիությունը խորունկ կերպով զգում է այս մեծությունը և դրա համար այնն մայիսի 1-ին, առավոտյան մթնշաղին, լցվում է Մեծամորի և Այղը լճի ափերում տոնելու համար տեխնիկայի տոնը։

Նոր որերի տոնը, դա չքավորությունից, կեղտոտությունից, բնության դաժանությունից ազատվելու տոնն է։

Յեվ արաբատյան դաշտի գյուղացիները լիաթոք, բարձրաղաղակ և ուրախ բացագանչում են հավաքականորեն։

— Կեցցեն խորհուրդները...

Յեվ այդ ազաղակը դառնում է վիթխարի, ահարկու մի յերգ, վորի ձայնը լսում են մինչև անգամ լճի վերի ափին բարձրացող հաժառ քարերը։

Այդ գյուղացիները պատասխանում են հեռու և մոտիկ բոլոր հայհոյողներին։

* *
*

Արաբատյան դաշտում հյուսվում է մի նոր լեգենդա։ Այդ լեգենդան մեզրածոր դարձնելու համար հարկավոր չե դարերի մշուշը։ Հաջորդ գարնան, յերբ ջուրը կողոզե տապից խանձած դաշտերը, յերբ բամբակի գուլնգուլն ծաղիկները կբացվեն կապույտ յերկինքների դիմաց, այդ լեգենդան կդառնա հերոսապատում, նրա բոլոր տարրերը կդառնան եպիկական և մի նոր յերգիչ, պարզ լեզվով, այնքան պարզ, վորքան լեգենդայի հերոսները, կպատմի աշխարհին նրանց գովքը։

Այս նոր եպոսի հերոսները սրեր չեն մերկացնում իրենց սիրտհիներին պաշտպանելու համար, սրեր չեն մերկացնում, վորպեսզի ցույց տան իրենց ազնվական ցեղի հատկությունները, նրանք մերկացնում են իրենց բազուկները, վորպեսզի հաղթեն չքավորության, վորպեսզի ոչնության հասնեն փոշու մեջ վխտացող մանուկներին, վորոնք միայն չոր հաց են կրծում, վորոնց ծնողները հավաքում են կաթը և յուղը, վորպեսզի մի քանի կոպեկների համար քաղաք տանեն։

Հին լեգենդայի հերոսները հավատում էին աստվածներին, հավատում էին խնկին և ավետարանին։

Նոր լեգենդայի հերոսները հավատում են գիտության, յերկաթին, ելեքտրականության և բնության դեմ մղված պայքարին։

ՎԱՀԱՆ ԹՈՓՈՎՆՅԱՆ

ԴԵՊԻ ԿՈՄՄՈՒՆԱ

(Տպավորություններ Ղոնդուրյան կոմմունայից)

Գնում ենք դեպի կոմմունա։

Յերեկոյան ժամը 6-ն է, ողը խոնավ է, թունավոր ամպերը կախ են ընկել, բայց յերկնքի ամբողջ կապուտը դեռևս բոլորովին չի ծածկվել։ Աշեզակը, ամառ յերեկոների բոցավառ արեգակը հրդեհել է դիմացի հորիզոնը և բացատներից տեղ տեղ լուսավորում է խիտ-նային քամուց սրսփացող արոտները։ Մեր յեռանդակը (լինեյկա) ընթանում է դուլդուլն, վայրի ծաղիկների հոտից, Զանգուն ֆշֆշում է հոտի ավազանում, կակաչներ և ուրիշ կարմիր ծաղիկներ կանաչության մեջ տեղ-տեղ վառվել են և ժպտում են խոր և մութ ձորերում տեղ տեղ առկայծող լուսերի նման։

Յերկինքը հետզհետե ամբողջովին ծածկվում է ժուխի և ոպտռնացող ամպերով, անձրևը սկսում է կաթկթել նուրբ շղարշի նման, նախ հեշտանք պատճառելով, բայց գնալով առատանում է և դառնում է սիրական՝ մթության և անայության մեջ։ Ճանապարհը շատ վատ է, ձորը կատարյալ մթնել է, սևացել է սև սաթի նման, վտահանում ենք միայն մեր յեռանդակի յերկու կարմիր ձիերի անսահման իմաստության։ Թացը թափանցում է, խուժում է դեպի ներս և մենք բաց ենք թողնում զգուշության բոլոր միջոցները։ Անցնում ենք դյուղերի քղանցքներով, գամփռ շները հարձակվում են, ուզում են մեզ հոշոտել, ճանապարհը դառնում է ավելի և ավելի անհայտ, բայց առաջանում ենք մթության մեջ, չե՞ վոր դարերով աշխատասովոր մարդկությունը քայլել է արհավրալի մթության միջից հույս ունենալով գտնել առկայծող ճրագը դարերի հոգնած ուսերի վրա։

Ժամի 11 ին մթին ձորի հեռավոր մի կետում տեսնում ենք ատաղանման մի լույս, վոր փայլում է անդունդն ընկնած կայծոռիկի նման։

— Ահա մեր կոմմունայի լույսը, ձայնում է կոմմունայի ընկերներից մեկը։

Ցեխի և ջրերի մեջ կորած մեր վոտներն աշխուժանում են, հասնում ենք յեռանդակի ձիերին և բարձրանում ենք խոտաշատարն ի վեր—դեպի կոմմունան։

Մեզ ընկերակցող ընկերը կորչում է մթում և ահա զողանջում է մի զանգ, կոմմունայի փոքրիկ գաղութի մի քանի բնակարաններից դուրս են թափվում կոմմունայի մյուս անդամները և մեզ դիմավորում են ժապյ գիշերում արշալույսի ժպիտներով։ Կոմմունայի պանրագործարանի աշխատանքը դեռևս չի վերջացել։ Մտնում ենք ներս, մի փոքրիկ, շատ փոքրիկ քառակուսի մի սենյակ, ուր

չափազանց աշխույժ, վառվռուն և կենդանի մի յերիտասարդ ճմլում և վերջին պարկը: Մեզ արագ բարևում և և շարունակում և իր ստեղծագործող շարժումները, որոնք յենթարկված են մեխանիզացիայի: Այնտեղ կա սերզաար, գիտական կերպով պատրաստված խոտին՝ կարագ պատրաստելու համար, կարդում ենք պատի վրա —«դեպի որական 100 փութ կաթ»: Այս և կոմմունայի անտեսական լոզունգը, բայց ավելի խորն են նրա բարոյական լոզունգները:

Մտնում ենք կոմմունալ սեղանատունը, պատին «Դեպի Կոմմունիզմ», պատի լրագիր, դան կողքին մի յուշտակ, մոտ 40 հոգու, վաղվա աշխատանքների. Մ. Յ-յան—պիտի ոզնի պանրագործարանում, Ե. Ք-յան—սայլերը պիտի տանի յայլա և կթի բերի, Հ. Դ-յան—պատ շարել, Լ. Ճ-յան հաց թխել. Մարգո—առավոտյան խոնարարուհու յերեխան պահել և կեսորին վոչխար կթել: Մարգոն պատանի աղջիկ է, կարմիր շորեր է հագնում, աւանց վորևե քաղքենուհու զարգերի, ձմեռներն իր ձային է մտակում Յերևանի Պետ. կոնսերվատորիայում, իսկ ամառները կոմմունայում վոչխար է կթում, ահա նրա պարգ, բայց խոր պատմությունը: Թ. Գ-յան—հովիվ: Սա Ստորջուրյան կոմմունայի խորհրդի նախագահն է, առավոտյան ամբողջ որը չորանոթյամբ է պարապելու: Խորհրդի վրչ մի անդամ չի ազատվում ֆիզիքական աշխատանքից: Մենք հետո իմացանք, վոր կոմմունայի արտաքնոցները մաքրում են իրենք խորհրդի անդամները:

Այս յուշտակն ամեն յերեկո, ընթրիքից առաջ, կախվում է սեղանատան պատից և կոմմունայի ամեն անդամ կարդում է, ապա գնում է ու քնում: Առավոտյան մենք ականատես յեղանք աշխատանքի այնպիսի կանոնավորության, վոր մեզ հուշս ներշնչեց ավելի լուսավոր ապագայի: Ճիշտն ասած՝ ապագան արդեն դարձել է ներկա, վորովհետև Ստորջուրյան կոմմունայի անդամները հաղթահարել են արդեն կոմմունալ կենցաղի նախնական բոլոր բարոյական և անտեսական դժվարությունները:

Ովքեր են այս կոմմունայի անդամները: Սալմանական սարսափներից փախած Ճորոխի ափին ծաղկած Ստորջուրի բնակիչները, վորոնք վորոշել են չապրել իրենց պապերի նման—մեծ քաղաքներում փուռ բաց անել, ծառայել բուրժուազիային, այլ վորոշել են կազմակերպել մի կոմմունա, կոմմունիզմի իրրև նախնական բջիջ: Կոմմունայի անդամները յերիտասարդ են և յերկսեռ, ունեն խորհուրդ, վերատեսիչ հանձնաժողով և համայնական հաճախակի ժողովներ, ունեն պատի լրագիր, սատնում են Միության այլ կենտրոններից գիտական լրագրեր և պարբերականներ, ունեն բավակա-

նաչափ գիրք: Կոմմունայում չկա վրչ մի անգրագետ, բայի մի կամ յերկու կանանցից:

Ինչպես են աշխատում նրանք: Առավոտյան մենք ականատես յեղանք նրանց աշխատանքին: Խորհրդի վորոշմամբ բաժանվում և աշխատանքը, ամեն մեկին իր ֆիզիքական և գիտական կարողության համաձայն: Աշխատում և ամեն մի կոմմունար կամ կոմմունարուհի:

Խորհ. կառավարությունը նրանց հատկացրել 1925 թվից 750 դես. տարածությամբ հող, պետքական անատնապահության և հետևապես կաթնատնտեսության համար:

Կոմմունարների շենքերն անբավարար են: «Դեպի որական 100 փութ կաթ» լոզունգի հետ միասին նրանք ունեն մի ուրիշ լոզունգ ևս: «Ամեն մի ընտանիքի մի սենյակ»: Այժմ մեկ, յերկու և յերբեմն յերեք ընտանիք գիշերում և մի փոքրիկ գյուղական սենյակում, այդ սենյակներում տիրում և ամենաճատարյալ մաքրություն: Կոմմունան այս տարի կառուցում և մի նոր սեղանատուն, այնքան ընդարձակ, վոր այլևս ստիպված չլինեն կոմմունայի անդամները յերեք հերթով ճաշել, շուտ նոր սենյակներ, վորպեսզի ապատեն այժմյան սեղանատունը և մի ննջարանը իրենց յեկամտի գլխավոր աղբյուր պանրագործարանին: Կառուցում են մի ընդարձակ գոմ, վագոնիկներով և գիտական վերջին մեթոդով: Կոմմունայի խորհրդի անդամները յերբ ցույց ավին այդ կիսակառուցված գոմը՝ նրանց աչքերում վառվում եր մի այնպիսի բոցակեզ ուրախություն, վոր չի ունեցել վրչ մի ազնվական իր պալատներն ու զյակները ցույց տալիս:

Մտնում ենք այժմյան գոմը, նոր և ծնվել մի հարթ, բարձր, ուժեղ, դա պիտի լինի ապագա նոր և առողջ սերունդների հայրը: Այս ցուլիկը մոտենում է կոմմունայի անդամներին, նրանք այնպես են համբուրում այդ վճիտ աչքերով ցուլիկին, ինչպես ծնողները իրենց յերեխաներին: Ահա հավնոցը, ճագարանոցը, հնդկահավերը, սագերը, բադերը, յորկշիր խոզերը, վոչխարները, կովերը, յեզները (վոչ մի գոմեշ):

— Ինչու գոմեշ չեք պահում, հարցնում եմ նախագահին:

— Չենք սիրում գոմեշի հայացքը, պատասխանում է նախագահը ժպտալով:

Ահա խոտի մի դեզ:

Այս դեզն արժե ավելի քան 12,000 ռուբլի, ասում է կոմմունարը, բայց դժբախտաբար ճանապարհ և սրանապորտ չկան արժեքները հանելու համար: Կոմմունան ամբողջ զանգատվում է ճանապար-

հից։ Կեռգործկոմը վորոշել է, վոր այդ շրջանի գյուղացինները նվիրեն 5 որական աշխատանք ճանապարհի շինարարության համար, բայց շրջգործկոմը դեռևս չի ունեցել այդ աշխատանքի կիրառումը։

Մոտում ենք կաշվի արհեստանոցը։ Վոչ մի հում նյութ կոմմունայից դուրս չի գնում, նա վերածվում է ապրանքի։ Կոմմունայի մի քանի անդամներն աշխատում են կաշվի արհեստանոցում, հյուսվածագործիկները, իսկապես գեղարվեստական, պատրաստվում են այստեղ։ Սարի լանջին դրված են կոմմունայի փեթակները։ Գուշնզգուն, վառվող գույներով ծաղիկների վայր է կոմմունայի ձորը, մեղուների իսկական վայրը։

Այս բոլորը կոմմունայի անտեսականն եր, բայց ավելի պայծառ և վոգևորիչ է կոմմունայի բարոյականը։ Կոմմունայի անդամները լի լեն հավատքով դեպի իրենց համայնական գործը, իսկապես նոր կենցաղ, նոր հասկացողություն, հնի վոչ մի մազաչափ վերադարձ կոմմունայում։ Այս մարդիկ անդարձ կտրված են հնից։ Այստեղ հյուր են գալիս մոտակա և հեռավոր գյուղացինները, 8—10 որ հյուրասիրվում են այստեղ, գյուղացիներն ուսումնասիրում են համայնական անտեսությունը, համայնական կենցաղը և վերադառնում։ Այստեղ կա մի հյուր հեռավոր Լուկաշենից չեկած, նա ցանկանում եր Առաջորդուրի կոմմունայից փորձ տանել Սարդարապատի անապատը։

Յերեկոյան խորհուրդը քննում է խնդիրները, շատեր են հարկավոր, մեկին ծխախոտ չի բավել, մի ուրիշին ուրիշ բան է հարկավոր։ Խորհուրդը վորոշում է անխտիր բավարարել բոլորին։ Աշխատանքը վերջանում է։ Խորհրդի նախագահը նախերը բերում է կոմմունա։ Յերեկոյան թեյի ժամանակ է, հավաքվում են բոլորը։ Նրանք պատեն միջագգային ամբողջ կյանքը — Չան-Ցո-Լինից մինչև Զեմբերլեն և Կուլիջ։ Հասկանում են Միության բոլոր ներքին և արտաքին խնդիրները։ Ամեն մի հարց կոմմունայում յենթարկվում է լուրջ քննության։ Կարդում են անվերջ։

Կոմմունան լրջորեն մտածում է մի փոքրիկ ժոտոր սարքել և ելեքտրական լույս ունենալ. դրանից հետո կոմմունան կունենա իր ամառանոցային հարմարությունները հովեկների համար ունենալով համայնական ճաշարան և այլն։

Առողջ են կոմմունայի յերեխաները։ Նրանք կոմմունայի առանձին դուրդուրանքի առարկաններն են հանդիսանում, յերեխաների համար նշանակում է խորհուրդն առանձին դիետա, ինչպես և այնփոքրիկ 5 որական յուլիկին։ Յուլիկին տալիս են որական 20 ֆունտ, վորը շատով պետք է բարձրանա 30-ի և 40-ի։

* * *

Ահա մի կենցաղ, վոր հասակ է քաշում, ուռճանում, փարթամանում, ինչպես առողջ, պարարտ և կուլտ հողի վրա աճող պերճաշուք մի ծառ։

Չները յավապին հոգով կդիտեն այս կյանքը, վորտեղ չկան քյախվաներ և անհատական կրքեր և քմահաճույքներ։ Կոմմունայում կա մի խոշոր գանգ, նախկին մի յեկեղեցու գանգ, վոր որական 3 անգամ զոդանջում է և հրավիրելով կոմմունարներին և կոմմունարուհիներին ճաշի կամ աշխատանքի։

Յեվ հինավուրց, անմեղ արուեստը ծառայում է նորագույն, համայնական և կոմմունալ բարոյականով լի կենցաղին։

ՎԱՀԱՆ ԹՈՓՈՎԵՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՄ ՏՎՅԱԼ ԳԱՎԱՌԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1) Ոգտվելով գրքից կցված վիճակագրական տեղեկություններից դիագրամներ կազմեցեք Հայաստանի կամ տվյալ գավառի ազգաբնակչության քանակի փոփոխման, նույնպես և բնական աճման մասին։ Աշխատեցեք բացատրություն գտնել, թե ինչով և պայմանավորված բնակչության այս կամ այն տարվա ամենամեծ աճումը կամ նվազումը։

2) Վորոշեցեք Յերևանի կամ ձեր գավառական կենտրոնի բնակչության աճումը նույն այդ տարիներում։ Ինչով կբացատրեք Յերևանի կամ ձեր գավառի կենտրոնի բնակչության շրջափելի աճեցողությունը վերջին տարիների ընթացքում։

3) Վորոշեցեք Հայաստանի ազգաբնակչության խտությունն առանձին գավառներում տարբեր տարիներում։ Հայաստանի վոր գավառներն են աչքի ընկնում իրենց խտությամբ և ինչով կարելի է բացատրել ամենամեծ խտությունը։

Շատ շահեկան աշխատանք կատարած կլինեք, յեթե պարզեք ձեր գավառակի բնակչության խտությունը, տվյալները ձեռք բերելու դեպքում։

4) Հայաստանի ազգերևութաբանական կազմի տվյալներով վորոշեցեք տարեկան բարեխառնության միջին աստիճանը, նույնը նաև առանձին ամիսների նկատմամբ։

5) Վորոշեցեք Հայաստանի արևմտյան, արևելյան, հյուսիսային և հարավային մասերի բարեխառնության միջին ատիճանը։

6) Վորոշեցեք մշնոլորտային տեղումների քանակը Հայաստանում, վոր գավառում առավել չափով և վոր գավառում նվազում։

7) Ինչպես են բաշխվում մշնոլորտային տեղումները Հայաստանում ըստ տարվա յեղանակների։

8) Հավաքեցեք նմուշներ և կազմեցեք Հայաստանի հողերի ժողովածու, վորոշեցեք Հայաստանի տարբեր գավառների անտառածվեստությունը։

9) Ինչպես և փոփոխվել Հայաստանի ցանքսերի տարածությունը վերջին տարիներում։

10) Ինչպես և փոփոխվել Հայաստանի բամբակի և ծխախոտի ցանքսերի տարածությունը վերջին տարիներում։

11) Հայաստանի ընդհանուր տարածության ինչ տոկոսն են կազմում ցանքսերը, խոտհարքը և արոտատեղը։

Յանկալի յե այս տվյալները մշակել ըստ գավառների և գավառակների։

12) Առանձին մշակություններ Հայաստանի (գավառ, գավառակ) ամբողջ տարածության ինչ տոկոսն յեն կազմում։

13) Հայաստանի վոր գավառում կամ գավառակում և գերակշռում այս կամ այն մշակությունը։

14) Հողագործության վո՞ր սիստեմն և կիրառվում (խոպանային, յեռադաշտային, քառադաշտային և բազմադաշտային) Հայաստանի այս կամ այն գավառում։

15) Ինչ յեղանակներով են պարարտացնում հողը Հայաստանի այս կամ այն գավառում։

16) Վորոշեցեք Հայաստանի (գավառ, գավառակ) անասունների քանակը (ձիերի, խոշոր յեղջյուրավոր կենդանիների, վոչխարների, խոզերի և ընտանի թռչունների)։

17) Վիրքան ձի, խոշոր յեղջյուրավոր կենդանի, վոչխար և խոզ և ընկնում Հայաստանի (գավառ, գավառակ) յուրաքանչյուր հարյուր հեկտար ցանքսին։

18) Հայաստանի վոր գավառներում, կամ գավառակներումն են զարգացած՝ այգեգործությունը, մեղվաբուծությունը, շերամապահությունը, պանրագործությունը, տնայնագործությունը և քանջաբեղենների մշակությունը։

19) Թվական տվյալներ հավաքեցեք այդ տնտեսությունների վերաբերյալ և կազմեցեք դիագրամներ։

20) Տնտեսական ինչ ռայոնների կարելի յե բաժանել Հայաստանը նկատի առնելով հետևյալ նշանները՝ ա) ազգաբնակչություն (խիտ, միջակ և նվազ), բ) հողերը (կավային, ավազային, շագանակագույն, սևահողային, լեռնաարոտատեղային և այլն.) գ) առանձին գերակշռող մշակություններ և արդյունաբերություն (հացահատիկներ, բանջարեղեններ, կարտոֆիլ, կաթնատնտեսություն, լեռնային արդյունաբերություն, այգեգործություն, տեխնիքական բույսերի մշակություն և այլն)։

21) Քանի՞ յերկաթուղագիծ և անցնում Հայաստանով և վոր ուղղությամբ։ Ի՞նչ նոր յերկաթուղագծեր են ծրագրվում անցկացնել Հայաստանում և ինչ ուղղությամբ։

22) Յերկաթուղագծերի յերկարությունն ամբողջ Հայաստանում։

23) Քանի խճուղի և այլ ճանապարհներ կան Հայաստանում, (գավառում, գավառակում) և ինչ ուղղությամբ։

24) Հայաստանի զանազան գյուղերն ինչ հեռավորություն ունեն յերկաթուղագծից։

25) Վո՞ր գավառի գյուղերն են ամենից հեռու ընկած յերկաթուղագծից։

26) Յուց տվեք Հայաստանի յերկաթուղագծի և կառուցվելիք յերկաթուղագծերի տնտեսական նշանակությունը։

27) Հայաստանի յերկաթուղագիծը համամիութենական նշանակություն ունի՞ արդյոք։

28) Ինչ հեռավորության վրա յեն գտնվում շրջգործկոմները Յերևանից և գավառային կենտրոններից։

29) Կենտրոն ընդունելով Յերևանը, գծեցեք մի քանի համակենտրոն շրջանագծեր 20, 40 և այլն կիլոմետր շառավիղներով։ Վորոշեցեք խոշոր ավանների հեռավորությունները այդ կենտրոնից։

30) Հայաստանի վոր վայրերումն են II° գլորոցներ գտնվում։

31) Ջեր գավառի վոր տեղումն են զրադարաններ, խրճիթ-ընթերցարաններ և I° գլորոցներ գտնվում։

32) Վորոշեցեք Հայաստանի ազգաբնակության գրագետների % քան սեռի և քան ազգության։

33) Քանի և ինչ խորհրդային տնտեսություններ կան Հայաստանում ու ինչ նշանակություն ունեն նրանք։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԳՅՈՒՂԱՅՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԱՆԿԵՏԱ.)

1. Գավառ . . . . . .
2. Գավառակ . . . . . .
3. Գյուղ . . . . . .
4. Հեռավորությունը յերկաթուղու կայարանից . . . . . .
   Մինչև շրջանային գյուղը . . . . . .
   Մինչև քաղաք . . . . . .
   Մինչև խորհրդային տնտեսություն . . . . . .
5. Տնտեր . . . . . .
6. Յեկամուտի գլխավոր աղբյուրը (գյուղատնտեսություն, սրա տեսակը, տնայնագործություն, դարիբություն գնալը).
7. Վաղուց, արդյոք, գոյություն ունի տնտեսությունը։
8. Տնտեսության ներկա տերը վորևե բարենորոգություն արել է թե վոչ։
9. Վերջին տասնամյակի ընթացքում տնտեսությունը բաժանման չի յենթարկվել արդյոք և յեթե յենթարկվել է, ինչպես է ազդել տնտեսության վրա։
10. Ինչպես է տարվում տնտեսությունը. միայն տիրոջ վճանչնյա աշխատանքով, թե նաև ընտանիքի անդամների մասնակցությամբ . . . . . .
11. Ընտանիքի կազմը . . . . . .
    ա. Սեռ . . . . . .
    բ. Հասակ . . . . . .
    գ. Գրագիտություն . . . . . .
    դ. Ընտանիքի ամուսնացող անդամներն ինչ հասակում են ամուսնացել . . . . . .
    ե. Բաժանարդագրվել է, արդյոք, ընտանիքը այս կամ այն գյուղացիական թերթին . . . . . .
    զ. Դպրոցական տարիք ունեցող անդամներից քանիսն են սովորում (վոր դպրոցներում). անդամագրված են ԼԿՅԵՄ-յան կամ պիոներական կազմակերպության մեջ։
12. Յեթե տնայնագործությամբ է պարապում, այդ դեպքում՝ ում համար—հավաքողի (скупщик), պատվիրողի, թե շուկայի։
13. Յեթե կաթնատնտեսությամբ է պարապում, առանձին տնտեսություն ունի, թե կոոպերացիայի կամ արտելի անդամ է։
14. Տնտեսության մեջ վարձու աշխատավորներ կան արդյոք, յերկարատև կամ որական աշխատող։

15. Ազատ է, արդյոք, տնտեսությունը վարկային ընկերություններից։
16. Տնտեսությունը վոռոգվող հողամասի վրա յե գտնվում, թե դեմի և յեթե վոռոգվող հողամասում, վորոշել՝ արդյոք վոռոգումը բավարար է, թե՞ անբավարար։
17. Ի՞նչ ճանապարհներով է կապված տվյալ տնտեսությունը քաղաքի հետ, (յերկաթուղի, խճուղի, սայլի ճանապարհ և այլն)։
18. Ընտանիքը ինչ լույսից է ոգտվում (ճրագ, էլեքտրականություն)։
19. Ի՞նչքան սապոն է գործ ածում ընտանիքի ամեն մի անդամը մի ամսվա ընթացքում։ Վ.որքան միս, շաքար, վորքան խմիչքներ (ողի, գինի և այլն)։
20. Ընտանիքի յուրաքանչյուր անդամ առանձին անկողին ունի՞, թե վոչ. ամիսը քանի անգամ է գնում բաղնիս։
21. Ընտանիքում վարակիչ հիվանդություն ունեցողներ կան (թոքախտ, սիֆիլիս, բորոտություն և այլն)։
22. Կազմել տնտեսության հատակագիծը՝ իր առանձին հյուղերով (այգի, արտ, արոտ, և այլն)։

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՇԱՅՈՒՑԱԿԸ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Քանի՞ դեսյատին հող ունի տնտեսությունը և ինչպիսի՝ ագարակ, վարելահող, արտ, անտառ և անպետք հող։
2. Վարելահողի տեսակը (ծանրահավ, թեթևահավ, միջակ և այլն)։
3. Դաշտերում կան արդյոք հեղեղատներից գոյացած ձորակներ, ճահիճներ, առուպարներ (քարքարոտ տեղեր)։
4. Ջուրն, արդյոք, չի հավաքվում դաշտերում ու լճանում։
5. Ի՞նչ սերմափոխություն և կատարվում տնտեսության մեջ (յեռադաշտ, քառադաշտ և այլն)։
6. Ի՞նչ հաջորդականությամբ են ցանվում հացահատիկները։
7. Տնտեսությունը յերկրագործական ինչ գործիքներ ունի և նրանց արժեքը։
8. Բավարար է, արդյոք տվյալ տնտեսության ինվենտարը և ինչի պակասություն է զգացվում։
9. Բակում ինչ շենքեր կան (գոմ, մարագ, տաղան և այլն)։
10. Անասունների և թռչունների քանակը, նրանց արժեքը և ծննդաբերությունը. վորքան ծախվում և վորքան է գործածվում տվյալ տնտեսության մեջ։
11. Վ.որքան կաթ է տալիս մի կովը, վորքան ձու յե ածում մի հավը։
12. Կաթնամթերքներն ում են պատրաստվում՝ տվյալ տնտեսու-

թյան մեջ, թե այլ տեղ։ Զվերը գործածվում են, թե վաճառքի հանվում։

13. Մոշոր յեղջուրավոր անասունների հորթերն ու ձագերը մնում են ավյալ տնտեսության մեջ, թե ծախվում են կամ գործածվում։

14. Տնտեսությունը վիրքան բուրդ կամ մորթի յե ստանում։

15. Ի՞նչպես են պարարտացնում հողը և ինչպես է գործադրվում անասունների աղբը. վիր մասն է գնում արտ, բանջարանոցը և վոր մասն է գործ ածվում իբրև վառելիք։

16. Զգացվում է անասունների աղբի պակասություն վարելահողի համար և պակասության դեպքում ինչ միջոցներ կան դիմում։

17. Արվեստական պարարտացման այլ միջոցներ չեն գործադրվում, արդյոք, և յեթե այո, ինչ հետևանքներ են ստացվում։

18. Յանում են, արդյոք, արտերում յերեքնուկ և այլ թիթեռնածաղիկ բույսեր։

19. Տնտեսության մեջ խոտացանություն մուծված է, թե վոչ։

20. Ինչ փոփոխություններ են տեղի ունեցել հողի ոգտագործման, անասունների քանակի և գյուղատնտեսական ինվենտարի մեջ պատերազմի, ազգային կառավարության և Խորհրդային իշխանության ժամանակ։

21. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել հողի վոռոգման մեջ նույն ժամանակաշրջանում.

22. Ինչ է այդ փոփոխության պատճառը տնտեսության տիրոջ կարծիքով։

23. Այս կամ այն տեսակի մշակովի բույսերից քանի՞ դեսյատին է ցանված արտերում։

24. Հացահատիկներից քանի խուրձ է ստացվել և խրձի մոտավոր քաշը։

25. Ի՞նչքան է յեղել ընդհանուր բերքը՝ հացահատիկների, արմատիքների, տեխնիկական բույսերի, խոտի, բանջարեղենիս, մրգեղենի ու խաղողի։

26. Վորոշեցեք բոլոր մշակովի բույսերի ընդհանուր բերքի արժեքը։

27. Քանի՞ թիթեռնի կա ավյալ տնտեսության մեջ։

28. Տվյալ տնտեսության մեջ շերամապահության գոյություն ունի՞, թե վոչ և յեթե այո, քանի գրամ սերմ է պահում և վիրքան բոժոժ է ստանում մի գրամ սերմից։ Ո՞ւր է վաճառվում բոժոժը։

29. Քանի մեղրի փեթակ ունի ավյալ տնտեսությունը և վիրքան մեղր է ստանում մի փեթակից։ Ի՞նչ տեսակի փեթակներ են։ Մեղուները հիվանդ չեն փտախտով։

30. Տնտեսությունը բամբակի մշակություն ունի՞, թե վոչ, ինչ արդյունք է ունեցել վերջին տարիների ընթացքում և վիրքան վարկ է ստացել։

31. Տնտեսությունը մշակում է ծխախոտ և ինչ արդյունք է ստանում։

32. Խաղողից գինի՝ ինքն է պատրաստում, թե խաղողը վաճառում է ուրիշին։ Այդու համար վարկ ստացել է և վիրքան։ Պատրաստում է քացախ, դոշաբ։

33. Միերքների ինչ մասն է թողնում սեփական ոգտագործման համար և ինչ մասն է ծախսվում տնտեսության բարելավման համար։

34. Տնտեսությունն ոգտվում է շրջանային գյուղատնտեսի խորհուրդներից և ինչ հետևանքների յե հանգել։

35. Տվյալ շրջանում անասնաբուժական կայան կա, թե վոչ։

36. Շրջանն ունի՞ բեղմնավորող անասունների կայան։

37. Ինչ հեռավորության ունի ավյալ տնտեսությունը խորհրդային տնտեսությունից և վերջինիս հարևանությունը բարերար ազդեցություն ունեցել է տնտեսության վրա, թե վոչ։

38. Շրջանի գյուղատնտեսի կողմից դասախոսություններ կազմակերպվում են գյուղատնտեսական զանազան խնդիրների շուրջը և, յեթե կազմակերպվում են, վիրքան հաճախ։

39. Կապված է ավյալ տնտեսությունը կոոպերացիայի հետ (սպառողական, գյուղատնտեսական և այլն)։

40. Ոգտվում է ավյալ տնտեսությունը գյուղատնտեսական մեքենաներից (տրակտոր, կալսող և հնձող մեքենա և այլն)։

41. Տնտեսության տերը կարդացել է գյուղատնտեսության վերաբերյալ վորևե գիրք և բաժանորդագրված է «Մանկալ» թերթին։

42. Տնտեսության տերը տարին քանի՞ անգամ է գալիս Յերևան, իջնում է արդյոք Սաքո Համբարձումյանի անվան Գյուղացու Տանը և այնտեղ ոգտվում է հարկ յեղած իրավաբանական և գյուղատնտեսական խորհուրդներից։

43. Տնտեսության տերը կամ նրա ընտանիքի անդամներից վորևե մեկը ուղարկված յեղել են բժշկվելու Հայաստանի կամ այլ Խորհրդային յերկրի սանատորիաները։

44. Գյուղացու Տանն ապրող կամ սանատորիայում բժշկվող գյուղացին, տուն վերադառնալով, յուր տան կարգ ու սարքի և նիստ ու կացի մեջ փոփոխություն մտցրել է թե վոչ (անկողնու մաքրություն, մարմնի մաքրություն, սենյակի մաքրություն, ընտանիքի յուրաքանչյուր անդամին ճաշին առանձին ափսե և դդալ հատկացնելը, դանակ, պատառաքաղ գործածել, ձեռքերը լվանալ, ատամները մաքուր պահել և այլն)։

45. Նկատում եք արդյոք այն գյուղացիների տնտեսության ձևերի, կենցաղի և աշխարհայացքի մեջ վորոշ փոփոխություն, վորոնք անցել են արտադրության, աշխատանքի մեքենայման ելևէջման լուսավորության։

ՑԱՆԿ

I

	Եջ
Հ. Ս. Խ. Հ.	5
Հ. Խ. Ս. Հանրապետության հողային տարածությունը և նրա բաշխումն ըստ տեսակների	7
Հայաստանի ցանքերի տարածությունը	10
Հողաշինարարություն	12
Ոռոգային փոքրամասնությունների բավարարումը հողերով	14
Գաղթականության ապահովումը հողերով	14
Հողոգտագործությունը Հայաստանում	15
Կենդանի և մեռյալ ինվենտար	16
Հողոգտագործության չեզոնակները և վերջիններիս ձևերը	19
Ագրոկազմ և ագրոգրականություն	23
Հայաստանի խորհրդային անտեսությունները	25
Հայաստանի հողերի արվեստական վոռոգում	27

II ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դիտողություն	32
Հացաբույսեր	34
Տեխնիկական բույսեր բամբակ	38
Վուշ կամ կտավատ	43
Ծխախոտ	45
Դաշտային այլ մշակույթներ	47
Բանջարաբուծություն և բոստան	47
Յանովի խոտ	48
Այգեգործություն. Խաղող և խաղողի մշակույթ	50
Հայաստանի արոտավայրերը	53
Անասնապահություն	55
Մեղվաբուծություն	58
Շերամապահություն	59
Թռնաբուծություն	60
Ձկնորսություն	62
Հայաստանի անտառները	63
Անտառային անտեսություն և անտառաշինարարություն	66
Անտառաբուծություն	67
Վարարդություն.	68
այ աստանի գյուղատնտեսության արդի վիճակը	71

III ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի լինելային արդյունագործությունը. պղինձ	74
Պեմզա կամ չեչաքար	76
Հայաստանի այլ հանքային հարստություններ	77
Հայաստանի մշակոզական արդյունագործությունը	80
Գինու, սպիրտի, կոնյակի արդյունագործությունը	80
Կաշվի արդյունագործությունը	83
Համբակազման արդյունագործությունը	85
Հայաստանի անկվածային (տեքստիլ) արդյունագործությունը	87
Գոլիդրաի արդյունագործությունը	89
Մեքենագործություն	91
Ջափ ու կշիռների պալատ	91
Հայաստանի քիմիական արդյունագործությունը	92
Ջեթ-ոճուռի արդյունագործություն	94
Անասնարդյունագործություն	97
Մանգարար նյութերի մշակություն	97
Ծխախոտի վերամշակումը	100
Հայաստանի արդյունագործության ընդհանուր գրությունը	101
Էլեկտրիֆիկացիա	105
Հայաստանի արդյունագործության հեռանկարները	108
Տնայնագործությունը Հայաստանում	111
Հայաստանի կոոպերացիա. Սպառողական կոոպերացիա	116
Գյուղատնտեսական կոոպերացիա	119
Հայաստանի հաղորդակցության ճանապարհները	124
Կապը Հայաստանում	128
Հայաստանի առևտուրը	132
Ժողովրդական լուսավորություն	134
Ժողովրդական առողջապահություն	140

ՀԱՎԵԼՈՒՄ

Նոր Էջմիածնա. պատմված Վ. Թոթովենցի	143
«Դեպի կոմունա» տպավորություններ Խաղաղության կոմունայից պատմված Վ. Թոթովենցի	147
Հայաստանի կամ ավյալ գավառի վերաբերյալ հարցեր՝ աշակերտների ինքնուրույն աշխատանքների համար	151
Ընդհանուր դիտելիքներ գյուղացու տնտեսության մասին (անկետա)	154
Տնտեսության կահացուցակը և տեխնիկան	155

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ		Տող	
11	ցանսերի	ցանքսերի	13 ներքև
21	քառադաշտայն	քառադաշտյան	6 »
27	մեքենայացնացժան	մեքենայացժան	1 վերև
30	Աբզդյանի	Աբազդյանի	4 ներքև
34	դեղին չարդ	դեղին զարդ	2 »
37	հողաբույսերի	հացաբույսերի	9 վերև
38	Վոսկրեսենկա	Վոսկրեսենովկա	3 »
39	անվածալին	անկվածալին	22 »
45	արևլքից	արևելքից	16 »
51	Սպրսա	Ոպրսա	7 ներքև
52	ոիղիում	ոիղիում	3 վերև
56	բոլոր	խոշոր	16 »
61	ավազից՝ արծաթի հատիկ-ներից, վոսկի փոշ	ավազից՝ արծաթի, հատիկներից վոսկի փոշ	16 ներքև
62, 63	Լազդա	Լազդա	13 »
64	չի անցնում	չի հալչում	11 վերև
76	հոգամյա	հնգամյա	13 »
79	պուզզոլան	պուցցոլան	9 »
92	հիքն	հիմքն	17 »
115	Լուսժողկամսոը	Լուսժողկոմսոը	10 ներքև
137	Գիտական և արվեստական հիմնարկների ցանցը	Գիտության և արվեստի հիմնարկների ցանցը	22 »

85 եջի վրա նկար 6-ի տակ դնտեղված գրությունը վերաբերվում է 86 եջի վրա նկար 7-ին և հակառակը՝ այս վերջինի տակ գրությունը վերաբերվում է նկար 6-ին։

NL0193951
<< Цардын дүнгээс >>

29564